






ԷԶՄԻԱՇԻՆ





ԷԶՄԻԱՇԻՆ





Լ Ձ
ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿԵԿՅՈՒՄԲԵՐ

1979



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Քույր Եկեղեցիներ



**ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՌՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ
ՊԱՊԻ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՄԻՋԵՎ**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ**

Մալո Աթոռ և Էջմիածին

Այն պահին, երբ պատրաստվում եմ ուխտագնացության մեկնել դեպի Եփեսոս, որտեղ մեր Տերը հռչակվեց ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ, իսկ կոյս Մարիամը՝ Աստվածամայր, ցանկանում եմ Ձերդ Սրբությանը հղել իմ սրտագին ողջույնները: Ապավինելով Ձեր աղոթքներին, հայտնում եմ Ձեզ իմ եղբայրական հարգալից զգացումներն ի Քրիստոս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ

Վատիկան,

80 նոյեմբերի 1979 թ.





ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

Վատիկան

Հոգեկան խոր մխիթարությամբ և շնորհակալությամբ ստացանք Ձեր հեռագիրը՝ Եփեսոս Ձեր ուխտագնացության առիթով: Ձերդ Սրբության Եփեսոս և Կ. Պոլիս այցելությունը խոր հուզում կպատճառե Մեզի, մեր եկեղեցիին, և կխորհինք թե նաև համայն քրիստոնեության, որովհետև մեր փոթորկահույզ օրերուն այժմեական խորհուրդ մը կարարունակե իր մեջ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի անձին մեջ ամբողջ աշխարհի դավանումը իբրև Աստված և իբրև մարդ:


Ձեր այս ուխտագնացության համար բոլորս երախտապարտ ենք Ձեզի: Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցւոյ, հաճեցեք ընդունիլ Մեր սերը, Մեր հարգանքը և ամենաբարի մաղթանքները Ձեր սուրբ առաքելության փալլուն հաջողություններու համար:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 դեկտեմբերի 1979 թ.





**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ՝
ՈՒՂՂՎԱԾ ՀԱԼԵՊԻ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆԸ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

ՀԱՅԿԱԶՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆ

Հաղեպ

Հայրական սիրով և ջերմ գնահատանքով կողջունենք վաթսուն տարի-
ներու սքանչելի վաստակը Ձեր կրթական հաստատության:

Սուրբ Էջմիածնեն կրերենք Աստուծո օրհնությունը ազգանվեր հիմնա-
դիրներուն և առատաձեռն նվիրատուներուն, բարեջան տնօրենության, հո-
գաբարձության ու դասախոսական կազմին, ինչպես և վարժարանի ջանա-
սեր աշակերտության:

Թող Տերը անասան ու լուսառատ պահպանե Հայկազյան վարժարանը,
որ միշտ շարունակե բաշխել Ձեր նոր սերունդներուն՝ Աստուծո խոսքը, գի-
տության լույսը, մեր մայրենի լեզվի գանձերն ու հայ հոգիին ջերմությունը:

«Երկնային շնորհք, լոյս և խաղաղություն եղիցին ընդ ձեզ. ամեն»:

ՎԱԶԳԵՆ Ա.

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Սուրբ Էջմիածին,
29 նոյեմբեր 1979 թ.



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ «ԽՈՍԲԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԻ
ԿԱՄԵՑՈՂՈՒԹՅԱՆ», ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1979 թվականի դեկտեմբերի 9-ին և ձայնասփռված Երևանի
ռադիոյից)

Հայ առաքելական եկեղեցին և համայն քրիստոնյա աշխարհը հուսաց-
յալ սրտերով շուտով պիտի ողջունեն մեծ ավետիսը մեր Փրկչի Հիսուս
Քրիստոսի ծննդյան և պատգամը երկնքի՝ «չերկիր խաղաղություն, ի մարդիկ
հաճություն»:

Մեր օրերի փոթորկահույզ աշխարհում, հետզհետե ավելի այժմեական
ու հրամայական է դառնում երկրի վրա կենսագործումը երկնային այս
պատգամի: Մեծ ողբերգություն է համայն մարդկության և նրա ճակատա-
գրի համար հաստատել, թե, ավա՞ղ, դեռևս հեռու, շատ հեռու է այդ երջա-
նիկ օրվա արշալույսը: Եվ ավելին, երբեմն դժբախտ վկաներն ենք լինում
նորանոր ուղղամուլ միջոցառումների և նորանոր սպառազինման ձեռնար-
կումների, որոնք է՛լ ավելի ծանրակշիռ լարվածություն են ստեղծում միջազ-
գային կյանքում, է՛լ ավելի մեծանում է սպառնալիքը համաշխարհային նոր
հրդեհումների:

Շատ տխուր է, այո՛, հաստատել, թե այսպիսի սպառնալիք է հանդի-
սանում վերջերս ծրագրված միջուկային մահաափյուռ նոր զենքերի տեղա-
դրումը Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում:

Այնպիսի մի պահի, երբ աշխարհի բոլոր մարդիկ տենչում են ազատվել պատերազմի մղձավանջից ու ապրել խաղաղ և անվտանգ, այնպիսի մի պահի, երբ բոլոր քրիստոնյա եկեղեցիներն ու տարբեր կրոնական կազմակերպությունները սրտեռանդն աղոթում են ու գործում վասն խաղաղության համայն աշխարհի, այնպիսի մի պահի, երբ մարդկության խիղճը պահանջում է բոլոր պետություններից՝ դադարեցնել սպառազինությունների մրցավազքը և հասնել ընդհանուր զինաթափման իրականացման, և վերջապես այնպիսի մի պահի, երբ Միացյալ ազգերի կազմակերպությունը գերմարդկային ճիգեր է ի գործ դնում, որպեսզի պետությունների միջև ծագած բոլոր տեսակի անհասկացողություններն ու վեճերը լուծվեն բանակցությունների խաղաղ ու արդար ճանապարհով, համաձայն միջազգային իրավունքով նվիրագործված սկզբունքների, ահավասիկ այնպիսի մի պատմական պահի, մարդիկ և ժողովուրդները մեր աշխարհի, բնականորեն խոր սարսուռ են ապրում՝ լսելով, որ պատրաստություններ են կատարվում ահավոր մոր զենքեր տեղաբաշխելու Արևմտյան Եվրոպայում:

Կարծում ենք, թե հնարավոր չէ հաշտվել մեզնից ծրագրերի գործադրման հետ: Կարծում ենք, մանավանդ, որ առաջին հերթին մենք՝ քրիստոնյա եկեղեցիներս՝ մեր աղերսը, մեր խոսքը լսելի պետք է դարձնենք ամբողջ աշխարհին և հատկապես պետությանց պատասխանատու ղեկավարներին, որպեսզի ետ կանգնեն աշխարհաքանդ մոր սպառազինումներից և գործեն միջազգային լարվածության թուլացման ի խնդիր, որպեսզի ի վերջո բացվի ճանապարհը ընդհանուր զինաթափման:

Մենք տարակույս չունենք, թե այս հրամայականների կենսագործումը սրբազան իղձն է հանդիսանում աշխարհի բոլոր ժողովուրդների անխտիր: Հետևաբար, բոլոր բարի կամքի տեր մարդիկ, բոլոր եկեղեցիներն ու հավատացյալները բոլոր երկրներից պետք է մի սրբազան դաշինք կնքեն, պաշտպանելու համար պետությանց խաղաղ գոյակցության փրկարար գաղափարը, պաշտպանելու համար անվտանգ ապրելու աստվածատուր իրավունքը մարդկանց ու ժողովուրդների:

Մենք՝ Հայրապետը հայ առաքելական եկեղեցու, Մեր սույն խոսքն ու կոչն ենք ուղղում մեր ժողովրդի զավակներին, մեր եկեղեցու նվիրապետական Աթոռներին ու հայ հոգևորականությանը, մեր քույր եկեղեցիներին և պետությանց ղեկավարներին, թելադրված մեր Տիրոջ Քրիստոսի Ավետարանի պատգամներից և մեր եկեղեցու ու ժողովրդի երկար դարերի տառապալից փորձառությունից և մանավանդ 1915-ի ցեղասպանության ու երկրորդ համաշխարհային պատերազմի ահավոր ողբերգություններից:

Հայ եկեղեցին և համայն հայ ժողովուրդը որ ի Հայաստան և որ ի ափսոսա աշխարհի, իրենց ճակատագիրը, իրենց ներկա կյանքի անվտանգությունը և ապագա արդար երազանքների իրականացումը կապել են աշխարհի խաղաղ գոյավիճակի հետ, «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» քրիստոնեական իդեալի կենսագործման հետ:

Հայ եկեղեցու և ժողովրդի երկհազարամյա հավատամքն ու երազանքն է եղել տեսիլքը մեծ սաղմոսերգուի՝

«Ողորմությունը և ճշմարտությունը պիտի գրկախառնվեն, արդարությունը և խաղաղությունը պիտի համբուրվեն».





**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ՝
ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ**

Ս/թ. նոյեմբերի 26—28-ը Մայր Աթոռում գումարվեց Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովի նստաշրջանը, որին մասնակցում էին ՍՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, ԳՂՀ-ի, ԳՖՀ-ի, Ռումինիայի, Բուլղարիայի, Կուբայի, Հնդկաստանի, Շրի Լանկայի և այլ երկրների եկեղեցիների շուրջ 30 ներկայացուցիչներ։

Նստաշրջանին մասնակցում էին Պրագայի Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի ընդհանուր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին և փոխնախագահ, դոկտ., պրոֆ. Գերհարդ Բասսարակը։

Մայր Աթոռը ներկայացնում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Հովհաննես Թովուզյանը։ Որպես դիտորդներ ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրության անունից տ. Անանիա վրդ. Արաքաջյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար տիար Պարզև Շահբազյանը։

Նոյեմբերի 25-ին, կիրակի օրը, երեկոյան, հյուրերը ժամանում են Մայր Աթոռ։

Հաջորդ օրը, առավոտյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում տեղի է ունենում էկումենիկ ոգով մի աղոթք, որից հետո Վեհաբանում կա-

տարվում է Մերձավոր Արևելքի հանձնաժողովի նստաշրջանի բացման արարողությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս ողջույնի և օրհնության հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

«Փառք ի բարձունք Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Շուտով մենք բոլորս, և բոլոր քրիստոնյա եկեղեցիները աշխարհի, պիտի ողջունենք երկնքի այս մեծ պատգամը:

Աստուծո այս պատգամը ոչ միայն մեր, քրիստոնյաներիս համար, այլ համայն մարդկության համար իջավ երկնքից:

Քրիստոսի անունով գործող բոլոր եկեղեցիները, իրենց կյանքի առաջնորդող լույս են ընդունել այս պատգամը:

Մենք հավատում ենք, թե քրիստոնեությունը խաղաղության և սիրո մի առաքելություն է աշխարհի վրա, առաքելություն, որ այժմեական է մանավանդ մեր օրերին: Եկեղեցիների էկումենիկ շարժումը ևս, կարծում ենք նկատում է այս առաքելությունը իբրև իր առաջնահերթ պարտականություններից մեկը:

Այս ոգով է, որ շատ տարիներ առաջ կազմակերպվեց Պրագայում Քրիստոնեական եկեղեցիների խաղաղության շարժումը, որն իր գործունեությունը, ահապասիկ տառակա տարիներից ի վեր ծավալում է պտղաբեր արդյունքներով: Դուք, սիրելի եղբայրներ և քարեկամներ, այդ շարժման անունով հավաքված եք այստեղ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մեր անունից ողջունում ենք ձեր հավաքույթը այստեղ, սուրբ Էջմիածնի կամարների ներքո: Մաղթում ենք ձեր աշխատանքներին լիակատար հաջողություն և հավատում ենք, թե ձեր հանձնաժողովի աշխատանքները պիտի նպաստեն այն հարցերի պարզաբանմանը և լուծմանը, որոնք գտնվում են ձեր օրակարգի վրա:

Հայտնի է Մեզ, թե ձեր օրակարգի գլխավոր հարցն է՝ Մերձավոր Արևելքի այսօրվա վիճակի քննարկումը:

Դժբախտաբար, տասնյակ տարիներից ի վեր, աշխարհագրական այս շրջանում, Մերձավոր Արևելքում, տագնապալի և խռովահոգ կացություն է ստեղծված: Եվ ինչպես տարբեր աշխարհագրական շրջաններում, նաև այստեղ, այդ տագնապալի կացությունը հետևանք է անարդարությունների: Այդ, անարդարություն կատարվեց և կատարվում է արաբ ժողովրդի նկատմամբ, և հատկապես Պաղեստինյան դժբախտ ժողովրդի նկատմամբ:

Կարծում եմ, որ մարդկության խիղճը, անհանգիստ վիճակում է նաև այս անարդարության հետևանքով: Մենք այս հարցերին չենք մոռենում, քաղաքական ինչ-որ նպատակներով կամ պատճառներով, այլ քրիստոնեական խղճով, սիրո և խաղաղության ոգով դեպի բոլոր ժողովուրդները աշխարհի: Ահա այս քրիստոնեական խղճմտանքով պահանջում ենք, որ արդարություն լինի պաղեստինյան ժողովրդին: Ինչպես այդ աշխարհագրական շրջանի մյուս ժողովուրդները, այնպես և պաղեստինյան ժողովուրդը, իրավունքը ունի, արդար իրավունքը ունի ինքնորոշումի և իր ինքնություն պետությունը կազմելու:

Եվ, երբ խոսքը վերաբերվում է Մերձավոր Արևելքի հարցերին, Մենք



Վեհապետ Հայրապետյանը, որը նաև է Խաղաղությանը քիստոնցանալը Կոնգրեսի փոխադրված լադուրի

իրեն հայ եկեղեցի և ժողովուրդ, մի բանով ավելի մտահոգված ենք, որովհետև այդ ամբողջ շրջանի մեջ, բոլոր արաբական երկրներում, մեր եկեղեցու և մեր ժողովրդի զավակներն են ապրում, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ արաբական երկրներ գաղթելով, իրենց կյանքը փրկեցին, 1915-ի ցեղասպանության ողբերգությունից հետո: Մենք, իբրև հայ եկեղեցի, հավետ երախտապարտ ենք բոլոր արաբական ժողովուրդներին: Այդ աշխարհագրական ամբողջ շրջանում, ապրում են այսօր ավելի քան կես միլիոն հայ հավատացյալներ, եղբայրացած, իրապես եղբայրացած արաբ ժողովրդի հետ:

Հատկապես ողբերգական ենք մկատում կացությունը մաս Լիբանանի մեջ, որտեղ, ինչպես զիտեք, քաղաքացիական պատերազմ է սկսվել մահմեդական և քրիստոնեական-մարոնիտ համայնքների միջև:

Հայ համայնքը Լիբանանում, չի մասնակցում այդ եղբայրասպան կոիվների և ձգտում է, աշխատում է հաշտության կամուրջ հանդիսանալ երկու հակամարտ համայնքների միջև: Մենք ևս աղոթող ենք, որ խաղաղությունը վերահաստատվի Լիբանանում՝ հաշտությամբ, գործակցությամբ բոլոր լիբանանյան համայնքների՝ մահմեդական և քրիստոնյա:

Եվ թվում է, թե Լիբանանի այս կացության պատճառներից գուցե գլխավորը պաղեստինյան հարցն է: Որով առավել ևս մենք պետք է աշխատենք ու գործենք հանում պաղեստինյան ժողովրդի իրավունքների վերահաստատման, արդարության վերահաստատման, որպեսզի ամբողջ այս Մերձավոր Արևելքի շրջանում խաղաղության դռները բացվեն, բոլորի համար, ներառյալ սուրբգրական երկիր՝ Լիբանանը:

Ահա այս մտածումներով և այս մտահոգություններով ես ներկա եմ այստեղ, ձեր այս ժողովի բացմանը:

Բերում եմ ձեզ Իմ գնահատանքը, սերը և Աստուծո օրհնությունը:

Հաջողություն ձեզ:

Ի մարդիկ հանություն և խաղաղություն համայն աշխարհին, այժմ և հավիտյան. ամեն:

Ս. Էջմիածին,

26 օգոստոս 1979 թ.

Ապա պատասխան ճառով հանդես է գալիս Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի ընդհանուր քարտուղար դոկտ. Լյուքսմիր Միրե-ժովսկին: Նա շնորհակալություն է հայտնում Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Նրա բարեհաճ վերաբերմունքի համար, որով հնարավորություն է տվել, որ սույն հանձնաժողովի աշխատանքները տեղի ունենան ս. Էջմիածնում, և ապա ներկա ժողովականներին համառոտակի ծանոթացնում է հայ եկեղեցու պատմությանը, նրա՝ ներկա վիճակին՝ արտահայտելով մասն աչն մեծ հարգանքի մասին, որ այսօր Ամենայն Հայոց Հայրապետը վայելում է համայն աշխարհում, բոլոր խաղաղասեր մարդկանց և կազմակերպությունների մոտ:

Այնուհետև Նորին Սրբությունը ժողովի աշխատանքներին հաջողություն մաղթելով՝ մեկնում է դահլիճից:

Օրակարգի հաստատումից հետո կազմվում է խմբագրական մարմին, որի նախագահ է ընտրվում տիար Հովհաննես Թովուզյանը:

Այնուհետև Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Պրագայի ներ-



Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Լյուդմիր Միրեժովսկին շնորհակալություն է հայտնում Ամենայն Հայոց Ամենայն Հայրապետի ողջունի խոսքի համար

կայացուցիչ Զիմմերմանը զեկուցում է Մերձավոր Արևելքի հանձնաժողովի անցնող մեկ տարվա գործունեության մասին:

Ընդմիջումից հետո, կեսօրվա ժամը 15.30-ին, ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս տիար Հովհաննես Թոփուզյանը՝ «Մերձավոր Արևելքը, նրա պորթլեմներն ու հույսերը» թեմայով: Նա հանգամանորեն խոսում է այն հիմնական պատճառների ու նպատակների մասին, որոնք առիթ հանդիսացան Մերձավոր Արևելքի հողի շիկացմանը: Զեկուցողը ապա պատշաճ ձևով ներկայացնում է Մերձավոր Արևելքի հայության խաղաղասիրական հույսերը՝ շեշտելով, որ անհրաժեշտ է խաղաղության և արդարության վերահաստատումը այս շրջանի բոլոր ժողովուրդների համար:

Այնուհետև խոսք են առնում տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ, և տեղի է ունենում մտքերի լայն փոխանակություն զեկուցման մեջ արժարժված հարցերի շուրջ: Նրանք պատմում են այն դիրքորոշման և ցանկությունների մասին, որ այսօր ունեն իրենց եկեղեցիները Մերձավոր Արևելքի խաղաղությունը պահպանելու գործում:

«Պաղեստինյան ժողովուրդը և նրա ազատության պայքարը» թեմայով ելույթ է ունենում Պաղեստինի ազատագրության կազմակերպության ՍՍՀՄ-ում հավատարմագրված ներկայացուցիչ, դոկտ. Մոհամեդ Աշ-Շաերը, որն իր ելույթի վերջում ասում է. «Ընդհակադրություն ենք հայտնում ձեզ, կրոնական գործիչներիդ, ձեր սկզբունքային և խաղաղասիրական դիրքորոշման համար: Թող աշխարհի վրա հաղթանակեն խաղաղությունն ու ժողովուրդների միջև՝ սերը»:

Երեկոյան, ընթրիքից հետո, ժամը 20-ին, սկսվում է հանձնախմբի երրորդ նիստը, ուր իր զեկույցն է ներկայացնում Արևմտյան Գերմանիայի եկեղեցու ներկայացուցիչ պատուիր Մեհլերը:

Հանձնախումբը իր առաջին օրվա նիստերն ավարտում է երեկոյան ժամը 10-ին:

Հաջորդ օրը, նոյեմբերի 27-ին, երեքշաբթի, առավոտյան, ժողովի մասնակիցները այցելում են Երևան և Ծիծեռնակաբերդում ծաղկեպսակ դնում 1915 թվականի Ապրիլյան եղեռնի զոհերի հուշարձանին:

Այնուհետև հյուրերն այցելում են Մատենադարան, Հայաստանի պատմության թանգարան և այլ տեսարժան վայրեր:

Կեսօրվա ժամը 15.30-ին Մայր Աթոռում վերսկսվում են ժողովի աշխատանքները:

Մերձավոր Արևելքի հանձնախումբը իր երկրորդ օրվա աշխատանքը ավարտում է ուշ գիշերին:

Նոյեմբերի 28-ին, չորեքշաբթի: Այսօր, առավոտյան, ժողովի մասնակիցները այցելում են ս. Գեղարդ պատմական վանք, որից հետո, կեսօրվա ժամը 15.30-ին, ս. Էջմիածնում տեղի է ունենում իրենց վերջին հանդիպումը, որի ընթացքում ընտրվում է Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր Արևելքի հարցերի հանձնախմբի ղեկավարություն՝ հետևյալ կազմով.

1. Հովհաննես Թոփուզյան (Հայկական ՍՍՀ), նախագահ.
2. Պաուլոս Մար Պաուլոս (Հնդկաստան); փոխնախագահ.
3. Պետեր Բրաունշվեյգ (Շվեյցարիա), փոխնախագահ.
4. Երրորդ փոխնախագահի տեղը մնում է թափուր՝ Մերձավոր Արևելքից մի ներկայացուցչի համար.
5. Վուլֆգանգ Մեհլեր (ԳՖՀ), քարտուղար:

Ապա ընդունվում է ժողովի մասնակիցների կողմից կազմված հաղորդագրությունը, որի մեջ նշվում է բոլոր ժողովականների վճռականությունը՝ Մերձավոր Արևելքում իրացած տեսնելու խաղաղության և այնտեղ ապրող ժողովուրդների խաղաղ և համերաշխ կեցության վերահաստատումը՝ ի պաշտպանություն նաև ողջ աշխարհում կայուն և մնայուն խաղաղության ապահովության:

Հաղորդագրության մեջ նշվում է նաև, որ Մերձավոր Արևելքում արդար խաղաղության ի նպաստ աշխատանքները անհրաժեշտորեն պետք է շարունակել տարբեր մակարդակների վրա:

Հաղորդագրության ընդունումից հետո ժողովի բոլոր մասնակիցները կրկին անգամ ընդունվում են Ամենայն Հայոց Հայրապետի կողմից՝ ստանալու Նրա օրհնությունները:

Հանուն բոլոր ժողովականների Հայոց Հայրապետին ուղղյալ խորին շնորհակալության և երախտագիտության արտառույ խոսք է ասում դարձյալ դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին այն ջերմ ընդունելության և հոգևոր այն մթնոլորտի ստեղծման համար, որոնց պայմաններում իր աշխատանքները սկսեց և հաջողությամբ ավարտեց հանձնաժողովը Մայր Աթոռում՝ ի պաշտպանություն Մերձավոր Արևելքում խաղաղության ապահովման:

Դեկտեմբերի 28-ին, չորեքշաբթի օրը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը «Անի» հյուրանոցում ողջերթի ճաշկերույթ տվեց ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի:

Նույն օրը, գիշերվա ժամը 00.30-ին, Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի մասնակիցները հրաժեշտ առնելով Մայր Աթոռից, Հայոց Հայրապետից և Սուրբ Երեմիայի Հայաստանից՝ մեկնում են լավագույն տպավորություններով:

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքները, որ տեղի ունեցան ա/թ. նոյեմբերի 26—28 օրերին Մայր Աթոռ ա. Էջմիածնում, մի նոր կարևոր քայլ հանդիսացան Մերձավոր Արևելքում արդարության և խաղաղության պահպանման համար քրիստոնյաների մասնակցության գործում:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՐԱՋՅԱՆ





ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարեհաճ կարգադրությամբ, ա/թ. հոկտեմբերի 28-ին, Երևանի ա. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի, կատարվում է քահանայական ձեռնադրություն և օծում:

Այդ օրը քահանայական ձեռնադրություն են ստանում Մայր Աթոռի միաբան Ստեփանոս արկ. Չազալյանը և Երևանի ա. Սարգիս եկեղեցու սարկավագներ Պողոս Զուլֆայանն ու Իշխան Երանոսյանը:

Սուրբ պատարագի ընթացքում, «Ողջոյն»-ից առաջ, պատարագիչ սրբազանը կատարում է երեք նորընծաների ձեռնադրությունն ու օծումը:

Ձեռնադրության ավարտին սրբազանը շնորհավորում է նորընծաներին և որպես հոգևոր ծնող տալիս հայրական իր օրհնություններն ու հորդորները:

Նորընծաներից Պողոս քհն. Զուլֆայանը (ավագանի անունը Պողոս) ծնվել է 1924 թվականին Սիրիայի Հոմս քաղաքում, իսկ Հակոբ քհն. Երանոսյանը (ավագանի անունը Իշխան) ծնվել է 1952 թ. Վարդենիսում (Հայաստան), քահանայի ընտանիքում:

Երկու քահանա հայրերը իրենց քառասունքը Երևանի ա. Սարգիս եկեղեցում անց-

կացնելուց հետո հոգևոր ծառայության կոչվեցին Արարատյան թեմում:

Նույն օրը, երեկոյան, ա. Էջմիածնի Մայր տաճարում կատարվում է տ. Ստեփանոս կուսակրոն քահանայի վեղարի տվչությունը՝ ձեռամբ տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

Տ. Ստեփանոս արքեպի քահանայական կոչումը կատարվել էր Էջմիածնում երկու օր առաջ՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սամթուրյանի:

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱԲԵՂԱ ՉԱԳԱՆՅԱՆ

Տ. Ստեփանոս արքեպ Չազալյանը ծնվել է 1946 թվականի հոկտեմբերի 30-ին, Հունաստանի Պիրեա քաղաքում:

1951 թվականին ընտանիքով գաղթում են Արգենտինա, և նա իր նախնական կրթությունը ստանում է Բուենոս-Այրեսի տեղական վարժարանում: Այսպա 1954 թ. ընտանիքով կրկին վերադառնում են Հունաստան, և 1954—60 թթ. նա սովորում է Քոքինիայի «Ազգային», «Զավարյան» և «Գալթակյան» վարժարաններում:

Նախակրթարանը գերազանց ավարտելուց հետո, ուսումը շարունակում է Նիկոգիայի (Վիպրոս) Մեղգոնյան կրթական հաստատությունում, որը 1966 թվականին




ավարտելուց հետո ընդունվում է Բեյրութի «Հայկազյան» քոլեջ, իսկ 1968—70 թվականներին սովորում Բեյրութի Ամերիկյան համալսարանում, որն ավարտում է փիլիսոփայության Bachelor of Arts-ի դիպլոմով:

Հոգևոր կոչում զգալով իր մեջ, 1977 թ. մարտին գալիս է Մայր Աթոռ, հետևում է հոգևոր ճեմարանի կրոնագիտական և հայագիտական որոշ դասընթացներին և միաժամանակ անգլերեն լեզու դասավանդում հոգևոր ճեմարանում:

Նույն թվականի դեկտեմբերին ձեռնադրվում է անրկապագ՝ ձեռամբ տ. Հուսիկ արքեպ. Սանթրոքյանի:

Նորապսակ տ. Ստեփանոս աբեղան իր քառասունքի օրերը անցկացրեց Մայր Աթոռում:

Նորընծա հայր սուրբը գտնվում է իր ուժերի հասունության և ծաղկման շրջանում և պատրաստ է անսակարգ նվիրումով և բարեխղճորեն ծառայել Մայր Աթոռին, իր ազգին ու եկեղեցուն՝ Վեհափառ Հայրապետի հովանու ներքո:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մի՛ երկնչիր, միայն հաւատա, եւ կեցցե՛» (Ղուկ. Ը 50) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 5-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Երևանի Արամ Խաչատրյանի անվան հայհամերգի մեծ դահլիճում, Վեհափառ Հայրապետը ներկա է լինում հայ ժամանակակից բանաստեղծ և թարգմանիչ Գ. Էմինի ծննդյան 60-ամյա հոբելյանին նվիրված հանդիսութեանը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը, տ. Անանիա վրդ. Արաքսյանն ու տ. Կոմիտաս արքեպ. Հովնանյանը:

Նոյեմբերի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պա-


տարագ է մատուցում տ. Խաչատուր քհն. Ֆրեմկյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 13-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում տ. Պսակ արքեպ. Թումայանը (Անգլիայից) և տ. Շնորհք վրդ. Գասպարյանը (ԱՄՆ-ից):

Նոյեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ղեկացքում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը ներկայացնում է «Նիկիո Ա տիեզերական ժողովը և Արիոսականությունը» թեման:

Վերջում հայր սուրբը պատասխանում է միաբանների տված հարցերին:



Նոյեմբերի 17-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանում տեղի է ունենում դասախոսություն, որի ընթացքում Մատենադարանի ավագ գիտաշխատող, բժշկական գիտությունների թեկնածու Ստեփան Վարդանյանը ներկայացնում է «Հայ հին բժշկագիտությունը և նրա դերը արդի կյանքում» թեման:

Վերջում հարգելի դասախոսը հանգամանորեն պատասխանում է ուսանողների տրված հարցերին:

Նոյեմբերի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, սուրբ պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եմոտ խորհուրդի ի նուսա, թե ո՞ր արդեօք մեծ իցէ ի նոցանէ» (Լուկ. Թ 46) բնաբանով:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ տ. Իսահակ Ժ. վրդ. Ղազարյանը:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը ներկայացնում է «Արիոսականության հարուցած ճգնաժամը եկեղեցու ծոցում՝ Նիկիոյ Ա տիեզերական ժողովից հետո և այդ առթիվ ստեղծված աստվածաբանական գրականությունը» թեման:

Վերջում տեղի հայրը պատասխանում է միաբանների հարցերին:

Նոյեմբերի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում հանդիսավոր ա. պատարագ է մատուցում տ. Հուսիկ արքեպ. Սանթրոքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի լոնեցին պատերազմումը, դադարեցին լարձակմունք թշնամեաց, տնկեցի սեր և արդարություն ի յերկրի» բնաբանով:

Հավարտ ա. պատարագի, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 59-րդ տարեդարձի առթիվ, Վեհափառ Հայրապետ

տի նախագահությամբ կատարվում է «Հանրապետական մայրանք»-ի արարողություն:

Նոյեմբերի 29-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական երկու հավաքույթ:

Առաջին հավաքույթի ընթացքում բանասիրական գիտությունների թեկնածու Հայկ Մելքոնյանը ներկայացնում է «Ադիսաբենը և Հայաստանը» թեման:

Ընթերցից հետո, երկրորդ հավաքույթին, տ. Անանիա վրդ. Արաբաջյանը ներկայացնում է «Հայ եկեղեցու ազգային-քաղաքական դիմագիծը» թեման:

Դեկտեմբերի 1-ին, շաբաթ.—Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ա. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղդասարը:

Դեկտեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ա. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Իսահակ Ժ. վրդ. Ղազարյանը և «Հայր Մեր»-ից առաջ քարոզում «Հոգին է կենդանաբար, մարմին ինչ ոչ օգնէ» (Հովհ. Զ 64) բնաբանով:

Դեկտեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Արա սրկ. Ծլուկյանը ներկայացնում է «Հոգու անմահության գաղափարը Պղատոնի փիլիսոփայության մեջ» թեման:

Դեկտեմբերի 6-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբան, Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ գերշ. տ. Սիոն արքեպ. Մանուկյանը մեկնում է Միացյալ Նահանգներ՝ Ամանորի և ա. Ծննդյան տոնն

րին մասնակցելու առթիվ՝ իր հետ տանելով Վեհափառ Հայրապետի օրհնությունները տեղի հայ հավատացյալներին:

• •

Դեկտեմբերի 9-ին, կիրակի.—Յդուքին
ս. Աստուածածնի յԱննայէ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում Մայր Աթոռի նորընծա միաբան տ. Ստեփանոս արք. Չագայանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի՛նչ օգտիցի մարդ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իր տուժեսցի» (Մատթ. ԺԶ 26) բնաբանով:

«Տեր ողորմեա»-ից առաջ տ. Արսեն եպս. Բերբերյանը եկեղեցու բեմից կարդում է: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի «Խաղաղության և բարիկամեցողության» կոչը՝ ուղղված աշխարհի բոլոր պետությունների դեկլարաներին ու եկեղեցիների պետերին (Խաղաղության կոչը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 6):

• •

Դեկտեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը ներկայացնում է «Ի՛նչ ենք հասկանում քաղքենի և քաղքենիությունն ասելով» թեման:

• •

Դեկտեմբերի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Բազում մասամբ և բազում օրհնակօք կանխա խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր» (Եբր. Ա 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

• •

Դեկտեմբերի 17-ին, երկուշաբթի.—Այսօր, կեսօրից հետո, իր պաշտոնատեղին է մեկնում Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ տ. Իսահակ Ծ. վրդ. Ղազարյանը, որը շուրջ մեկ ամիս գտնվում էր Մայր Աթոռում:

• •

Դեկտեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

• •

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իր՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեսցուցանէ զանձն՝ բարձրացցի» (Ղուկ. ԺԸ 14) բնաբանով:

Ս. պատարագի դարաց դասի երգեցողությունը կատարում էր՝ Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռում գտնվող Լեւհնականի ս. Աստվածածին եկեղեցու քառամայն երկսեռ երգչախումբը՝ ղեկավարությամբ նույն եկեղեցու ծխակատար քահանա տ. Արամ ավագ քին. Բոյաջյանի:

Ս. պատարագից հետո երգչախմբի անդամները Վեհարանում ընդունվում են Վեհափառ Հայրապետի կողմից և աջահամբույրով ստանում Նրա հայրական օրհնություններն ու հորդորները:

Ժամը 14.30-ին, ի պատիվ Լեւհնականի ս. Աստվածածին եկեղեցու երգչախմբի, վանքի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ:

Ծաշկերույթին հրավիրված էր նաև մայր հայրենիքում գտնվող ֆրանսահայ բազմապատասկ երգահան և խմբավար տիար Արա Պարթևյանը՝ իր ազնվափայլ տիկնոջ հետ:

Ծաշկերույթի ընթացքում նախ խոսք է առնում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթրույանը, որն իր ուրախությունն ու գոհունակությունն է հայտնում օրվա գեղեցիկ առիթի համար:

Այնուհետև հայրական Իր օրհնության ու գնահատանքի խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը և Ծիրակի թեմին, նրա բարեջան առաջնորդին ու երգչախմբի անդամներին մաղթում նորանոր հաջողություններ՝ նրանց Աստվածահաճո գործի ճանապարհին:

Ծաշկերույթն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր» և «Հայրապետական մաղթանք» սրտառույշ երգերով:

*
* *

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Բուենոս Այրեսի Ազգային Ասլանյան վարժարանի շրջանավարտները:

*
* *

Դեկտեմբերի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս.

պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Բուենոս Այրեսի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության «Մարի Մանուկյան» ազգային վարժարանի շրջանավարտները:



ԱՍՏՎԱԾԱԾՆՁԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

40. ՄԱՂԱՔԻԱ

Վերջինը տասներկու մարգարեներու: Ոչ մեկ ծանոթություն ունիմք իր մասին, ոչ իր անունով ծանոթ գիրքեն և ոչ ալ՝ ուրիշ աղբյուրներէ: Մինչև իսկ այս անունով մարգարեի մը գոյությունը կասկածելի կը թվի, քանի որ Յոթանասնից և հետևաբար մեր թարգմանության մեջ կպակսի նաև անունը մարգարեին՝ իր գրքին սկիզբը, ինչպես սովորաբար գրված է մյուս մարգարեական գիրքերուն սկիզբը: Այս գիրքը կակսի այսպես. «Պատգամ Տիրոջ խոսքին՝ Իսրայելի վրա՝ ԻՐ ՀՐԵԾՏԱԿԻՆ ձեռքով»: Գլխագրյալ կրկնակ քառերու համապատասխան քառը Եբրայեցերեն բնագրին մեջ «Մալաքի» է, որ արդարև կնշանակէ «պատգամավոր»: Քանի որ հեղինակի մասին տեղեկություն կպակսի գեթ ծանոթանա՞ք գրքի պարունակության, ուր գրեթե մեր ժամանակներու հատուկ սխալ մտայնություններ և մեղքեր կդատապարտվին:

Իր ներկայացուցած պատգամները, նման մեր երկրագունտին, ունին իրենց մութ կողմը և լուսավոր երեսը: Մոռալ կողմերն են.

ա.—Աստված սիրած է Իսրայելի ժողովուրդը, բայց ան վրիպած է այդ սերը փոխադարձելուն մեջ:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից, 1978 թվականի № № Ա—Գ-ից և 1979 թվականի № № Բ-ից, Դ—Է-ից և ԺԱ-ից:

Բ.—Աստված Հայր եղած է, բայց Անոր որդի ըլլալու կանչվածները արատավորած են իրենց Հոր անունը և պատիվը:

Գ.—Աստուծո ընծա մատուցեր են իրենց ավելորդները և անպետները, փոխանակ լավագույնները մատուցանելու: Չեն վճարած իրենց տասանորդները:

դ.—Քահանաներ հատկապես կանպատվեն Աստուծո անունը և գայթակղության պատճառ կըլլան իրենց հոռի օրհնակով և անպատկառ պաշտամունքով: Աստված կըսէ անոնց. եթե այս ընթացքը շարունակեք՝

«Ձեր օրհնությունները անեծքի պիտի վերածեն... Պիտի վտարեմ ձեզի իմ ներկայութենէս:

Քահանայական դասակարգին հետ ուխտ ըրած էի ի հնումն որ անոնք ՊԱՏՎԵՆ իմ անունս. և այդպես ալ ըրին. պատվեցին զիս և իմ անունս և երկյուղածության մեջ ապրեցան: Անոնք շարունակ կուտցանեին ճշմարիտ օրենքը, և իրենց քերենն անօրենության խոսք մը չեղավ: Խաղաղությամբ և ուղղությամբ քաղեցին ինձի հետ, և շատեր դարձուցին անօրենությունեն: Քահանային շրթունքները պահապանը պիտի ըլլան ճշմարիտ գիտության, և Աստուծո օրենքը պիտի փնտովի անոր քերանեն, որովհետև պատգամավորն է Ամենակալ Տիրոջ: Իսկ դուք (կըսէ մարգարեն խոսքը ուղղելով իր ժամանակակից քահանայության) շեղեցաք ճշմարտության ճանապարհեն և գայթակղեցուցիք շատերը օրենքէ: Եղծեցիք, ավրեցիք այն ուխտը զոր կնքած էի քահանայու-

թյան հետ: Ուստի, ես այ իմ կարգիս արհամարհեի և նկուն դարձուցի ձեզ հաշս ժողովուրդի, քանի որ դուք իմ ցույց տված ճամբայես չի քալեցիք, և աշատությունը քիթ ձեր պարտականության կատարումին մեջ» (Բ 1—9):

ե. —Խաբեբայություններ ըրած էին:

«2է՞ որ ամենքս մեկ հայր ունինք (ամենքս արեմակից ենք, նույն ցեղին կապականինք): 2է՞ որ մեկ Աստված ստեղծեց ամենքս. ինչո՞ւ ուրեմն կիաքեք ձեր եղբայրները... և գառչելի քաներ կընեք... ու կպղծեք Տիրոջ սրբությունը օտար աստվածներու հարելով... պիտի սատկեցնե Տերը այս քաները ընողները:

գ. —Անհավատարիմ եղած էին իրենց կիներուն:

«Անհավատարիմ եղած ես քու երիտասարդությանդ կնոջ, թեև ան քու ամուսինը էր և քու կինը, որուն հետ հանդիսավոր ուխտով կապված էիր: 2է՞ որ նույն Աստվածը ստեղծած է նաև զայն, անոր թե մարմինը և թե ոգին: Եվ ի՞նչ է Աստուծո ուզածը—ամուսնության օրենքով—եթե ոչ աստվածավայս զավակներ: Հետևաբար զգույշ եղեք, թող ոչ որ անհավատարիմ ըլլա իր երիտասարդության կնոջ. որովհետև կրսե Տերը. ԿԱՏԵՄ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ և—կնոջ հանդեպ եղած—զրկանքը և անգթությունը» (Բ 10—16):

է. —Անբարոյություն և հարստահարություններ շատցած էին:

«Պիտի դատեմ ու դատապարտեմ կախարդները, շնացող կիները, ստախտները ու հատկապես անոնք որ կհարստահարեն աշխատավորը, այրին, որբը, և օտարականը և անոնք որ անպատկառ են իմ առջև» (Գ 5):

ը. —Տիրոջ դեմ ծանր և անպատկառ խոսած են ըստ հետևյալի.

«Ոմանք քսին, անօգուտ է Տիրոջ ծառայելը, ի՞նչ կշահինք Ամենակալ Աստուծմե՛ պահելով իր պատվիրանները և Անոր առջև երկյուղած մնալով: Կտեսնենք որ ամբարիշտը երջանիկ է, չարագործներն են, որ կհաջողին կյանքին մեջ. անոնք Աստուծո դեմ դարձան և տակավին կապրին առանց փորձանքի» (Գ 13—15):

Մարգարեին պատգամներուն լուսավոր կողմերն են.

ա) Հոսումը Աստուծո օրհնության իրեն վատաբողներուն վրա (Գ 10—12):

բ) Աստուծո երկյուղածները իր սեփական ժողովուրդը պիտի ըլլան, և անոնց հետ պիտի վարվի աչնպես ինչպես հայր մը կվարվի իր զավակներուն հետ (Գ 16—18):

գ) Արշալույսը Նոր Օրվան մը, երբ բո-

լոր ամբարտապանները և անօրենություն գործողներ եղեգի պես պիտի այրին, ու անոնց արմատը պիտի չորնա. իսկ երկյուղածներու համար պիտի ծագի արդարության արեգակը, և անոնց «թևերը պիտի բժշկվին»—սու Աստված թռչելու համար—և հաղթանակ պիտի տանին ամբարիշտներուն վրա» (Դ 2—3):

դ) Առաքումը Աստուծո պատգամավորին, որ Մեսիայի գալույթան համար գետին պիտի պատրաստե.

«Ահա կըրկեմ ձեզի Եղիա Թեգբացին, նախ քան Տիրոջ մեծ և երևելի օրը. որպեսզի պատրաստե մարդոց սիրտերը, և հաշտեցնե զանոնք իրարու հետ, որպեսզի երբ գամ չհարվածեմ երկիրը անեծքով»:

Այս խոսքերով կալարտի մարգարեական գիրքերու շարքը: Եվ կվերջանա Հին Կտակարանի մարգարեական շրջանը: Երբ կիսակվի անոր վերջին էջը այս գուշակությանը, ու երբ կբացվի առաջին էջը Նոր Կտակարանին, այս նախատեսությունը արդեն իսկ իրականացած կտեսնենք Հովհաննես Մկրտչի երևումով, որ եկած էր Եղիայի կերպարանքով և կգործեր անոր ոգիով և կպատրաստեր ճամբան Անոր—որ «հանկարծ պիտի երևեր իր Տաճարին մեջ»:

Հույնք հնվի. 2. լատինք՝ չունին:

Գլուխ յոթներորդ

ԶԱՆԱԶԱՆ ՀԻՆ ՈՒՅՏԻ ՍՈՒՐԲԵՐ

Այս գլուխին տակ կներկայացնենք Հին Կտակարանի այն դեմքերը, որոնք մինչև հիմա հիշված խոմբերեն ունե մեկին մաս չեն կազմեր, որոնք սակայն տեղ գրաված են Հայ Եկեղեցիի տոնացույցին մեջ:

41. 42. 43. ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆԻՔ
ՍԵԴՐԱՔ, ՄԻՍԱՔ ԵՎ ԱՔԵԹՆԱԳՈՎ

Ասոնք անբաժան են Դանիել մարգարեին թե տոնակատարությամբ և թե պատմությամբ:

Տեսնենք թե այս «Երեք Մանուկներ» կոչվածները, Անանիա, Ազարիա և Միսաել, ընտրված էին Դանիելի և այլոց հետ, Բաբելոնի Նաբոգոդոնոսոր թագավորին հրամանով, բարձր ուսմունք առնելու՝ բարձր պետական պաշտոններու պատրաստվելու համար: Արդարև իրենց դաստիարակության ավարտումեն հետո իշխան կարգվեցան «Բաբելացվոց աշխարհի գործերուն վրա»: Այդ բարձր դիրքերու վրա չմոռցան երբեք իրենց Աստվածը և շարունակեցին հավատարիմ մնալ Անոր օրենքներուն ինչ որ արդարև մեջտեղ եկավ հանդիսավոր առիթով մը:

Նաքուգողոնոսոր թագավոր ոսկի արծաճ մը կանգնել տված էր և անոր մալակատիքը, այսինքն բացումը կատարելու համար հրավիրած էր պետության բոլոր մեծամեծները, որոնց կարգին մասն ալս երեք երիտասարդ գործակալները: Հանդեսը պիտի կայանար երկրպագելու մեջ այս արծաճին, իբրև գերագույն մարմնացումին Բաբելոնական դիրքերուն:

Երեք ընկերները կմերժեն երկրպագել այս կուտքին ըսելով. «Մենք երկինքի մեջ Աստված մը ունինք, զոր կպաշտենք արդեն, և հետևաբար սա բացահայտ լլալ քեզի, արքա, որ մենք քու դիրքերդ չենք կորնար պաշտել, ոչ ալ՝ երկրպագելու քու կանգնած ոսկի արծաճին»:

Թագավորը բնականաբար կատուցեցաւ և հրամայեց մեռել զանոնք «որորքայալ կրակի հնոցի մեջ»: Պատահեցաւ այն հրաշքը որ երեք երիտասարդները կհավատային թէ կրնար պատահիլ, եթէ Աստված կամենար:

Հնոցին մեջ ոչ միայն չայրեցան, այլ Աստուծո օրհնության երգեր երգեցին: Նաքուգողոնոսոր շատ զարմացաւ երբ անոնց օրհնության ձայնը լսեց. բայց ավելի զարհուրեցաւ երբ մշմարեց անոնց հետ չորրորդ էակ մը, «որուն տեսքը մնաւ էր Աստուծո Որդիին»: Ուստի դուրս կանչեց «հարձրալ Աստուծո ծառաները» ...և տեսան որ կրակը չէր վնասած անոնց մարմինին, չէր խանձոտած անոնց մագերը, կրակի հոտն անգամ չկար անոնց վրա» (Դան. Գ գլուխ):

«Ու Նաքուգողոնոսոր թագավորը երկրպագություն ըրավ Տիրոջ առջև և ըսավ. Օրհնալ լլալ Սեդրակի, Միսաքի և Աբեդնագույի Աստվածը, որ դրկեց իր հրեշտակը և փրկեց իր ծառաները, որովհետև Անոր հուսացին, և չհնազանդեցան թագավորական հրամանին, և իրենց մարմինները կրակի մատնեցին, որպեսզի չկպաշտեն ոչ մեկ ուրիշ աստված, բացի իրենց Աստուծոն: Եվ արդ, ես հրաման կհանեմ բոլոր ազգերուն և լեզուներուն, թե ով որ հայհոյական խոսքեր ընէ Սեդրակի, Միսաքի և Աբեդնագույի Աստուծուն դեմ, կորուստի պիտի մատնվի, որովհետև չկա ուրիշ աստված, որ կարենա այն կերպով փրկել»:

Ու ավելի բարձրացուց և փառավորեց այս հավատավոր և քաջարի երիտասարդները: Այս դեպքեն հետո երեք երիտասարդները իրենց ամենեւն սրբազան դերը կատարած ըլլալով կբաշխին թատերաբեմն և ալլալ չեն հիշվիր:

Հույն կիիշատակեն զանոնք Դանիելի հետ դեկտ. 17-ին: Լատինք ալ մույն թվականին առանց Դանիելի:

44. ԵԶՐ ԿԱՄ ԵԶՐԱՍ

Եզր քահանա մը և դպիր մըն է Ահարոնի ցեղեն:

«Պարսից Արտաշէս թագավորի իշխանության օրով Բաբելոնեն եկաւ Եզրաս անունով մեկը...: Սա արագագիր դպիր մըն էր Մովսէսի օրենքին, զոր Տէր Աստված տված էր Իսրայելի: Ու թագավորը տվաւ անոր ինչ որ ուզեց, որովհետև Աստուծո ձեռքը անոր հետ էր: Եզրասի հետ Բաբելոնեն Երուսաղեմ եկան շատ մը իսրայելացիներ, քահանաներ, ղևտացիներ, երգեցիկ պաշտոնյաներ, դռնապաններ և տաճարի սպասավորներ (շուրջ երկու հազար հոգի) Արտաշէս թագավորի յոթներորդ տարին...: Եզրաս միտքը դրած էր փնտռել Տիրոջ օրենքները և կատարել զանոնք, և սորվեցնել Աստուծո հրամանները և դատաստանները» (Եզր. Է 1—10):

Վերոհիշյալ Արտաշէս թագավորը իշխած կնկատվի Ն. Բ. 404—359, որով անոր յոթներորդ տարին՝ և Եզրասի գործունեության սկիզբը կըլլա Ն. Բ. 397 թվականը:

Եզր վերադարձաւ հատուկ արքայական հրամանագրով, որուն մեջ շատ բարձր կարտահայտվի Եզրի մասին, և կհրահանգվի ամենուրեք, որ պահանջված օգնությունը չզլանան անոր: (Եզր. Է 11—26):

Եզրի գլխավոր բարեկարգությունը եղաւ ջնջել ու չեղյալ մկատել բոլոր օտար ամուսնությունները և խստիվ արգիլել որ ոչ մեկ Իսրայելացի ամուսնանա օտարականի հետ (Եզր. Թ գլուխ): Այս համադրեց ամբողջ Մովսէսի օրենքները. կարդաց բոլոր ժողովուրդի տաճարի շրջափակին մեջ արևածագեն մինչև կեսօր: (Նե. Ը 2—8):

Եզրի վախճանի մասին ոչինչ ըսված է: Հայց. Եկեղեցին կիիշատակեն զայն Եզրի երեք մարգարէի հետ Վերափոխման Գ կիրակիի հաջորդ Գ2. օրը: Հունաց մոտ չհանդիպեցանք. լատինք՝ հուլիս 13-ին Հովել մարգարէի հետ:

45. ՄԱԿԱՅԱՆՆԵՐ

Եզրով դուրս կուգանք Աստվածաշունչի սովորական կանոնական գիրքերու շրջանակեն, բայց սպառած չենք ըլլար Հին Կտակարանի սուրբերու շարքը: Հայց. Եկեղեցին ունի մակ քանի մը տոնելի անուններ, որոնք մեզի կուգան Ս. Գրքի ԵՐԿ-ՈՐՈՂԱԿԱՆՈՆ կոչված գիրքերեն: Այսպես կկոչվին այն գիրքերը, որոնք կպակսին եբրայական բնագրին մեջ և կգտնվին հունարեն Յոթանասնից թարգմանության մեջ, որ կկազմեն գործածական Ս. Գիրքը քրիստոնեական առաջին եկեղեցին և հե-

տեսաբար որմե կատարվեցան հնագույն եկեղեցիները Ս. Գրոց թարգմանությունները, որոնց կարգին մեկ մերիմը: Ասոնք երկրորդականում կրպին, պարզապես Ս. Գրոց կանոնին, այսինքն գիրքերու ընդունված ցանկին մեջ, ետքն անցած ըլլալուն համար: Այսպես մեծ տարբերություն չունին մասնական գիրքերն, քանի որ ոճով և ոգիով առ հասարակ նույն են մասնական գիրքերուն հետ և հետևաբար կկարդացվին եկեղեցիի մեջ, ինչ որ լավագույն փաստն է իրենց պաշտոնապես ընդունված ըլլալուն եկեղեցիի կողմէ: Արդ կավարտենք Հին Կտակարանի տոնեղի սուրբերու ցանկը երկրորդական գիրքերն վերցված անուններով:

Ասոնք բոլորը միասնաբար կտոնվին սա խմբական անունի տակ.

«Սրոց Մակաբայեցոցն Եղիազարու քահանային և Ծամունայ եւ եօթն որդոցն որին»:

Ասոնց հիշատակությունը վերիվերո նույն է մեկ հունաց ու լատինաց մոտ: Հունական ձևն է «Եօթն Մակաբայեցի մանկանցն և մօրն իրեանց Սողոմէի եւ ուսուցչին իրեանց Եղիազարու»: Իսկ լատինականը՝ «Մակաբեան եղբարցն եւ մօրն իրեանց եւ Եղիազարու սուրբ ծերունոյն»: Մոր անունը հիշված չէ Մակաբայեցից գրքին մեջ, ըստ վերկի հիշատակությանց Սողոմէ է. իսկ ըստ մեզի՝ Ծամունէ, հախանաբար ասորական աղբյուրն եկած:

Այս կերպ հիշատակութենէն այնպես կհետնի, որ «Մակաբայեցիներ» կոչվածները Եղիազարն ու Ծամունէն են իր որդիներով. մինչդեռ ասոնք «Մակաբայեցի» չեն, այլ Մակաբայեցից շրջանը կանխող մահատակներ են: Հետևաբար մենք կենթադրենք որ «ՄԱԿԱԲԱՅԵՑՎՈՑ»-ը պետք է ընդունիլ իբրև առանձին հիշատակելի անվանախումբ մը ու «ԵՎ» շաղկապով զատել մյուսներէն:

Արդարև ՄԱԿԱԲԱՅԵՑՎՈՑԻՆԵՐԸ ուսմիրանները և մահատակները եղան կրոնական ապստամբության մը, որ վերածվեցաւ ի վերջո ազգային շարժումի մը, օժտելով Իսրայելի ժողովուրդը իր վերջին պետականությամբ, որ տեղ շուրջ հարյուր տարիներ: Ն. Ք. 160—60-ական թվականներուն:

Քրիստոսն առաջ երկրորդ դարուն Հրեաստան կոտմի Սելևկյան հույն իշխանապետության ձեռքը, որուն կեդրոնն է Անտիոք, Սուրիո մեջ: Ասոնց թագավորներն Անտիոքոս Եպիփան, որ թագավորած է 175—163 ճ. Ք., հրահանգ հանեց որ իր թագավորության ներքն գտնված բոլոր ժողովուրդներ ընդունին հունական մշակույթը

և պաշտեն հունական աստվածները: Ասիկա գորավոր հակազդեցություն հառաջ բերավ հրեից մեջ:

Թատերաբեմի վրա երեցաւ Մատաթիա անուն պատկանելի և քաջ քահանա մը, որ տեսնելով թե հրեա մը զոհ կմատուցանէ հույն աստվածներուն, զարկաւ սպաննեցաւ, ինչպես մեկ պետության ներկայացուցիչները, որոնք եկած էին թագավորին հրամանը գործադրելու, և կործանեց հեթանոսական քաղինը, ապա գոչեց. «Անոնք որ մահաւնախանիք են Աստուծո օրենքին և Ուխտին պահպանության»՝ թող ինձի հետեւին»: Իր հինգ կորովի որդիները, եղբայրները և մահաւնախանիքներու մեծ քաղաքություն մը հետևեցան իրեն. այսպես քարձրացուցին կրոնական ապստամբության դրոշը և քաշվեցան լեռները, և սկսան քանդել քաղինները ամենուրեք:

Մատաթիա, մախքան իր մահը իրեն հաջորդող կարգեց իր անդրանիկ զավակը ՀՈՎՀԱՆՆԵՍԸ. իսկ գորավար՝ երրորդ որդին ՀՈՒԴԱՆ, որուն քաջությանը և հարվածային հաղթանակներուն համար ետքն տրվեցաւ ՄԱԿԱՅԵՑՈՍ հունական մակդիրը, որ կնշանակէ «մրճահար, հարվածահար»: Այս մակդիրը տարածվեցաւ ամբողջ ընտանիքին վրա որ կոչվեցաւ «ՄԱԿԱՅԵՑՎՈՑՆԵՐ»: Այսպես իրենց ընտանեկան մականունն էր «ՀԱՍՄՈՆՅԱՆ», որով ևս կոչվեցան պատմության մեջ:

Հուդա Մակաբե հաջող կոիվներն հետո գրավեց Երուսաղեմը, մաքրեց տաճարը և կանոնական զոհերը վերականգնեց: Մակայն ի վերջո Հուդա ինկալ պատերազմներն մեկին մեջ, իբրև գլխավոր մահատակը այս կրոնազգային շարժումին: Անկէ առաջ ուրիշ կովի մը ընթացքին մահատակված էր իր չորրորդ եղբայրը ԵՂԻԱԶԱՐ: Իրեն հաջորդեց կրտսերագույն եղբայրը ՀՈՎՆԱԹԱՆ: Այս միջոցին սպանվեցաւ մեկ երեք եղբայր Հովհաննէս: Հովհաննէս շատ հաջող շրջան մը բոլորեց և ճ. Ք. 152-ին քահանայապետ օժիւցաւ: Մակայն ինք ալ զոհ գնաց դավաճանության մը և սպանվեցաւ Պողոտայիս կամ Աքքիա քաղաքի մեջ:

Իրեն հաջորդեց իր եղբայրը ԾՄԱՎՈՆ, իբրև քահանայապետ և հաջորդեցաւ ի սպառ ազատել երկիրը հեթանոսական լուծէն, ճ. Ք. 140-ական թվականներուն: Մակայն ի վերջո ինք և իր երկու զավակներն ալ զոհ գացին դավաճանության և սպանվեցան Երիքովի մեջ:

Այսպես Մատաթիայի հինգ զավակները, Հովհաննէս, Ծմալոն, Հուդա, Եղիազար և Հովհաննէս ինչպես մեկ Ծմալոնի երկու զավակները Մատաթիա և Հուդա կրտսեր-

ները, մեկը մյուսին ետևեն մահատակվեցան իրենց կրոնքի ազատության համար, և արժանի եղան դասվելու մարտիրոսներու շարքին: Այս հինգ եղբայրներու սիրագործությունները պատմված են Ա. ՄԱԿԱ-ԲԱՅԵՑՎՈՑ գրքին մեջ:

46. ԵՂԻԱԶԱՐ ՔԱՀԱՆԱ

Անտիոքի Սելևկյան թագավորներու կողմէ հրեից վրա դրված հալածանքի ժամանակ մեջտեղ կելլէ մահ Եղիազար անուով պատկանելի ծերունի մը, որուն կստիպեն որ խոզենի ուտէ, ինչ որ աղբիլված էր հրեական օրենքով: Ծերունին կմերժէ և պատրաստակամություն կհայտնէ ձողկվիլու մեռնիլ իր կրոնքին համար, քան թէ խղճահար կյանք մը ապրիլ: Այն ատեն ուրացումի գործադիր պաշտոնյաները, մեղքնալով իր տարիքին, կթելադրեն, որ Եղիազար ինք իր ուզած միսը պատրաստէ և ուտէ ամենքի առջև այնպես մը ձևացնելով որ իբրև թէ կուտքերու զոհյալ միս կուտէ: Այն ատեն ազատ պիտի կացուցվէր մահէ: Սակայն Եղիազար քահանա սա գեղեցիկ պատասխանը տվալ անոնց, արժանի իր պատկանելի տարիքին և անկեղծ աստվածապաշտության:

«Դրկեցեք զիս շուտով իմ գերեզմանս: Եթե ինքզինքս ենթարկեմ այս կեղծիքին, շատ մը երիտասարդներ պիտի խորհին որ Եղիազար ուրացող մը եղալ իր իննսուն տարեկանին: Եթե կեղծեմ կյանքի կարճ շրջան մը ապահովելու համար, ես պիտի գայթակղեցնեմ այդ երիտասարդները և կեղտ ու անպատվություն պիտի բերեմ իմ անունին: Այս կեղծիքով պիտի կրնամ ներկայիս խուսափիլ մարդոց պատիժեն, բայց ողջ մնամ կամ մեռնիմ, պիտի չկրնամ երբեք խուսափիլ Ամենակալին ձեռքեն: Ուստի եթե այժմ քաջաբար մեռնիմ, պիտի հաստատեմ որ արժանի եղած եմ այս երկար տարիքիս, և երիտասարդներուն աղվոր օրինակ մը պիտի ձգեմ, սորվեցնելու համար անոնց, թէ ինչպես պետք է մեռնիլ ուրախությամբ և քաջությամբ մեր սուրբ օրենքներուն համար» (Բ. Մակ. Զ 18—28):

Երբ իր խոսքերը ավարտեց, քաշկռտեցին զայն անմիջապես և սկսան ձողկել: Երբ գրեթե մեռելի պես եղած էր ձողանքներու տակ՝ Եղիազարը բացալ բերանը և հատաչանքով ըսավ:

«Աստված միայն կրնա գիտնալ իր սուրբ ամենագիտությամբ, թէ ինչ ահավոր տագնապի ենթարկված եմ ֆիզիքապես՝ այս ձողանքեն, թեև կրնայի խուսափիլ այս չարաչար մահեն: Այսուհանդերձ Աստված գիտե մահ, թէ հոգևորն ուրախ եմ այս

տանջանքին համար, որովհետև Տիրոջ առջև երկյուղած ըլլալուս համար կընդունիմ այս չարաչարանքները» (Բ. Մակ. Զ 30):

Այսպես մեռալ այս պատկանելի ծերունին, և իր մահով հերոսական օրինակ մը ձգեց գալիք սերունդներուն, հատկապես մահի քրիստոնյաներուն, որոնք խորապես ներշնչված են իր և հաջորդող մահատակներու օրինակեն:

47. ԸԱՄՈՒՆԵ ԵՎ ԻՐ ՅՈՐԸ ՈՐԴԻՆԵՐԸ

Նույն հալածանքի շրջանին կպատկանի մահատակությունը քաջասիրտ մոր մը և նույնքան քաջակորով իր զավակներուն:

Յոթը եղբայրները իրենց մորը հետ կը ձերբակալվին և կհանվին թագավորի ներկայության ու կենթարկվին ձողանքի ստիպելու համար որ խոզի միս ուտեն: Առաջինը կսկսի այսպես խոսիլ:

«Ի՞նչ կուզեք հասկնալ զմեզ հարցափորձելով. մենք պատրաստ ենք մեռնելու քան թէ հակառակ գործել մեր հայրենի օրենքներուն»:

Այն ատեն թագավորը հրամայեց կտրել անոր լեզուն. գլխուն մորթը երեսին վրա դարձուցին. ապա ձեռքերը և ոտքերը կըտրեցին, մորը և եղբայրներուն աչքին առջև. և ապա եռացած կաթսայի մեջ նետել տալով մահատակեցին զայն:

Երկրորդն ալ ձողանքի ենթարկելէ հետո հարցուց թագավորը, թէ պիտի ուտե՞ր խոզի միսը մահի քան անդամներն ալ ջարդ ու փշուր ընելը: Երիտասարդը պատասխանեց. «Երբեք. դուն մեզ կազատես այս կյանքեն: Եվ որովհետև մենք կմեռնինք իր օրենքին համար, Տիեզերքի թագավորը պիտի հարուցանէ մեզ հավիտենական ու նոր կյանքով մը»:

Երրորդին երբ հարցուցին թէ պիտի ուտե՞ր խոզենի, ան երկարեց իր լեզուն և ձեռքերը, որ կտրեն ու ըսալ քաջաբար.

«Երկնից թագավորը տված է ասոնք ինձի. իր օրենքները սակայն շատ ավելի մեծ արժեք ունին ինձի համար քան ասոնք. և իրմէ է, որ կհավատամ թէ պիտի վերստանամ զանոնք»:

Երբ ասիկա լսեցին թագավորը և իր շուրջիները զարմացան երիտասարդի ցուցաբերած արիական ոգիին և անոր արհամարհանքին վրա չարաչարանքի նկատմամբ:

Չորրորդը մահամերձ վիճակի մեջ ըսալ թագավորին.

«Ավելի լավ է մեռնիլ մարդոց ձեռքով և հուսալ Աստուծո խոսքին իրականացման, մեզի հարություն տալու, քան թէ քեզի պես ողջ մնալ. որովհետև քեզի համար հարություն չկա»:

Ապա հինգերորդը քաշկոտվեցավ չար-
չարանքի և ըսավ թագավորին.

«Թեև դու ալ մահկանացու ես, բայց
իշխանություն տրված է քեզի մարդոց վրա,
վարվելու անոնց հետ ուզածիդ պես: Բայց
չկարծես թե Աստված լքած է մեր ժողո-
վորդը: Ապասե և պիտի տեսնես թե ինչ-
պես Աստուծո մեծ գործությունը քեզ և քու
սերունդդ ալ պիտի չարչարե»:

Վեցերորդը նախ քան վերջին շունչը
տալը ըսավ.

«Մի խաբվիր, ով թագավոր, թեև մեր
մեղքերուն համար է որ այս պատահար-
ները մեր գլխուն կուգան, սակայն մի կար-
ծեր թե դու ալ պիտի ազատիս Աստուծո
դեմ պայքարելու ամբարշտությանդ հետե-
վանքներեն»:

Սակայն ամենեն ավելի բարի հիշատա-
կության արժանի եղավ ասոնց սքանչելի
մայրը: Տեսավ իր աչքին առջև իր յոթը որ-
դիններուն մի առ մի նահատակվիլը: Բայց
քաջաբար կրեց ասիկա, որովհետև իր հույ-
սը Աստուծո վրա դրած էր: Կքաջալերեր
յուրաքանչյուրը իր մայրենի լեզվով: Լեց-
ված էր ազնվական վճռականությամբ և իր
կանացի մտածումները հրահրված էին առ-
նական ոգիով. ըսած էր իր զավակներուն.

«Ինք հայտնվեցաք արգանդիս մեջ, ու
ես չեմ գիտեր թե ինչպես. ես չէ որ կյանք
ու շունչ տվի ձեզի, ոչ ալ կազմավորեցի
ձեր մարմնական ձևը: Ամենայն ինչի Արա-
րիչն է որ կձևակերպե մարդը իր ծննդյան
ատեն և կծրագրե ծագումը ամեն քանին:
Ուստի Ան իր ողորմությամբը ետ պիտի
տա ձեզի ձեր կյանքը և շունչը, քանի որ
հիմա դուք Անոր օրենքը ձեր անձերեն վեր
կդասեք»:

Կարգը եկած էր կրտսեր տղուն: Թագա-
վորը փորձեց խոստումներով սիրաշահիլ
զայն, ապահովցնելով, թե այն վայրկյանին
որ ինք կհրաժարի իր նախնյաց սովորու-
թյուններեն, պիտի հարստացնե զայն և
բարձր պաշտոններու պիտի հասցնե ար-
քունի պալատին մեջ: Քանի որ տղուն կա-
րևորություն չէր տար թագավորի խոստում-
ներուն, կանչել տվավ թագավորը պատա-
նին մայրը և հրամայեց, որ համոզեր զայն
մտիկ ընելու իր խրատին փրկելու համար
անոր կյանքը: Մայրը մոտեցավ և ըսավ
անոր.

«Տղաս, գթա ինձի. ես քեզ ինձ ա-
միսներ կրեցի արգանդիս մեջ. կաթ տվի
քեզի երեք տարիներ. մեծցուցի և այսօր-
վան հասակիդ քերի: Նայե երկինք և եր-
կիր, և տես անոնց մեջ եղածները» և գիտ-
ցիր թե Աստված ստեղծեց զանոնք ոչին-
չեն, մարդն ալ Անկե ստեղծված է: Մի
վախճար այս մտազործեն. ընդունե մահի

և արժանի եղիր եղբայրներուդ քաջության,
որպեսզի Աստուծո ողորմությամբ վերստին
ստանամ քեզ ալ անոնց հետ»:

Հազիվ մայրը ավարտեց, սկսավ խոսիլ
չափահաս պատանին.

«Ինչի՞ կսպասեք. թագավորի հրամանին
պիտի չենթարկվիմ. ես կհնազանդիմ այն
օրենքին, որ տրվեցավ մեր հայրերուն
Մովսեսի ձեռքով: Եվ դու, ով թագավոր,
դու, որ ամեն տեսակ չարչարանքներ
հնարեցիր մեր ազգին համար, դու ալ պի-
տի չազատիս Աստուծո ձեռքեն: Մենք այ-
սօր կչարչարվինք մեր մեղքերուն պատ-
ճառով, ու եթե մեզ ուղղելու և կարգի քե-
րելու համար Աստված քարկացած է կարճ
ժամանակի մը համար, սակայն նորեն պի-
տի հաշտվի իր ծառաներուն հետ: Բայց
դու, ամբարիշտ մարդ, պարսպ հույսերով
մի տարվիր. դու որ կչարչարես Աստուծո
ծառաները, դու ալ գերծ պիտի չմնաս
դատաստանեն Ամենակալ և Ամենատես
Աստուծո: Իմ եղբայրներս մեռան Աստուծո
ուխտին հավատարիմ մնացած ըլլալուն
համար. կարճ չարչարանքե մը հետո ա-
նոնք առաջնորդվեցան հավիտենական
կյանքի. բայց դու պիտի վճարես արդար
պատիժը քու ամբարշտությանդ Աստուծո
դատավճիռով: Ես, եղբայրներուս պես կու-
տամ մարմինս և կյանքս մեր հայրերու օ-
րենքներուն համար: Կաղերսես Աստուծո
որ քալություն տա իր ժողովուրդին: Քեզ
ալ, մեծամեծ պատմահաներն հետո, թող
առաջնորդե Աստված խոստովանելու, որ
Ան է միակ Աստվածը: Իմ և եղբայրներուս
մահով թող Աստուծո հարկությունը անցնի
մեր ժողովուրդին վրայեն»:

«Թագավորը այս խոսքերը լսելով կա-
տաղութենեն ինքզինքեն ելած, շատ ավելի
չարչար մահով սպաննեց այս մատաղ ե-
րիտասարդը որ անարատությամբ և սրբ-
ությամբ և Տիրոջ հուսալով մեկնեցավ աշ-
խարհե: Զավակներեն հետո եղանելի մայրն
ալ սպաննվեցավ» (Բ Մակ. Է գլուխ):

Այս յոթ եղբայրներու անունները թեև չեն
հիշված Մակարայեցվոց գրքին մեջ, բայց
1860-ին ի Վենետիկ հրատարակված Աստ-
վածաշունչի լուսանցքին վրա յուրաքան-
չյորին անունը գրված է կարգով, որոնք
են. Ակար, Մակար, Խորեն, Խորսեն, Ա-
մինադար, Գալիլե և Գաղիդե, որոնք սա-
կայն բոլորովին տարբեր են հունական և
լատինական օրացույցներու մեջ:

Մակարյան շրջանի այս բոլոր նահա-
տակներու հիշատակը կկատարենք միաս-
նաբար Վարդավառի երրորդ շաբթվան եր-
կուշաբթիին:

(«Աստվածաշնչական ստորեր», Իսթան-
պուլ, 1977, էջ 119—180)



ՎՐԱՑԱԿԱՆ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Հայրապետը Մայր Աթոռում ուրախությամբ ստացավ վրացական քույր եկեղեցու Թբիլիսիում մայրենի լեզվով լույս տեսնող Վրաց կաթողիկոսության «Ջվարի վագիսա» («Որթատունկե խաչ») կրոնական պարբերականի Ա և Բ համարները:

Աստվածահաճո այս իրագործումը վկայությունն է վրացական քույր եկեղեցում տեղի ունեցող վերագարթոնքի, վերագարթոնք, որ սկսվեց երիտասարդ նորընտիր գահակալի՝ Նորին Սրբությունն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի ընտրությամբ:

«Էջմիածին» ամսագրում անդրադարձել ենք վրացական եկեղեցու պատմության, ժամանակակից կյանքի և մանավանդ նորընտիր կաթողիկոս-Պատրիարքի ընտրության և գահակալության հանդիսությունների («Էջմիածին», 1978, փետրվար):

Այս ուրախ առիթով մեր ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում «Ջվարի վագիսա» պարբերականի Ա և Բ համարների համառոտ բովանդակությունը:

«ՋՎԱՐԻ ՎԱԶԻՍԱ», 1978, Ա.

Պարբերականի առաջին էջը սկսվում է «Օրհնեալ եղիցիս» ուղերձով, որ Համայն Վրաստանի կաթողիկոս Իլիա Բ-ն, ողջունելով վրաց հավատացյալ ժողովրդին, իր ուրախությունն ու գոհունակությունն է հայտնում վերոհիշյալ պարբերականի լույսընծայման առթիվ և հույս հայտնում, որ այն մեծ դեր պետք է կատարի վրացական եկեղեցու կյանքում հավատացյալների քրիստոնեական և հայրենասիրական դաստիարակության ճանապարհին:

Խոսելով հանդեսի նպատակների մասին, Իլիա Բ-ն ընդգծում է, որ «Ջվարի վագիսա»-ում պետք է տեղ գտնեն առավելաբար կրոնական բնույթի հոդվածներ, որոնք միաժամանակ ընթերցողներին ներշնչելու են ժողովուրդների միջև բարեկամության, մարդասիրության և խաղաղասիրության քրիստոնեական գաղափարներ:

«Պետություն և եկեղեցի» խորագիրը կրող հոդվածում խոսվում է այն օրինական իրավունքների մասին, որ վրացական եկեղեցին ստացավ Վրաստանում ՍՍՀՄ նոր Սահմանադրության հաստատումով:

«Վրացական եկեղեցու ԺԲ տեղական ժողովը» տեղի ունեցավ 1977 թվականի դեկտեմբերի 23-ին, Թբիլիսիի Սիոնի Մայր տաճարում: Սույն վերնագրի տակ տպագրված է ԺԲ տեղական ժողովի դիմումը՝ ուղղված Վրացական ՍՍՀ Միջխոսողների խորհրդին: Այդ դիմումի մեջ ժողովի մասնակիցները իրենց երախտագիտությունն ու գոհունակությունն են հայտնում հայրենի կառավարության այն բարյացակամ վերաբերմունքի համար, որ ցուցաբերում է դեպի վրացական եկեղեցին:

Վերջում ընթերցողների ուշադրությանն է ներկայացվում Նորին Սրբություն Իլիա Բ նորընտիր Պատրիարք-կաթողիկոսի կենսագրությունը:

Հաջորդ էջերում խոսվում է ընտրության ու գահակալության նվիրված հանդիսությունների մասին, որ ողջույնի և շնորհավորանքի խոսքով հանդես էր եկել նաև Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը (տես «Էջմիածին», 1978, Բ):

Հանդեսի մեջ տեղ են գրավել նաև նորընտիր Պատրիարք-կաթողիկոսի առաջին

կոնդակը՝ ուղղված օրթորոքս եկեղեցիների հոգևոր պետերին, և Ջատկական պատգամը Փրկչի Հարության տոնի առթիվ:

Ժողովուրդների միջև բարեկամության և խաղաղության պահպանմանն են նվիրված «Բարեկամության ճանապարհներին» և «Թող խաղաղություն լինի» հոդվածները:

«Սիոն» խորագիրը կրող ակնարկում պատմվում է վրացական եկեղեցու Մայր տաճարի՝ Սիոնի պատմական եկեղեցու հիմնադրման և նրա ճարտարապետական առանձնահատկությունների մասին:

Վրացական ձեռագրերի, հոգևոր երգերի և ծիսապաշտության վերաբերյալ հարցե-

ՄԱՅՐ ՄԱՅՐ



I

ՆԱՅԻՆԱՅԻՆ ՆԱՅԻՆԱՅԻՆ

ՊԱՅՆՈՒՆ—1978

«Զվարի վագիսա» վրացական կրոնական պարբերականի շապիկը

յը լուսաբանվել են «Հին վրացական ձեռագրերը», «Ժամերգություն», «Վրացական եկեղեցական երգեր» հոդվածներում: «Քսանդարյա վրացական եկեղեցին» վերնագրի տակ ամփոփ կերպով ներկայացվում է վրացական եկեղեցու ծագման ու գործունեության պատմությունը:

Վերջին էջերը նվիրված են վրացական եկեղեցու կյանքում տեղի ունեցած իրադարձություններին, հանդիսություններին, եկեղեցական-թեմական գործունեության ու էկոմենիկ հարաբերություններին:

«Ջվարի վագիսա» կրոնական հանդեսի Ա համարն ավարտվում է «Աստվածաբանական բառարան» մասնագիտական, բաբացատրական բառարանով, ուր պարզաբանվում են եկեղեցական-կրոնական բառերն ու տերմինները:

«Ջվարի վագիսա»-ի Բ համարը լույս է տեսել Ա համարի հրատարակությունից մոտ տասը ամիսներ անց:

Այն սկսվում է Ն. Սրբություն Իլիա Բ կաթողիկոսի գահակալության, մեկ տարվա գործունեության ու հանդիսությունների նշկարագրությամբ:

1978 թ. վերջերին Վրաստանում մեծ շուքով տոնվել է վրաց ժողովրդի գրական առաջին հիշատակարանի՝ «Ծուռանիկ թագուհու մարտիրոսությունը» գրքի 1500-ամյա հոբելյանը:

Ծուռանիկ Վարդենին Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրն էր, կինը վրաց իշխան Վազգեն բղեշխի: Ինչպես հայտնի է, Ծուռանիկը Վարդանանց պատերազմից հետո իր ամուսնու հրամանով նահատակվեց քրիստոնեական իր հավատքի համար (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան 1944, «Ծուռանիկ Վարդենի», էջ 343—354):

«Իվերյան վանքը Աթոս լեռան վրա և նշանակությունը», այսպես է կոչվում Իլիա Բ կաթողիկոսի գիտական աշխատությունը, որից որոշ հատվածներ տեղ են գտել «Ջվարի վագիսա»-ի էջերում:

Սույն համարում կարդում ենք նաև Նորին Սրբության երկու քարոզները՝ «Ինչի՞ համար է հավատքը հարկավոր մարդուն» և «Աղոթք»:

Այնուհետև տ. Անտոնի արեղան և տ. Թորնիկե քահանա ընթերցողների ուշադրությանն են հանձնում «Պահքի մասին» և «Սրբապատկերներ» ակնարկները, իսկ Թուդեյու եպիսկոպոսը իր բանաստեղծությունները՝ ձոնված հայրենիքին և Մայր եկեղեցուն:

«Խաղաղություն ամենեցուն», այսպես է կոչվում վրացական եկեղեցու երիտասարդ գահակալի բողոքը՝ Լիբանանում հայ ժողովրդի դեմ կատարված անարդարացի, զինված հարձակումների դեմ:


Հանդեսի Բ համարը, իր նախորդի նման, ավարտվում է «Եկեղեցական կյանք» (լուրեր) և «Աստվածաբանական բառարան» բաժիններով:

Հանդեսը ուշադրություն է գրավում իր գեղեցիկ պատկերազարդումներով ու հանելի գեղարվեստական ձևավորումով: Հատկապես նշելի են թղթի և մկարների բարձր որակն ու տպագրությունը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, ջերմորեն շնորհավորում է վրացական եկեղեցու նոր պարբերականի հրատարակումը և այս առթիվ մաղթում, որ է՛լ ավելի անի ու զարգանա սույն կրոնական հանդեսը՝ ի մխթարություն վրաց հավատացյալ ժողովրդի:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՄԱԶՅԱՆ





ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ԽԱՉՔԱՐԵՐ

Կոիվ, արհավիրք, արյան հեղեղում
Ու կյանքի հառաչ...
Մարդը գնում էր, մնում էր տեղում
Քարակոտի մի խաչ:

Արծիվ է ասես, արծիվ թևավոր
Դարերից եկած այս խաչքարը հին...
Ելնում է իմ դեմ, ափսոսում ինձ խոր՝
Նման Հարության հրաշք լեզենդին:

Նա թափ է տալիս թևերն իր քարե,
Դարերից եկած մուծը թոթափում,
Եվ կրծքի վրա մեարդայան տառեր՝
Հավիտենության երկինքն է չափում:

Նա իր թևերը երբեք չի ծալել
Սրերի դեմ քիրտ ու սև կապարի,
Նա իր թոփչով մահն է տապալել,
Որ ապրի կյանքի խորհուրդը քարի:

Նա իր հալացքով կառչել լագուրին,
Ամպերի մեջ է թևերը քացել,
Կտրել է արյան ծովերը խորին,
Արտասուքների ծովեր է անցել:


Խարազանվել է նա կայծակներից,
Ծանթերի քացած վերքերից այրվել
Եվ սակայն երբեք չի ընկել վերից,
Օտար ոտքի տակ նա չի ծվարել:

Խաչքար չէ սա, ոչ, արծիվ է քարե,
Նրա ոլորտը կապույտն է վերին,
Նա սավառնել է դարեր ու դարեր
Եվ սավառնելով, հաղթել եղեռնին:

Ծերմակ լեռներից գետերը արյան
Թափվել են գիրկը խավար անհունի,
Եվ Հայոց աշխարհն այս քաղմաղարյան
Հատնել է ահա իբրև մոր Փյունիկ...

Թարգմանություն՝
Վահագն Դավթյանի





Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՊԱՏԱՐԱԳԻՆ» ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ԹՅՈՒՐ ԿԱՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ

Վաղուց է, ինչ հրատարակված է Կոմիտաս վարդապետի արժեքավոր երկերից մեկը՝ բազմաձայն «Պատարագը», Կոմպոզիտորի համապատասխան ձեռագրերի մի մասի հիման վրա, Փարիզի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի և, մասնավորապես, երաժշտագետ Վարդան Սարգսյանի գնահատելի ջանքերով¹:

Նմանապես՝ բավական ծամամալ է անցել արդեն այն բանից հետո, երբ Կոմիտասի Երևանյան դիվանը զգալի հարստացավ արվեստագետի նաև հոգևոր ու հատկապես «Պատարագի» երգերի մշակումների ձեռագրերով²:

Եվ սակայն, Կոմիտասի «Պատարագի» մասին հայ երաժշտագիտության մեջ մինչև այժմ էլ, կարելի է ասել, տիրապետում է մի կարծիք՝ որի համաձայն.

«Այդ ստեղծագործությունը խմբագրողի և հրատարակման պատրաստողի, Կոմիտասի աշակերտ, Կոմպոզիտոր Վարդան Սարգսյանի ներածականից իմանում ենք,

որ ինքը Կոմպոզիտորը (այսինքն Կոմիտասը—Ն. Թ.) տպագրության համար լիովին պատրաստ էր համարում միայն առաջին 17 էջը («Պատարագի» այժմյան տպագրված 71 էջից), այսինքն՝ 39 կտորից միայն 6-ը: Մնացածները կա՛մ վերականգնված են խմբագրի կողմից՝ սևագիր ուրվագծումների հիման վրա և հիշողությամբ, կա՛մ էլ ստեղծագործվել-լրացվել են նրա կողմից (!), Կոմիտասի ոճի մմանողությամբ: Այսպիսով, Կոմիտասի հեղինակային իսկական տեքստը պետք է համարել 17 էջը: Ուշադիր քննարկումը մեզ կհամոզի, որ Կոմիտասի նախապատրաստած այդ առաջին էջերը և նրանց հաջորդող երաժշտության մեծ մասը որակական տեսակետից խիստ անհամապատասխան են միմյանց: Այդ անհամապատասխանությունն զգացվում է թե՛ մեկուսի վերծանման արժեքավորության և թե՛ ձևի զարգացման կարողության մեջ, քուն մեկողիաներում թաքնված արտահայտչական բոլոր հնարավորությունները հանդես բերելու մեջ»³:

Այս մտքերը, դժբախտաբար, հեռու են ճշմարտությունից ու ծագել են՝ Կոմիտասի վերոհիշյալ ձեռագրերին ծանոթ չլինելու և մեկ էլ Վ. Սարգսյանի շարադրած մի քանի

¹ Տես Կոմիտաս վարդապետ, Դաշնադրեալ երգեցողությունը Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, վասն միասեռ արական խմբի (վերանտեսեալ ի ձեռն Վարդան Սարգսեանի), Փարիզ, 1938:

² Տես Հայկական ՍՍՀ Կուլտուրայի Մինիստրության Գրականության և Արվեստի թանգարան, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆոնդ:

³ Ալ. Ծահվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ (19—20-րդ դդ.), Երևան, 1959, էջ 511: Տես նաև նրա՝ Комитас и армянская музыкальная культура, Ереван, 1956, էջ 303,

պարբերության չափազանց մեծ նշանակություն և փառաբանություն ընծայելու հետեւանքով:

Տեսնենք, թե ինչ է առում մա (Սարգսյանը) իր գրած «Ներածության» մեջ: Վերջինից, ինչպես և սրան նախորդող համառոտ «Հատաշարանից», որ բերված է Փարիզի Կոմիտայան հանձնաժողովի անունից, իրականում նախ իմանում ենք հետեւյալը:

Կոմիտան իր ամենածափալուն երկի՝ «Պատարագի» վրա աշխատել է երկար տարիներ, սկսած Էջմիածնում դպրապետ խմբավարի պաշտոնն ստանձնելու շրջանից մինչև գիտակցական կյանքի վերջը:

1908 թվականին, Էջմիածնում, մեծ կտավի բազմաձայն ստեղծագործությունը մշակվածության առումով արդեն իսկ բարձրագրած լինելով մի որոշակի մակարդակի, Կոմիտասը այն հնչեցրել է մաս Մայր տաճարում:

Ծարունակելով աշխատանքները, Պոլսում, 1912-ին մա ձեռնամուխ է եղել ներդաշնակած «Պատարագի» վերջնական հղկմանը, դարձյալ՝ նորովի ճշտվածն ու հարդարվածը աստիճանաբար սովորեցնելով երգեցիկ խմբին:

Աքտրից վերադառնալուց հետո, Կոմիտասը, մի անգամ ևս վերանայելով աշխատության ձեռագրերը, սկսել է մաքրագրել պարտիտուրը, բայց հիվանդության սաստկացման պատճառով այս գործը շուտով ընդհատվել է:

Անդրադառնալով «Պատարագի» հրատարակության աշխատանքներին, Վ. Սարգսյանը տեղեկացնում է, որ բացի առաջին 6 կտորների կոմիտայան մաքրագրից (բնագիր Ա), ձեռքի տակ ունեցել է ևս երկու բնագիր. Բ), այն ձեռագիրը, որը Կոմիտասը բազմիցս վերանայելով տեղ-տեղ նույնիսկ սաստիկ խճողել է իրար վրա բարդված շտկումներով (և որը Սարգսյանը համարում է «միակ ինքնագիր օրինակ»), և Գ) նույնի մի արտագրությունը, հեղինակային հղկված այն ձևի մեջ, որն ազատ է եղել վերադիր ամենավերջին ճշտումներից:

Վ. Սարգսյանը, 7-րդ կտորից սկսած, որպես հիմք ընդունել է երկրորդ բնագիրը, նուս առանձին մասերում հանդիպող վերադիր մեկից ավելի փոփոխությունների նպատակն ընթերցելու և ընտրություն կատարելու հարցում ցուցաբերելով, իր խոսքերով ասած՝ «վերին աստիճանի զգուշավոր բարեխղճություն». իսկ այն դեպքերում, երբ այդ բնագրի որևէ հատված եղել է չափազանց խճողված ու անընթերցան, մա դիմել է երրորդին:

Պետք է ասել, որ այս բնագրերից երրորդին չենք հանդիպել (ու Սարգսյանն էլ ոչինչ չի հաղորդում այն մասին, թե ո՞ր մնաց դա, օգտագործվելուց հետո): Առաջինն ու երկրորդն այժմ գտնվում են Կոմիտասի երևանյան դիվանում: Թեև պիտի նշել մաս, որ երկրորդ նույնացումը կատարելու համար անգամ մինչև վերջերս երկմտում էինք, հետևյալ պատճառով: Բ բնագրի 31բ—37բ էջերի քննությունը ցույց է տալիս, որ Կոմիտասի սկզբնական ծրագրի համաձայն, երաժշտության լադա-տոնաչանական զարգացումն այստեղ՝ սարկավագի «Գոհություն»-ից մինչև «Տէր ողորմես» պետք է ընթանար (տպագրվածի համեմատությամբ) մեկ այլ հունով: Հետո կոմպոզիտորը փոխել է մուտքությունը, և լոկ «Գոհություն» խոսքի հետ զուգորդված մեղեդիական դարձվածքը բարձրացրել է կես ձայնով: Հետևում է (հետևում է!), որ, ըստ այդմ՝ մնացած երաժշտությունը ևս (մինչև «Տէր ողորմես») պետք է կես ձայնով բարձրացնել: Եվ Սարգսյանն էլ այդպես է վարվել, սակայն առանց բացատրելու: Մինչդեռ մի շարք տարբեր մանրամասներ բժախանդորեն նշելու հետ մեկտեղ, դա ևս պետք է հիշատակվեր, որպեսզի համեմատողը առանց ավելորդ ճիգերի որոշեր հրատարակության հիմքում ընկած բնագիրը:

Ինչևհետե, այս բոլորը բավականին հրատակ է և հասկանալի: Բայց Վ. Սարգսյանը հաղորդում է մաս, որ հիշյալ բնագրերում էլ մի քանի սխալներ են եղել, որոնք մա լրացրել է «հիշողաբար» (ինչպես կատարվել է Կոմիտասի ղեկավարությամբ) կամ «հետևելով» այն ոճին, որ բանեցրել է Կոմիտասը միևնույն ձայնեղանակում ընթացող մյուս երգերը մշակելիս:

«Նկատելով որ մեր ձեռքը գտնված բնագիրներում մեջ կպակսելին ինչ-ինչ հարակից մասեր,—գրում է մա,—մեր կողմն ավելցուցիկ զանոնք մասամբ հիշողաբար և մասամբ հետևելով այն ոճին՝ որով Վարդապետը ինքն իսկ դաշնավորած է միևնույն ձայնելեջն ունեցող ուրիշ կտորներ»:

Եվ այստեղ տրվում է հետևյալ ծանոթագրությունը:

«Այդ հավելյալ մասերն են.

ա) Նմանողաբար, «Նորհուրդ խորին» մեներգի երկրորդ կեսը՝ «Որ զարդարեցեր» (էջ 2), «Վերհամբառնամք» (էջ 25), Սրբաասացություններ (էջ 60, 61, 63, 65):

Բ) Հիշողաբար, ճաշու շարականներ՝ Ծննդյան ճրագալույցի և Ծննդյան (էջ 58, 59), Դիմառություն «Գոհություն»-ի (էջ 36), «Որք հաւատով» (էջ 25): Պետքն զգահիմք ամբողջացնել բահանայի ասերգերին

ումանք (էջ 28, 39, 53, 54) և ավելացնել շարք մը ծանոթագրություններ (էջ 13, 17, 20, 22, 25, 27, 35), ինչպես նաև տալ մեկ քանի ցուցմունքներ՝ փոփոխակ «ծամամուտ»-ի վերջավորության (էջ 16), ձայնառություն և վերջ «Սաղմոս»-ի (էջ 19), վերջ ժաշու Ավետարանի (էջ 19), ձայնառություն «Հաւատամք»-ի և փոփոխակ վերջավորության (էջ 20) և այլն:

Այս պարբերությունն է ահա, որ շփոթության մեջ է գցել մի շարք մասնագետների, այդ թվում և տաղանդավոր երաժշտագետ Ալ. Ծախվերդյանին: Եվ դա ստիպում է մեզ, հանուն ճշմարտության, մեկ ատ մեկ քննել Վ. Սարգսյանի նշած կետերը, բերված հերթականությամբ, աչքի առաջ ունենալով, բացի տպագրված «Պատարագից», վերոհիշյալ առաջին բնագիրը (Ա)⁴, երկրորդը (Բ)⁵, ու նաև այլ ձեռագրեր, որոնք կհիշատակենք իր տեղում:

— «Խորհուրդ խորին»։ մենք գիտենք երկրորդ կես առածը՝ երկրորդ տունն է պարզապես («Որ զարդարեցեր»), որի եղանակի սկիզբն է միայն փոքր-ինչ տարբեր առաջին տան համեմատությամբ, իսկ մնացածը, մինչև վերջ, ներդաշնակության հետ միասին, տառացիորեն համընկնում է առաջին տան հետ (հմտ. տպագրվածի էջ 1 և 2-ը): Բայց սա ևս Սարգսյանը կատարել է մասամբ հետևելով Նիկողոս Թաշճյանի ձայնագրած⁶ ու Մ. Եկմալյանի մշակած⁷ պատարագներին, նկատած չլինելով Կոմիտասի մի նշումը, որ այլ բան է պահանջում: Քննարկվող «ծանր» երգի երկրորդ տան նկատմամբ Կոմիտասը տարբեր ծամանակներում տարբեր մոտեցում է ցուցաբերել, իսկ վերջին անգամ, մաքրագիր օրինակում, նա ցուցում է թողել՝ այդ տունը կատարել ըստ նույն երգի անմիջապես հետևող «չափաւոր» տարբերակի համապատասխան հատվածի⁸:

⁴ Գրականության և Արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ, Այուր ՆՈ 625:

⁵ Կոմիտաս վարդապետ, Երգեցողությունը Սրբոյ Պատարագի վասն բազմաձայն արական խմբի, նույն տեղում, Այուր ՆՈ 622:

⁶ Տես Զայնագրեալ երգեցողությունը Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 198:

⁷ Տես Երգեցողությունը Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ, Լեյպցիգ, 1896, էջ 178:

⁸ Տես բն. Ա, էջ 1բ, որտեղ կա՝ «զարումանկ» Որ զարդարեցեր՝ էջ 2» նշումը. և էջ 2, որտեղ նույնպես կա անցման համապատասխան նշանը: Առ այս պետք է վկայակոչել Կոմիտասի Երևանյան դիվանի ՆՈ 449/16 Այուր ՆՈ ևս, որ մեկ թերթի վրա գետնելված են «Խորհուրդ խորին»-ի երկու

— «Վերհամբառնամք»։ երաժշտությամբ (թե՛ եղանակով և թե՛ ներդաշնակությամբ) տառացիորեն համընկնում է նախորդ, 13-րդ համարի («Քրիստոս ի մէջ մեր»-ի) երաժշտության հետ (հմտ. տպագրվածի էջ 24, 25 և 26): Խոսքերն էլ հայտնի են Եկմալյանի «Պատարագ»-ից, որ առկա են՝ սարկավագի «Որք հաւատով»-ի հետ միասին՝ «Ի հանդիսաւոր աւուրա» ենթախորագրի տակ (Եկմալյան, էջ 124):

— Սրբասացություններ՝ էջ 62, 63, 66, 67: Տպագրվածի սույն (հատուկ սրբագրված)⁹ էջերում գետնելված են Կոմիտասի նախատեսած երեք¹⁰ սրբասացություններից երկուսը. «Հրեշտակային կարգաւորութեամբ» և «Բազմութիւնք հրեշտակաց», մենք գային ու խմբերգային մասերով:

Սրանք իրոք չկան Բ բնագրում, ու Կոմիտասի մյուս ձեռագրերի մէջ ևս, գոնե առայժմ, չեն հանդիպում: Կարծես իրավական բոլոր հիմքերը կան ընդունելու, որ երկու սրբասացությունները Վ. Սարգսյանն է ավելացրել՝ «Նմանողաբար»: Խնդիրն այն է, որ սկզբունքորեն հնարավոր է, իհարկե, մի եղանակ ներդաշնակել մեկ այլ հեղինակի ոճի մամուղությամբ: Բայց ինչպես կարելի է բուն եղանակը (մայր եղանակը) «գրի առնել» մի ուրիշ եղանակի մամուղությամբ: Չէ՞ որ, «Հրեշտակային»-ի ու «Բազմութիւնք»-ի մենքերգային կարևորագույն մասերի եղանակները տարբեր են «Ով է որպէս»-ի նույն հատվածի եղանակից (ինչքան էլ որ մի-երկու ընդհանուր պտույտներ են պարունակում):

Փաստ է նաև, որ խնդրո առարկա երկու սրբասացությունները Եկմալյանի «Պատարագի» նույն երգերի հետ հարաբերում են ճիշտ այնպես, ինչպես «Ով է որպէս»-ը նույն Եկմալյանի հիշյալ ստեղծագործության համանուն կտորին (թե՛ եղանակների գրառման և թե՛ ներդաշնակության առումով): Արդ, «ապագա քննադատը», որին դիմում է Սարգսյանը, լավագույն դեպքում (մտածելով միայն վերջինիս օգտին) կարող է հանգել եզրակացության, որ նա երկու

տներն էլ. առաջինը՝ ծանր, իսկ երկրորդը՝ ճիշտ չափաւոր ձևով:

⁹ «Ներածություն»-ում սրբասացությունների էջերը սխալմամբ տպագրված են՝ 60, 61, 63, 65, որ ուղղված է հրատարակության վերջում, «վիճակների» ցանկում: Հաշվի ենք առել դա:

¹⁰ Երրորդն է «Ով է որպէս Տեր Աստուած մեր», որը թե՛ մենքերգային «ծանր» և թե՛ «չափաւոր» հատվածներով լիովին համընկնում է Կոմիտասի ձեռագրում եղածի հետ, նկատի առնելով վերադիր սրբագրությունները ևս, որոնք մեծ մասամբ վերծանված են հաջող (հմտ. բն. Բ, էջ 20ա—21ա):

սրբասացությունները ավելացնելիս աչքի առաջ ունեցել է Եկմայանի «Պատարագը» եղանակների ամփոփումն ու խտացումը, ինչպես և ներդաշնակությունը իրագործելով ըստ Կոմիտասյան ըմբռնումների (թեև ինքը Սարգսյանը այսպես չի բացատրում):

Բայց նա («ապագա քննադատը» ուզում եմ ասել) կարող է մտածել նաև Կոմիտասի օգտին: Ինչպես գիտենք, Սարգսյանը գտնում է, որ Կոմիտասը «նույն կաղապարյալ ձևով» չէր մշակի երեք սրբասացությունները: Մենք «կաղապարյալ ձև» չենք տեսնում դրանց մեջ, այլ մոտիկություն: Եվ միթե «Սուրբ սուրբ»-ին հետևող № № 16, 17 և 18 կտորները, օրինակ, որոնք Կոմիտասի գրչի արգասիքն են, ամեն տեսակետով նույնքան մոտիկ չե՞ն իրար, ինչքան քննարկվող սրբասացությունները: Մի այլ կարևոր հանգամանք էլ այն է, որ «Հրեշտակային կարգաւորութեամբ»-ի մասնավորապես խմբերգային մասը («Հազարաց հրեշտակապետք») եղանակով համաման է ոչ միայն «Ով է որպէս»-ի նույն մասին («Հաւատարիմ եղև»), այլև «Մարմին տէրուհական» և «Սուրբ Աստուած» երգերին: Այնպես որ, վերջինիս մշակման էսքիզներն էլ (որպիսիք են, ասենք՝ Կոմիտասյան դիվանի № 395 նյութը, էջ 1, № 469 նյութը, էջ 4, կամ նմանները) կարող էին հիմք ծառայել (և ամենայն հավանականությամբ ծառայել են) «Հազարաց հրեշտակապետք»-ի մարմնավորման համար ևս:

Ինչպես էլ որ է, այստեղ վերջանում են «նմանողաբար» ավելացված համարներն ու սկսվում՝ «հիշողաբարները»:

— Ծննդյան Ծրագրաւոյցի և Ծննդյան՝ Ծաշու շարականներ, էջ 58, 59: Խոսքն այստեղ երկու փոքր շարականների մասին է՝ «Մեծացուցէ անձն իմ գտէր» և «Սուրբ զԱստուածածինն», որոնք Սարգսյանը իրոք վերականգնել է հիշողությամբ, և որոնք սրբագրելի են մի չորրորդ քնագրի ընձեռած տվյալներով: Դա Կոմիտասի «Պատարագի» Գրիգոր Կարապետյանի իրագործած ընդօրինակությունն է, որն ընկած է ստեղծագործության Նյու Յորքյան նոր հրատարակության հիմքում¹¹:

¹¹ Երգեցողությունը Սրբոյ Պատարագի Հայաստանաց Եկեղեցւոյ, ի ձեռն Կոմիտասայ վարդապետի, վառ արական խմբի (Ցանկումը ի ձեռն Իսահակայ Արքաճառեան, ընկերակցութիւն ի ձեռն Արայի Պօհգալի), Նյու Յորք, 1968: Հրատարակության նախակցված պատմական փոքրիկ «Ակնարկ»-ում ասված է. «Պոլսոյ Երեման Ս. Խաչ նկերիցի դարաց դասու վարիչ Գրիգոր Կարապետյան—ապա եպիսկոպոս—Կոմիտաս վարդապետի ստեպ իրենց

— Դիմաւորութիւն «Գոհութիւն»-ի ասածը (տպ. էջ 36), երաժշտականորեն արտահայտված է՝ սարկավագի մի քանի փառաբանությունների սկզբնաբառերի տակ «գ» կամ «գ-ձ» ձայնադրությունը (органний пункт) նշանակելու մեջ, որ առանց այդ էլ հասկանալի է նախորդող «Գոհութիւն» խոսքի մեղեդիական դարձվածքից (տես նաև ձեռ. Ա., էջ 31բ): Հաջորդ կտորը՝ «Ստամենայնի», նույնպես առկա է ձեռագրում, բայց տպագրվածից կես տոն ցած¹²:

— «Որք հաւատով» (տպ. էջ 25). տարկավագին հատկացված երաժշտական մի պարբերություն է (միաձայն), «Քրիստոս ի մէջ մեր»-ի վերոհիշյալ նույն եղանակով: Զետեղված է «Ոմանք և զայս ասեն ի հանդիսի տօնի» խորագրի տակ «Վերահաճառմամբ»-ից առաջ, ու վերջինիս նրան ավելորդ է (այսինքն՝ ի հարկին հնարավոր է կատարել առանց սույն ձայնագրության օգնության էլ):

— Քահանայի ասերգերը՝ տպ.-ի էջ 28, 39, 53 և 54-ում, ինքնըստինքյան հասկանալի բաներ են, այնքան, որ Մ. Եկմայանն, օրինակ, դրանցից և ոչ մեկն էլ չի ձայնագրել:

— Ծանոթագրությունները՝ տպ.-ի էջ 13,

քնակարանն այցելութենն օգտվելով ընդօրինակած է Ս. Պատարագը և 1915-ին երգել տված է իր դուպրաց դասուն: Հաջորդաբար ընդօրինակած է Ս. Ծննդյան, Զորհմեքի և այլ շարականները: Խոսքավար Զարեհ Սարյան կհաստատեն որ նույնինքն Կոմիտաս վարդապետ քանիցս ներկա եղած է փորձերուն և պատարագներուն և մեներգած է: Սույն դարաց դասն առ ի երախտագիտություն հեղինակին 24 նոյեմբեր 1918 թվականին, ինքզինք կոչած է Կոմիտաս երգչախումբ և լծված է վարդապետին երաժշտության տարածման: Այս Պատարագը առաջին անգամ 1920-ին խորատիպ քաղմագրված է ձեռամբ Զարեհ Սարյանի. երկրորդ անգամ սակավաթիվ օրինակներ քաղմագրված են հեղինակին վաթսուամսակի տոնակատարության ստիվ Միացյալ երգչախումբին համար: Այս քնագրի համաձայն են՝ նոր հրատարակության մեջ ընկած ճաշու երկու շարականներն ևս:

¹² Մինչև այստեղ տոնայնական պլանը նույնն է տպագրվածի և քն. Բ-ի մեջ: Այստեղից (տպ. էջ 36, քն. Բ, էջ 31բ) մինչև «Տէր ողորմա» կտորը (տպ. էջ 44, քն. Բ, էջ 37բ) երաժշտությունը տպագրվածում կես տոն քարձր է ձեռագրի համեմատությամբ: «Տէր ողորմա»-ից մինչև վերջ նորից համընկնում են տոնայնությունները: Սակայն, տոնայնական տեսակետից թե՛ համընկնող և թե՛ չհամընկնող հատվածներում ձեռագիրն ունի մի շարք ճշտումներ ու մեղեդիի՝ խմբի մակ ձայնից մուսլ տեղափոխություններ, որոնք արտահայտված չեն տպագրվածի համապատասխան տեղերում:

17, 20, 22, 25, 27 և 35-ում, ընդհանրապես օգնում են «Պատարագի» ընթացքի ու ծավալման խնդիրներում կողմնորոշվելուն (թեև փորձված դպրապետի համար դրանք զորությամբ հասկանալի բաներ են), բացի մի քանիսից, որոնք կամ ավելորդ են, կամ՝ քննելի, ինչպես օրինակ էջ 20-ի տողատակը: Այստեղ Վ. Սարգսյանը գրում է. «Զկնի Հաատամբին մարթ է երգել զփոխանակն որ յէջ 70 և 71»: Բացում ենք նշված էջերը և տեսնում, որ այդտեղ Սարգսյանը «Հաատամբ»-ից մինչև սարկավագի «Մի ոք յերախայից» քարոզը փոխադրել է մի հնգյակ ցած, և անմիջապես հաջորդող «Մարմին տերունական» երգում ներդաշնակությունը փոխելով, վերջինիս (բայց ոչ մեղեդիի) հիմնաձայնը մեծ եռյակի չափով իջեցրել է ցած, ու առաջարկում է (ինչպես ներածության մեջ էլ) այս բոլորը կատարել որպես հնարավոր տարբերակ:

Արդ, համեմատելով Կոմիտասի հարդարած երաժշտությունը (տպ-ի էջ 20—22) Վ. Սարգսյանի առաջարկած տարբերակի հետ, նկատում ենք, որ վերջինում համահարթվում են մեծ վարպետի նախատեսած լադա-տոնայնական ու ձայնեղանակային տարբեր ոլորտների մի շարք հետաքրքիր համադրումները: Սարգսյանը ներածության մեջ հաղորդում է, որ Կոմիտասը ինքը ևս մտադրված է եղել իրագործել նման մի տարբերակ: «Վարդապետը գրի չէ առած այս փոփոխումը,—տեղեկացնում է նա,—այլ բավականացած է իր մտածումը նշանակել երկու բառով լուսանցքի մեջ»: Ամեն դեպքում՝ առաջարկված տարբերակը գեղարվեստորեն զիջում է նախնականին:

—Փոփոխակ «Ժամամուտի» վերջավորության (տպ-ի էջ 18). Կոմիտասի նշանակած մի քանի ձայնաստիճանների փոխադրումն է հնգյակ վեր: Հնարավոր է որպես տարբերակ, բայց անհրաժեշտ չէ (ի հարկին կարելի է կատարել առանց այդ փոխադրության էլ):

—Զայնառությունն և վերջ «Սաղմոս»-ի (տպ-ի էջ 19): «Զայնառություն» ասածը՝ սաղմոսն սկսելու ձայնաստիճանն է, որ առանց այդ էլ հասկանալի է (ինչպես և վերջավորելու ձևը), նախորդ «ալելուիա»-ի մեղեդիական դարձվածքից, զի վերջինիս պաշտոններից մեկն էլ ճիշտ այդ է (հաջորդող սաղմոսի ձայնեղանակն ու ձայնաստիճանը ցույց տալ):

—Վերջ Ծաշու Ավետարանի (տպ-ի էջ 19). երեք ձայնաստիճանից բաղկացած մի վերջավորություն է, որ ավելի քան որոշակի է նախորդող սկզբնավորությունից:

Զայնառություն «Հաատամբ»-ի և փոփոխակ վերջավորության (տպ-ի էջ 20):

«Զայնառությունն» այստեղ ևս նշանակում է՝ ասերգի սկզբնաձևը, որի հիմնաձայնը պարզ է նախորդ «Փառք քեզ Տեր»-ից (այս և նման տիպի մանրութները, նորեն կրկնենք, Մ. Եկմայանն, օրինակ, չի էլ նշանակել). իսկ վերջավորության փոփոխակը, դարձյալ՝ հնարավոր, բայց ոչ անհրաժեշտ փոքրիկ մի տարբերակ է:

Ավարտելով Վ. Սարգսյանի նշած բոլոր կետերի քննությունը, հարկ է ընդգծել, որ մենք բնավ մտադիր չենք նախնայնություն կատարած գնահատելի աշխատանքը: Մեր նպատակն է մատնացույց անել, որ այդ աշխատանքը կրել է լոկ խմբագրական բնույթ: Այն էլ նրա համար միայն, որ Սարգսյանի շարադրած «Ներածության» մի փոքր պարբերությունը մեծ թուրիմացության առիթ է ծառայել: Վերը մեր քննարկած երաժշտական կտորներից մի քանիսի մշակման վերջին փուլերը ներկայացնող կամ այդ փուլերին մոտ գտնվող ձեռագրեր չկարողացանք ցույց տալ: Դրանք կարող են և կորած լինել: Անկախ սույն հանգամանքից՝ հենվելով կատարված քննության վրա, մեզ հետաքրքրող ողջ «Պատարագի» մշակման վերաբերությամբ պետք է հաստատենք Կոմիտասի անվիճելի հեղինակությունը (մի կողմ թողնելով Վ. Սարգսյանի՝ որպես հնարավոր, բայց ոչ անհրաժեշտ տարբերակ բերած հատվածները):

Որպեսզի մեկ էլ չվերադառնանք Սարգսյանի շարադրած «Ներածության», նշենք նաև, որ այնտեղ «Պատարագի» կատարման առանձնահատկությունների վերաբերյալ ևս արված է քննելի մի նկատողություն: «Ոչ մեկ նվագարան պետք է ընկերանա երգեցողությանը»—գրում է նա կտորիկ կերպով: Բայց սա Կոմիտասի՝ պահանջն է: Այդ մասին Սարգսյանը ոչինչ չի ասում: Համեմայն դեպս իմանալի է, որ «Երից մանկանց» օրհնության Կոմիտասյան մշակումներից մեկն, օրինակ, գործիքային նվագակցություն ունի¹³:

Գալով Այ. Ծախվերդյանին, անհրաժեշտ է ավելացնել, որ նա, ցավոք, իր վրա պատասխանատվություն է վերցրել՝ Վ. Սարգսյանի կողմից ամբողջովին Կոմիտասին ընծայվող կտորների նկատմամբ ևս ակնարկելու խմբագրական ինչ-որ միջամտության:

Այսպես, «Պատարագի» մասին նա գրում է. «Եթե առաջին վեց կտորը (հրատարակության առաջին 17 էջերը) արժանի են մանրամասն վերլուծության, որը կբացահայտի Կոմիտասյան պոլիֆոնիայի սքան-

¹³ Գրականության և Արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ, նյութ № 486/85:

չելի առանձնահատկությունները, ապա հաջորդ էպիգրոներում ամեն ինչ համարժեք ու նշանակալից չէ: Օրինակ, № 16, 17, 18, 30-ա կտորները պարզապես դուրս են ընկնում Կոմիտասի երաժշտության ոճից: Դրանք լրացված են գամմայի աստիճաններով ընթացող ինչ-որ անտարբեր, կոկված շարժումով¹⁴:

Իրողությունն այն է, սակայն, որ նախ՝ Ծափերդյանի հիշատակած չորս կտորներն էլ Բ քնագրում, որտեղ նրանք գրված են շատ մաքուր և ընթերցելի, տառացիորեն համընկնում են տպագրվածի հետ¹⁵: Եվ հետո՝ հիշյալ կտորների գեղարվեստական արժեքը ևս բոլորովին այն չէ, ինչ հետևում է Ծափերդյանի խոսքերից:

Դրանցից № 30-ա-ն, որ եզրափակող պաշտոն ունի («Եղիցի անուն Տեառն օրհնեալ») հանրագումարող (ֆինալային) հիանալի զգացողությամբ մշակված փայլուն մի կտոր է. իսկ № 16, 17 և 18-ը՝ երգային լուսավոր, թովիչ համարներ են, խաղաղ, հիացական կամ գոհաբանական բնույթի, որոնցում, բնականաբար, բացառա է դրամատիկական բախումը, լարվածությունը կամ պոլիֆոնիկ քարդ հյուսվածքը և դա է, որ չի գոհացնում Ծափերդյանին: Սակայն չի կարելի կոմպոզիտորից պահանջել նման բաներ այնտեղ, որտեղ դրանք պետք չէ որ լինեն բուն մտահղացման իսկ կապված նկատառումներով:

Վերջապես, Ծափերդյանը ինչ-որ խորհրդավոր պատճառներով է ուզում բացատրել նաև այն իրողությունը, որ Կոմիտասի «Պատարագը» չընդհանրացավ, ինչպես Եկմալյանին: Մինչդեռ դա ունի իր ավելի քան պարզ բացատրությունը: Մ. Եկմալյանի «Պատարագը» տակավին 1895 թվականին հայրապետական կոնդակով պաշտոնապես ընդունվեց հայ եկեղեցու կողմից. իսկ Կոմիտասի «Պատարագը» լույս տեսավ միայն 1933-ին: Բացի այդ, Կոմիտասի «Պատարագը» նախատեսված լինելով նաև (ու ճիշտն ասած, նույնիսկ գլխավորապես) համերգային կատարման համար, իր տոնայնական մեծ զարգացմամբ (a-moll-ից Des dur!), և գործիքային նվագակցության նկատմամբ եկեղեցական շրջ-

ջաններում դեռևս մոտավոր անցյալում գոյություն ունեցած նախապաշարվածության պայմաններում, մատչելի կարող էր լինել լոկ մասնագիտական քարձր մակարդակ ունեցող երգեցիկ խմբերին:

Ամփոփենք:

Ոչ միայն բացառված չէ, այլև խիստ հավանական է, որ եթե Կոմիտասը հնարավորություն ունենար մինչև վերջ մաքրագրելու «Պատարագի» պարտիտուրը, այդ աշխատանքի ընթացքում ևս ինչ-ինչ ճշտումներ, լրացումներ ու փոփոխություններ կմտցներ նրա մեջ:

Վ. Սարգսյանը շնորհակալ գործ է արել հրատարակության պատրաստելով և լույս ընծայելով հանձարեղ երգահարդարի մեծածավալ ստեղծագործությունը՝ «Պատարագը»: Բայց վերջինս կարիք ունի վերահրատարակման Կոմիտասի համապատասխան ձեռագրերի, նրա կատարած վերադիր սրբագրությունների, ինչպես և միևնույն երգի մշակման նրա թողած ավարտուն տարբերակների հնարավորին չափ լրիվ ընդգրկումով:

Անկախ այս բոլորից, քննարկվող «Պատարագը» ներկա (հրատարակված) վիճակով էլ, իր ամենամեծ ու ամենաէական մասով Կոմիտասի երկարամյա աշխատանքների արգասիքն է՝ ոճական ու որակական տեսակետներով մի կոտ ամբողջություն, որը հիմնականում ավարտված է և ունի գեղարվեստական մեծ արժեք¹⁶:

Ստորև առաջ ենք բերում Կոմիտասի Երևանյան դիվանի հիշյալ № 449/16 նյութը (նրա պատկերը):

Այն ներկայացնում է թանաքով գրված, բայց ըստ էության սևագիր մի թերթ, որի առաջին երեսին արտագրված է «Երրորդ խորին» երգի առաջին տունը, «ծանր» եղանակով (թող որ սկզբից մի տող պակաս ու մնացածի վրա էլ՝ մատիտով խաչաձև թեթևակի խազված), իսկ երկրորդ երեսին՝ երկրորդ տունը «չափաւոր» եղանակով:

Ինչպես հավաստեցինք իր տեղում, վկայակոչվող նյութը շահեկան է հատկապես նրանով, որ ցույց է տալիս զգեստավորման շարականի «ծանր» ու «չափաւոր» տարբերակների համադրման այն կերպը (գրական բնագրի առաջին երկու տների շրջանակներում), որին հակված է եղել Կոմիտասը և թողել համապատասխան նշումներ:

¹⁶ Այդ մասին ավելի մանրամասն տես մեր հոդվածը՝ Կոմիտասի «Պատարագը», «Սովետական արվեստ», Երևան, 1969, № 10:

¹⁴ Այ. Ծափերդյան, նշվ. աշխ.-ը, էջ 514:

¹⁵ Տես քն. Բ., էջ 26ա-բ, 27ա-բ, 27բ-28ա և 47ա-48ա (այստեղ միայն № 16 կտորը մատիտով նախապես գրվածից բացի, որ դարձյալ նույնն է տպագրվածի հետ, ունի վերադիր մի շարք շտկումներ հայկական ու եվրոպական ձայնանշաններով, որոնց մի մասը նկատառելի, մյուսը՝ տակավին բնական է):

Handwritten musical score for the song "ԷԶՄԻԱՄԻՆ" (Ezmi Amin). The score is written on four systems of staves. The first system has a treble clef and a key signature of one sharp (F#). The lyrics are in Armenian. The second system has a treble clef and a key signature of one sharp. The lyrics are in Armenian. The third system has a treble clef and a key signature of one sharp. The lyrics are in Armenian. The fourth system has a treble clef and a key signature of one sharp. The lyrics are in Armenian. The score is handwritten and includes various musical notations such as notes, rests, and bar lines.

System 1:
Lyrics: Է՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ

System 2:
Lyrics: Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ

System 3:
Lyrics: Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ

System 4:
Lyrics: Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ
Ե՛մ Ե՛մ

Handwritten musical score for a choir, featuring four staves with lyrics in Armenian and English. The lyrics are a hymn about the resurrection of Christ.

Staff 1 (Soprano):

ap yarp gar nt yhr yf rhl yf can rhl h. ~~h. h. h. h.~~
 vor gar ta re Wer ve rin be deu loun i ha-ra.

Staff 2 (Alto):

ap yarp gar nt yhr yf rhl yf can rhl h. ju nu
 vor gar ta re Wer ve rin be deu loun i ha-ra.

Staff 3 (Tenor):

ap yarp gar nt yhr yf rhl yf can rhl h. ju nu
 vor gar ta re Wer ve rin be deu loun i ha-ra.

Staff 4 (Bass):

ap yarp gar nt yhr yf rhl yf can rhl h. ju nu
 vor gar ta re Wer ve rin be deu loun i ha-ra.

Staff 5 (Soprano):

qumw de la may in ugh yf pu yadsharof yquwv hrt zh
 garl an ma doug lou sauyr - ke'ra bandz parak of dats hrt zhi.

Staff 6 (Alto):

qumw de la may in ugh yf pu yadsharof yquwv hrt zh
 garl an ma doug lou sauyr - ke'ra bandz parak of dats hrt zhi.

Staff 7 (Tenor):

qumw de la may in ugh yf pu yadsharof yquwv hrt zh
 garl an ma doug lou sauyr - ke'ra bandz parak of dats hrt zhi.

Staff 8 (Bass):

qumw de la may in ugh yf pu yadsharof yquwv hrt zh
 garl an ma doug lou sauyr - ke'ra bandz parak of dats hrt zhi.

Staff 9 (Soprano):

huy
 nall.

Staff 10 (Alto):


huy
 nall.

Staff 11 (Tenor):

huy
 nall.

Staff 12 (Bass):

huy
 nall.



ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՒՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՊՍԱԿ ԱԲԵՂԱ

«Բազմավեպի» 1978-ի երկրորդ համարում հրատարակված Հարություն Քյուրտյանի «Կիրակոս Ծաղկող» հոդվածի վերջում կան այսպիսի տողեր. «Պատահաբար, օր մը Մոնրեալի (Կանադա) թանգարանը այցելութեանս, ցուցադրուած գլուխայ հայերէն Աւետարանէ մը փրցուցած քանի մը թերթեր, որոնցմէ երեք հատը տնօրինական նկարներ էին: ... Ինծի անծանոթ այս մանրանկարիչը ընտիր վարպետ մըն է, որուն մանրանկարները հոգեկան գոհացում կու տան: Հոդվածի հետ ներկայացված են նաև այդ մանրանկարների լուսանկարները: Նկատի ունենալով այդ անհայտ հեղինակի և, ընդհանրապես, Վասպուրականի XIV—XV դդ. մի շարք շնորհալի վարպետների ստեղծագործությունները, հանգուցյալ քանասերը իր խոսքըն ավարտում է այսպես. «Պետք է մերժել այն սխալ և անհիմն կարծիքը՝ որ հայ մանրանկարչությունը իր ստեղծագործական կարողությունը կը կորսնցնէ Թորոս Տարօնացիէ եւ Սարգիս Պիծակէ վերջ: ԺԴ դարէն մինչեւ ԺԶ դարու վերջը, ընդհակառակը, հայ մանրանկարչությունը զմայլելի յղացումներ եւ արտայայտություններ ունի առատօրէն, ատեն մը երբ քաղաքական ու տնտեսական պայմանները այնքա՛ն աննպաստ էին. ապիկա անասելի հրաշք մըն է...»¹:

Մոնրեալի թանգարանում պահվող Վասպուրականի մանրանկարչության այդ ըն-

տիր քեկորները շուտով գրավում են նաև մեր միջնադարյան արվեստի հմուտ գիտակ Սիրարփի Տեր-Ներսեսյանի ուշադրությունը: Հ. Քյուրտյանի հոդվածի հրատարակումից մի քանի տարի անց «Հանդէս ամսօրեայի» 1978 թ. համար մեկում զետեղվեց Ս. Տեր-Ներսեսյանի «Վասպուրականի մի Ավետարանի ցրված թերթերը» հանգամանակից հոդվածը (անգլերեն), իլյուստրատիվ հարուստ նյութերով: Ս. Տեր-Ներսեսյանին ևս անհայտ է մնում այդ տաղանդավոր նկարչի ով լինելը: Սակայն փորձառու արվեստագետի աչքը անմիջապես նկատում է մեկ ուրիշ, ոչ պակաս հետաքրքրական քան. Մոնրեալի թանգարանի մանրանկարների անհայտ հեղինակին է պատկանում նաև ԱՄՆ-ի Սիթլիի արվեստների թանգարանում պահվող հայկական ձեռագրի մնացորդները: Սիրարփի Տեր-Ներսեսյանը ենթադրում է նույնիսկ, որ Մոնրեալի և Սիթլիի թանգարանների այդ քեկորները մեկ ձեռագրի մասեր են կազմում: Իհարկէ, կարելի է անվերապահորեն համաձայնել արվեստի հմուտ գիտակի հետ, և դա ժխտելու որևէ հիմք չունենք: Միայն թե մենք այդ թերթերը չենք տեսել, և, մանավանդ, մեր ձեռքի տակ եղած ոչ բավարար նյութերը ստիպում են դիմել զգուշավորության՝ ձեռնպահ մնալով նման եզրակացությունից²:

¹ «Բազմավեպ», 1978, թիվ 2, էջ 225—226:

² Ջարմանալիորեն մեր ձեռքի տակ եղած լուսանկարներում Մոնրեալի և Սիթլիի ձեռագրերը նշված են տարբեր չափերով՝ 24×18 և 11×7:

Ինչևէ, հողավածում չափազանց ուսանելի են Ս. Տեր-Ներսեսյանի կատարած ոճական-իկոնոգրաֆիկ վերլուծություններն ու բաղդատությունները: Անապատ գիտելիքներն ու լայն իմացությունը հայ մշակույթի պատկանելի երախտավորին հնարավորություն է ընձեռել ոչ միայն լուսարանել Վասպուրականի այդ շնորհալի նկարչի աշխատանքները, որոնք, ի պատիվ մեր ժողովրդի, զարդարում են Սիթիի և Մոն-



Նկար 1

բեալի արվեստների թանգարանները, այլև՝ համեմատական հարուստ նյութերի օգնությամբ, մի հայացք ձգել Վասպուրականում նախապատվություն տված կանոնական շարի առանձին թեմաների վրա (հատկապես հրաշագործությունների), ցույց տալով դրանց ինքնատիպություններն ու ընդհանրությունները ողջ միջնադարյան արվեստի առումով:

Ս. Տեր-Ներսեսյանը իրավացիորեն նկատել է, որ անհայտ այդ հեղինակը կապվում է «Ծերունյան» դպրոցի շրջանակների հետ. ի ապացույց դրա համեմատության կարգով ներկայացվում են Էրմիտաժում գտնվող Ծերուն ծաղկողի 1395 թ. (VP—1010), Փարիզի ազգային թանգարանի № 333 (XIV—XV) և Հալեպի հայկական

№ 33 (XIV—XV դդ.) Ավետարաններից մի շարք լուսանկարներ...

Սակայն մինչ այդ հողավածները, դեռևս 1972 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի հասցեով ԱՄՆ-ի Սիթիի արվեստների թանգարանից ստացվել էր մի ծրար, որի մեջ 24×18 չափի ձեռագրից (RECTO PANEL 9³/4×6¹/2) երկու լուսանկար (Ս. Տեր-Ներսեսյանը 1976 թ. դրանց էր անդրադարձել): Դրանք ներկայացնում են Տերունական չորս թեմա՝ Կանայի հարսանիքը, Պետրոսի թերահավատությունը ծովում, Անթառապյոյի ապաքինումը և Դիվանարի բուժումը: Ստացված այդ մանրանկարների կերպարները կատարման ոճի առումով զարմանալիորեն մեզ ծանոթ թվացին: Առեղծվածը իրեն երկար պատեցնել չտվեց: Մենք մտաբերեցինք Մատենադարանում պահվող № 4826 Ավետարանի մանրանկարները...

1975 թ. արվեստագիտության դոկտոր Տ. Ա. Իզմայիլովան մեզ հանձնեց մի ծրար, որն անձամբ իր անունով ստացվել էր Մոնթրալի արվեստների Ուֆֆիցիի թանգարանից: Այս դեպքում էլ ծրարի մեջ կային լուսանկարներ՝ թվով ինը: Մանրագրին համեմատությունները ցույց տվեցին, որ այդտեղ ներկայացված մանրանկարները ևս, ոճական առումով, հար և նման են Սիթիի թանգարանի և Մատենադարանի № 4826 ձեռագրի պատկերներին: Առկա էր նույն ձեռքը: Վասպուրականի շնորհաշատ մանրանկարչի աշխատանքները ցրվել են աշխարհի տարբեր վայրեր՝ իր գեղագիտական հաճույքը պատճառելով այդ երկրների արվեստասեր հասարակայնությանը:

Այժմ մենք ընդհուպ մոտենում ենք այն հարցին, թե ո՞վ է այդ մանրանկարների հեղինակը, որտե՞ղ է ապրել և ստեղծագործել ու ե՞րբ: Այս հարցերը, որոնց պատասխանը այնքան հետաքրքրում էր հանգուցյալ Հարություն Քյուրտյանին, և որն այսօր պետք է որախացնի մեծանուն Սիրարփի Տեր-Ներսեսյանին, գտնում ենք Մաշտոցի անվան Մատենադարանի № 4826 ձեռագրում:

Մատենադարանի № 4826 Ավետարանի ընդօրինակվել է 1420 թվականին Վասպուրականի Նարեկ գյուղում: Մեջ ենք բերում ձեռագրի գրիչ Պասկի (Իզիտի) թողած հիշատակարանի կարևոր հատվածները. «...Եւ արդ, ես՝ յնտինս ի կրանաւորաց և անարժանս ի մանկունս եկեղեցոյ Իզիտ անուն քանզի խորշեցայ ի Պասկ անանէ, որ Նախավկային միայն վայելէ, հրաման տեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ՝ Յոր կոչումն կոչեցարոք՝

ի նմին կացջիք, սկսայ գրել զսուրբ Աւետարանս անարժան ձեռագրս:

Գրեցաւ սա ի գեաղս, որ կոչի Նարեկ, ձեռամբ սուտանուն կրօնատրի Իգիտի, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցայց՝ Յարութեանս, Աստուածածնիս, Առաքելոյս և Սուրբ Գրիգորիս, և առ գերեզմանի տիեզերալոր Գրիգոր վարդապետի Նարեկացոյ, ի թուականութեանս Հայոց ՊԿԹ (1420)....»³:


Ի դէպ, Իգիտ արեղայի անունը մեր ձեռագրերում հիշատակվում է մեկ այլ անգամ ևս (Մատ. № 5600, Մեկնություն, 1354 թ.), որպես հետագա վաճառող. «Եւ ընդ յառաջին ստացողացն և զվերջին ստացալ սորայ զՅակոբ վարդապետ Ասպիւրնկցի և զԱնդրիաս եղբայր իմ յիշեցէք ի Քրիստոս աստուած զի գնեցի ԳՄԿ (360)-ն յԻգիտ արեղաէն, և շատ մունաթով և երախտի ետ...»⁴:

Իգիտի անունը տեղ է գտել նաև Հ. Անադյանի անձնանունների բառարանում. «Իգիտ, որ կեղծ անուն, որ տալիս է իրեն համետաությամբ Պսակ կրոնավորը, որը օրինակել է մի Ավետարան, Նարեկ գրողում, 1420 թ.: Ենթադրում եմ, որ բուն անունը Պսակ էր և ինքն էլ գիտեր, որ Ստեփաննոս անունը նշանակում է «Պսակ»: Ընտրելով Իգիտ անունը, թյուրիմացությամբ հասել է պրս. izid ձևին, որ նշանակում է «Աստուած». մինչդեռ իր նպատակը եղած պիտի լինի արաբ. Yezid Մուավիդ ամիրապետի որդին, որ Ալիի գերդաստանը բնաջինջ արեց. որա համար էլ իսլամների համար ատելի դարձավ և եգիտ այժմը նշանակում է «Յուդա, դավաճան, սատանա»⁵:

Թեև հիշատակարանում Իգիտը իրեն միայն գրիչ է համարում (ինչպես մեր շատ մանրանկարիչները), սակայն մի քանի ծանրակշիռ փաստեր (մանրանկարների մեջ հանդիպող բացատրությունների նույնությունը բնագրի ձեռագրառճի հետ, լուսանցագրողների և գրությունների միասնությունը և այլն) անվերապահորեն ցույց են տալիս այդ ձեռագրի գրչի նաև նկարիչ լինելը: Ի դէպ, բացարձակապես նույն ձեռագրառճն է նաև Սիթլիի և Մոնրեալի մանրանկարների մեջ: Իգիտ-Պսակի համար խիստ բնորոշ են հատկապես «Փ», «Հ», «Շ», «Պ» և մի քանի այլ տառեր, ո-

րոնք իրենց ուրույն ձևերով դրսևորվում են և՛ Մոնրեալի, և՛ Սիթլիի, և՛ Մատենադարանի ձեռագրերում:

Ուրիշ տվյալներ Իգիտի մասին չունենք⁶: Մանրանկարների պատկերագրական և ոճական առանձնահատկություններից ելնելով (որը հիմնական շարժառիթն է) մենք այդ ձեռագիրը ընդգրկել ենք Ծերունի դրպրոցի խմբում: Ընդ որում, բուն ձեռագրի գրչության վայրը՝ Նարեկը, իր հերթին



Նկար 2

մտնում է Ուտանի մշակութային կյանքի շրջանակների մեջ և Ուտանից էլ ընդամենը մի քանի կիլոմետր հարավ է գտնվում:

Մատենադարանի ձեռագիրը այնքան էլ բարվոք վիճակում չէ, թեև վերջին տարիներին թերթերը հաջող կերպով վերանորոգված են:

⁶ Սեզ ուղարկված լուսանկարների հետևում կան ալպիսի տեղեկություններ. Մոնրեալից՝ «The Montreal Museum of fine arts 49-50. dv. 9: Armentan-15 th century, 11 x 7z inches. Gift of F. Cleveland Morgan, 1950».

Սիթլիից՝ «Seattle art Museum: Eugene Fuller Memorial collection, so. BZ 36. 1: Armentan, Dated 1420».

³ Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 242-243:

⁴ Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 406:

⁵ Հ. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, Բ, Երևան, 1944, էջ 381:

Թերթ 2ր-ից մինչև 7ա-ն գրադեցնում են խորանները՝ «տեղական-վապուրական-յան» բնորոշ ձևերով ու գունագեղությամբ (միայն թե տպավորությունը փոքր-ինչ խաթարվում է ձեռագրի խումսացածության պատճառով):

Խորանագարդերում տպավորիչ են հատկապես պաշտածն կամարները՝ հնամենի ոտնքազարդերով: Ինչպես միշտ դրանք հեղինակում են երեքական պյունների վրա: Էս-



Նկար 3

մարների բուսամոտիվներն ու թռչնապատկերները հիմնականում կրկնում են Ծերունի ձեռագրերի՝ նույն զարդաները: Ի դեպ, առտեղ խորանները լրացված չեն Ավետարանների համաքարքառներով (աչդպես է նաև Վարդան Արծկեցու 1319 թ. ձեռագրում): Փաստորեն ստեղծվել են զուտ զարդա-դեկորատիվ թերթեր⁷:

Թեմատիկ պատկերների շարքը սկսվում է 7բ էջից՝ «Աբրահամի զոհաբերությունից» (նկ. 1), որը ներկայացնում է Վապուրականում ընդունված հայտնի տարբերակնե-

րից մեկը⁸: Նույն էջի ցածի մասում «Ավետումն» է, Մարիամի՝ նստած թել մանկու տարբերակով (նկ. 1):

«Ծնունդ»-ը (նկ. 2), «Տյունընդառաջ» և «Ակրտությունը» կրկին Ծերունյան համատարած սխեմաներով են⁹: 9ա—9բ էջերը նվիրված են Հիսուսի հրաշագործություններին՝ «Հարսանիքը Կանայում», «Պետրոսի թերահավատությունը» (նկ. 3), «Անդամալուծի և դիվահարի բուժումը»: Ի դեպ, այդ չորս թեմաները նման սխեմաներով հանդիպում են նաև Սիթիի թանգարանից ստացված երկու լուսանկարներում (նկ. 4. առաջինը, որ դրանք ներկայացնում են միայն Հիսուսի հրաշագործությունները): Միայն թե Մատենադարանում գտնվող ձեռագրում կերպարների թիվը փոքր-ինչ կրճատված է: Օրինակ. «Կանայի հարսանիքի» տեսարանում Հիսուսի թիկունքում միայն մեկ աշակերտ է, իսկ ժողովրդի ներկայացուցիչները երկուսն են: Սիթիի ձեռագրում դրանք համապատասխանաբար երեքն են և չորսը¹⁰:

«Խաչելության» թեման և՛ Մատենադարանի, և՛ Մոնրեալի ձեռագրերում ներկայացված է քացարձակապես նույն սխեմայով. խաչված Հիսուսի կողքին կան երկու ավագաններ, ցածում՝ միգակահարողը և սպունգ մատուցողն, և վերջապես, Մարիամն ու երիտասարդ Հովհաննեսը:

Նույնը պետք է ասել նաև «Հարության» տեսարանի կապակցությամբ, թեև Մատենադարանի ձեռագրում յուրաքանչյուր կանայք երկուսն են:

Այս ցանկով էլ վերջանում է Մատենադարանի ձեռագրի թեմատիկ նկարների շարքը, որը թերի է (ոչ անսովոր երևույթ նման «տանջված» մի ձեռագրի համար): Ավետարանիչներն ու անվանաթերթերը տեղադրված են համապատասխանաբար՝ 11բ—12ա, 88բ—89ա, 140բ—141ա և 226բ—227ա էջերում, կատարված գրաֆիկ ոճով, միագույն:

Որքանով կարելի է գաղափար կազմել ստացված լուսանկարներից, թեմատիկ

⁸ Տես այդ մասին Լ. Հակոբյան, Վապուրականի մանրանկարչությունը, Ա, Նրեան, 1976, էջ 75. Նաև՝ «Ծաղկող Ծերուն քահանա», «Էջմիածին» 1974, Գ, էջ 28—33:

⁹ Տես վերը նշված մեր հոդվածը:

¹⁰ Հիմնականում այդ թեմաներին է նվիրված «Հանդէս ամսօրեացում» հրատարակված Ս. Տեր-Նիսիսյանի հոդվածը՝ "Feuilles Disperces du Evangille du Vaspurakan".

⁷ Մոնրեալի և Սիթիի թանգարաններից ստացված լուսանկարներում խորանապատկերներ չկան:

պատկերաշարը ավելի ընդարձակ է Մոն-րեալի ձեռագրում¹¹:

Ինչո՞ւ է հատկանշվում այս նկարչի արվեստը: Նրա ստեղծագործությունների համար ևս, ընդհանուր առմամբ, խորթ չէ էջի գեղանկարչական հարդարանքի «իզոկեֆալային» բնույթը: Հորինվածքների դասավորության խիստ ներդաշն ու նպատակահարմար-համաչափ կարգը, ի տարբերություն Մերունյան եռանդուն ձևերի, այստեղ մի տեսակ թեթև ու էպիկական հանգստությամբ է տրված: Հակումը դեպի հավասարակշռված կառուցվածքն ու համաչափությունը մի շարք դեպքերում պատկերվող գործողությանը նույնիսկ ծիսական տրամադրություն է հաղորդում: Թեև այդ լավ տպավորությունն է ստիպել Հ. Բյուրտյանին գրելու, որ «Մոնրեալի թանգարանին մանրանկարները (նկ. 5) ունին լավ շարադրություն, վարպետի գծագրություն, սակայն ատոմացմե առելի բան մը՝ միամտություն մը, որ մանրանկարները շատ առելի գրաւիչ կը դարձնէ»¹²:

¹¹ Մեզ մոտ եղած լուսանկարներից ճիճը ներկայացնում են տերունական պատկերներ՝ «Մուտք երուսաղեմ» «Նկանակի բաշխումը», «Ղազարոսի հարությունը», «Խաչելություն» և «Համբարձում», մեկը՝ Մարկոս ավետարանչի պատկերն է ու անվանաթերթը. չորս լուսանկարներ նվիրված են գրչության արվեստին (բնագիր և լուսանցագրեր):

¹² «Բազմավեպ», 1978, № 2, էջ 226: Հետաքրքրական է Բյուրտյանի բնութագրումը «Հարություն» տեսարանի կապակցությամբ՝ «Իբր մանրանկար երևեկայությամբ, պարզ գեղեցկությամբ, կշռում



Նկար 4

շարադրությամբ, լրացումս սքանչելի գործ մըն է: Երեք իդարեր կանանց Յիսուսի գերեզմանը այցելելը» (էջ 226):



Նկար 5

Հարմանալի ճկուն է նկարչի ձեռքը թե՛ գծանկարում և թե՛ գույների օգտագործման մեջ: Ազնիվ մի տպավորություն էս ստանում նրա աշխատանքից:

Որպես սկզբունք մեր նկարչի գունաշարի լեյտմոտիվը (գլխավոր տարրը) քնքուշ և հնչեղ վարդագույնն է ու կանաչը, որոնք այնքան մեղմորեն կապվում են մանուշակագույնի տվող շագանակագույնի հետ: Այն երբեմն հագեցված հյութեղ է, երբեմն՝ թափանցիկության չափ թեթև:


Նկարչի ստեղծած կերպարներում, նրանց փոխհարաբերություններում կա էպիկական մի հանգստություն: Նրանց մեղմիկ հայացքները, մարմնի շնորհալի շարժումներն ազնվազարմ տպավորություն են մտցնում, ոգեղեն տոն հաղորդում:

Կարող ենք վստահ ասել, որ Վասպուրականի մանրանկարչական արվեստում այս նկարչի ձեռագրածը զատորոշվում է: Նրա մոտ տպավորիչ է հատկապես աչքերի պատկերման ձևը: Նրանց խոհական ու թախճոտ արտահայտությունը Վասպու-

րականում միայն Իզիտի արվեստին են բնորոշ¹³: Աչքերի ստորին թարթչագիծը բավական խորությամբ է տրվում, որի հետևանքով աչքի խնձորիկների ստորին սպիտակ մասը երևում է. թիթերը մնում են կենտրոնում: Աղեղնաձև հոնքերը փոքր-ինչ վերևից են անցնում: Հենց դա էլ ընտիր գծանկարի ու թափանցիկ նուրբ գույների հետ խոհականության և խորհրդավորության ու ասկետիզմի տպավորություն են մտցնում այդ ընտիր մանրանկարների մեջ: Ամփոփենք. Մոնրեալի և Սիթլիի արվեստների թանգարանում գտնվող հայկական նկարչազարդ պատուհիկները պատկանում են Վասպուրականի Նարեկ գյուղում XV դ. I կեսին ստեղծագործած Պաակ շնորհալի նկարչի վրձնին:

¹³ Պաակ նկարչի «ձեռքը» որոշելու լավագույն միջոցներից մեկն էլ նրա ստեղծած կերպարներում աչքերի յուրատեսիլ, միայն իրեն հատուկ պատկերման ձևն է:





ԳՆԹՈՒՆԻՆԵՐԸ՝ ԵԿԵՂԵՑԱԾԻՆԱՐԱՐ

Գնթունի իշխանական տունը պատմության թատերաբեմ է իջել մեր թվարկության առաջին դարում:

Պատմահայր Մովսես Խորենացին սկսելով իր պատմությունը Վաղարշակի (Տըրդատ Առաջին) մասին, նրան զինակցած հայ իշխանների թվում նշում է ծովագրյա (Սևանա լիճ) հողերի մի մասի կառավարիչ Գնթունի իշխաններին¹: Նա նաև պատմում է, որ երբ Վաղարշակը կազմեց իր արքունիքը, արքունիքում, որպես «զգեցուցանող», տեղ գրավեց Ջենես Գնթունին²: Բացի այդ պահպանվել ու մեր օրերն է հասել Տրդատ Առաջինի հողը Գնթունիներին պարգևելու վիճագիր հրամանագիրը, որը 1908 թվականին Ապարան գյուղում, գյուղացիներից մեկի դռանը գտել է Գալեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը:

Արձանագրության համաձայն Տիրիդատե[ս] Մեծը Մեծ Հայքի թա[գ]ավոր պարգևեց Գնթունի ցեղից Հոդոմիհրի որդուն Նիգը, Արտա....ա քաղաքը փետրվարին...

Արձանագրությունը հաստատում է Մ. Խորենացու հաղորդած տեղեկությունը. Գնթունիները արքունիքում պաշտոն ստանալուց հետո միաժամանակ ժառանգական իրավունքով դարձան հողատերեր:

Ստանալով Նիգ գավառը (հիմնականում Ապարանի, Արագածի շրջաններ, Հրազդա-

նի շրջանի մի մասը) Գնթունի իշխանները իրենց տիրապետության տասը դարերի ընթացքում այդտեղ կատարեցին ծավալուն աշխատանքներ:

Մեծ է Գնթունիների եկեղեցաշինական գործունեությունը: Բավական է ասել, որ քրիստոնեության մուտքը Հայաստանի ուրիշ ոչ մի գավառում եկեղեցիների կառուցման այնպիսի թափ չստացավ, ինչպես Նիգում: Քասաղի ավազանում 4—5-րդ դարերում քարձրացան ճարտարապետական արժեքավոր շատ կառույցներ:

Գնթունիների տոհմի եկեղեցական կառույցներից վաղագույնը Ապարան ավանում Քառասուն աղբյուրների ակունքի վրա կառուցված Քասաղի եկեղեցին է: Այն բազիլիկ կառույց է, սյուներով բաժանված է երեք մասի: Ծարտարապետ Թորոս Թորամանյանը ենթադրել է, որ եկեղեցին հեթանոսական ծագում ունի³: Եթե այս կարծիքը անգամ վիճելի է, ապա անվիճելի է, որ Քասաղի բազիլիկ եկեղեցին հայկական առաջին եկեղեցիներից է և կառուցվել է 4-րդ դարի սկզբներին: Եկեղեցու արևմտյան ու հարավային դռների քարավորների քանդակները ևս 4-րդ դարի կնիքն են կրում: Եկեղեցու 4-րդ դարի սկզբին կառուցած լինելու օգտին է խոսում ևս մեկ փաստ: Խոյակներից մեկի վրա, ընդհանրացված ձևով, քանդակված են երկու

¹ Մովսեսի Խորենացու պատմություն հայոց, Թիֆլիզ, 1918, էջ 98:

² Նույնը, էջ 108:

³ Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 117:

մարդ, ձախակողմյանը լուսապսակով է, աջակողմյանը՝ ռազմիկի հանդերձով: Գիտնականները գտնում են, որ դրանք Գրիգոր Լուսավորիչին ու Տրդատ Երրորդին են: Պարզ է մի բան, այդ քանդակները պատկերում են այն շրջանը, երբ, ինչպես գրում է Լ. Ազարյանը⁴, հայերի քրիստոնեությունը ընդունելու փաստը դեռևս ստասպելական գունավորում չէր ընդունել, նոր-նոր մտել էր իր իրավունքի մեջ, այսինքն 4-րդ դարի սկիզբը: Հենց այդ ժամանակ էլ կառուցվել է եկեղեցին:

Այդ հույակերտ եկեղեցիով, որի նմանը այն ժամանակ անգամ հայոց արքաները չկառուցեցին, Գնթունի իշխանները նշանավորեցին քրիստոնեության մուտքը Հայաստան: 4—5-րդ դարերում կառուցված մյուս եկեղեցիները իրենց չափերով ավելի փոքր էին և չունեցան Քասաղի եկեղեցու վեհությունը:

Զովունի գյուղի 4—5-րդ դարերի եկեղեցական կառույցները չորսն են: Թ. Թորամանյանը գրում է, որ գյուղի մեջ եղել է Թալիցի մեծ կաթողիկե եկեղեցու նման եկեղեցի, որ հավասարված է եղել հողին⁵: Այժմ այդ եկեղեցու ավերակները մնում են Ապարանի ջրամբարի ջրերի տակ: Կանգուն են ս. Պողոս-Պետրոս, սուրբ Վարդան, Թուխ Մանուկ եկեղեցիները: Համեմատաբար լավ է պահպանվել Թուխ Մանուկ եկեղեցին: Այն միանավ կառույց է: Եկեղեցին 1862 թվականին նորոգել են Մահմադի Հակոբը և իր որդի Սարգիսը:

Ս[ուր]բ մատուռս Թուխ
Մանուկայ նորոգե[ց]այ
Մահմադի Յակոբ և որդին
իր Սարգիս 1862 ամի
և կծառայեն ամա:

Ավանդության համաձայն, Ավարայրի ճակատամարտում զոհված Գնթունյաց տոհմի նահապետ Տաճատի մարմինը քերվել և թաղվել է Զովունիում: Տաճատի դամբարանին կից կառուցվել է փոքր միանավ եկեղեցի: Դամբարանն ու եկեղեցին կոչվել են սուրբ Վարդան: Դամբարանը կրկնաճանր է, շարված է սրբատաշ քարով: Դամբարանն ու եկեղեցին կառուցվել են հավանաբար Ավարայրի ճակատամարտի տարում՝ 451 թվականին:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին սկզբնապես նույնպես միանավ է եղել: Հետագա փոփոխությունների հետևանքով այն վերածվել է

սրահավոր, գմբեթավոր եկեղեցու: Պողոս-Պետրոս եկեղեցին կառուցել է Գրիգոր Գնթունին:

Զ[րիատ]ս Ա[ստուա]ծ յիշես
ԶԳրիգոր Գն-
թունեաց տեր:

Գրիգոր Գնթունու արձանագրությունը մնացել է եկեղեցու հյուսիսային պատի նախնական հատվածներից մեկի վրա: Եկեղեցին կիսավեր է, կանգուն են պատերը միայն: Ժամանակին Թուխ Մանուկ և սուրբ Վարդան եկեղեցիները տեղափոխվել ու կառուցվել են լեռան գլխին:

Նիգ գավառում Հայոց Եզր Ա կաթողիկոսի (630—641) ձեռնադրված հիշված Փառածնակերտ գյուղը Զովունին է: Միշտ կլինի նկատել նաև, որ Եզր կաթողիկոսն ինքն էլ Գնթունի է եղել: Նրա քույրը ամուսնացած էր Կոմիտաս կաթողիկոսի (615—628) եղբոր հետ: Այդ ամուսնությունից ծնվել է Թեոդորոս վարդապետ Քոթեմավորը⁶: Այս խնամփութությունն էլ հանդիսացել է այն հովանավորության արդյունքը, որ Կոմիտաս կաթողիկոսը հայրապետանցում տաճել է նրա նկատմամբ և նշանակել է Դվինի սուրբ Գրիգոր եկեղեցու փակակալ⁷:

5-րդ դարի կառույցներից է Զարջառիսի միանավ բազիլիկ եկեղեցին: Այս եկեղեցու միայն մի պատն է պահպանվել: Եկեղեցու առանձնահատկությունն այն է, որ պահպանված հատվածում արևելյան խորանը լուսամուտ չի ունեցել:

Մուսլյան գյուղի հին գերեզմանոցի մեջ մնում է եկեղեցու հյուսիսային պատի մի հատված: Պսակի ոճից երևում է, որ 5-րդ դարի կառույց է:

Գնթունիները եկեղեցիների կառուցման համար ընտրել են ամենահարմար դիրքերը և թվում է, որ նրանց ճարտարապետ-շինարարները ուղղակի շենքերը համադրել են բնությանը: Ասվածի լավագույն ապացույցն են Աստվածընկալի հին համալիրը, նախկին Քասաղ գյուղի մոտ կառուցված եկեղեցին և Գնթունիների մյուս բոլոր շինությունները:

Աստվածընկալի հին համալիրը բաղկացած է փոքր, միանավ եկեղեցուց, դրան աջից կցված են մի ավելի փոքր ու նեղ խորանով եկեղեցի, արևմտյան մասում

⁶ Պատմություն Յովհաննու Կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 308:

⁷ Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն. Բաղդատուրեամբ ձեռագրաց, հանդերձ սուսաբանի և ծանոթություններ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 98—99:

⁴ Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 26:

⁵ Թ. Թորամանյան, Նյութեր..., էջ 128:

դռնով հաղորդակցվող սենյակ: Ծարտարապետ Թ. Թորամանյանը կասկած է հայտնել, որ այս եկեղեցին ևս դամբարան-վկայարան է եղել⁸: Համալիրը կառուցված է դեպի Քասաղի ձորը իջնող ճանապարհի ճախ կողմում: Քասաղ գետի վրա կախված հրվանդանի ծայրին: Երկու կողմերից ձորափերի ուղղահայաց ժայռակտրվածքները համալիրը դարձնում են գրեթե անտիկ:

Քասաղ գյուղի մոտ գտնվող եկեղեցին կառուցվել է գետի ոլորամներից մեկի հետ հրվանդան կազմող բարձրության ստորոտում: Եկեղեցին միանավ է, չափավոր մեծության, կտուրը և պատերը քանդված են: Հրվանդանի վրա մնում են բնակելի տների հետքեր, կան հին և միջնադարյան տապա-նաքարերով գերեզմաններ: Հավանաբար այստեղից է գյուղ տարվել ու սրբացվել մի շատ հետաքրքիր սյան բեկոր: Սյան մի երեսին քանդակված է թևատարած մարդ: Նա յուրաքանչյուր ձեռքում բռնել է խաղողի ողկույզ: Հնագետ Բաբգեն Առաքելյանը գրել է, որ «Այս դժվար բացատրելի քանդակը, հավանաբար, առասպելական կամ կուլտային ճշանակություն ունի: Կոթողի ձևը, ինչպես և ինքը քանդակը բավականաչափ արհաիկ են, թերևս 4—5-րդ դարերի գործ է»⁹:

7-րդ դարը նույնպես կառուցումների դար է եղել: Այս դարում են կառուցվել Վերիվանքը, Բուժական գյուղի հարավ-արևմուտյան մասում գտնվող եկեղեցին: Այս դարի վերջերից է սկսվել Թեղեմյաց վանքի գործունեությունը:

Լուսագյուղի Վերիվանքը կառուցվել է գյուղից մեկ կիլոմետր հեռու, լեռնալանջին: Եկեղեցին միջին մեծության է: Այժմ կանգուն է խորանի աջ կողմի պատի մի հատվածը: Քարերը սրբատաշ են: Հայկական ճարտարապետության մեծ գիտակ Ն. Մ. Տոկարսկին եկեղեցու կառուցումը դնում է 637—660-ական թվականների միջև¹⁰: Վերիվանքից մեկուկես կիլոմետր հեռու, լեռան ստորոտում կան մի ուրիշ եկեղեցու ավերակներ: Այս ավերակները գյուղացիները Թուխ Մանուկ են կոչում: Թուխ Մանուկը ավելի քիչ մանրամասներ է պահպանել. մնում են խորանի մասի կրաշաղախ կամրջակը միայն և պատերի հիմքերը: Երեսպատման քարերը, որոնցով հնարավոր կլինեք պարզել եկեղեցու կա-

ռուցման ժամանակը, անհետացել են: Այս եկեղեցին ևս Գնթունիներն են կառուցել, քանի որ Նիգի մյուս տները այս կողմերում կառուցումներ չեն արել:

Բուժականի արևելյան կողմում գտնվող Թեղեմյաց վանքը իր գործունեությունն սկսել է 7-րդ դարի վերջերից, մատենագրության մեջ հիշատակվում է 8-րդ դարի սկզբներից: Այստեղ եկեղեցական շենքեր չեն պահպանվել: Հավանաբար 12—13-րդ դարերում եկեղեցական մոտ համալիրներ կառուցելուց հետո եկեղեցական հին շենքերը անխնամ են մնացել ու ավերվել, ծածկվել են հողով: Դրա լավագույն ասպացույցը կարող են լինել գավթի արևելյան պատին կից արտաքուստ ճշմարիտ շինության մնացորդները: Թեղեմյաց վանքից արևելք կա ևս մեկ եկեղեցի: Այն 7-րդ դարի խաչաձև, տրոմպային փոխանցումով գմբեթավոր եկեղեցի է¹¹: Պահպանվել են եկեղեցու հյուսիսային պատը և բեմի աբսիդի մի մասը: Բեմի կամարը շեշտված պայտաձև է: Հարավային պատի արևելյան մասում մնում է արտասովոր չափի դուռ. այն որմնախարսից վերև ունի ընդամենը 75 սանտիմետր բարձրություն:

Նորաշեն գյուղի եկեղեցին հիմնահատակ կործանված է. հողի երեսին մնում են պատերի կրաշաղախ հիմքերը միայն: Հիմքերի չափերից ելնելով կարելի է ասել, որ այն եղել է միջին մեծության ուղղանկյուն կառույց: Այս եկեղեցու քարերի և սյունաքարերի մի մասը օգտագործվել է 1830-ական թվականներին կառուցված եկեղեցու համար որպես շինաքար: Հին սյունաքարերը ունեն 1,5 մետր երկարություն, քարերի անկյուններում փորված են առուներ: Քարերից մեկի վրա խաչելության վերևում կա մարդու պատկեր: Սյունաքարերի մշակման այս ձևը 7-րդ դարի առաջին քառորդից ուշ չի կարող լինել¹²:

7-րդ դարի վերջին տասնամյակում Հայաստանում իշխանության գլուխ անցան արաբ ոստիկանները: Նրանց իշխանության մեկուկես դարը ավերման, ժողովրդի ամեցանալու կեղեքման ժամանակաշրջան էր: Հայաստանում դադարեց ամեն տեսակ շինարարական աշխատանքը: Գնթունիները ևս այդ ամբողջ ընթացքում շինարարական ոչ մի աշխատանք չկատարեցին:

Հայոց թագավորության վերահաստատումից հետո Գնթունիները հագրատունյաց արքունիքում կարևոր պաշտոն են

⁸ Թ. Թորամանյան. Նյութեր, էջ 203:

⁹ Բ. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում, Երևան, 1949, էջ 78:

¹⁰ Н. М. Токарский, По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, էջ 82 (դասակարգման տախտակ):

¹¹ Ղ. Ալիշան. Ծիրակ, տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ—Ս. Ղազար, 1881, էջ 15:

¹² Թ. Թորամանյան. Նյութեր..., էջ 201:

զբաղեցնում: Խաքան Գնթունու որդի Հասան Գնթունին Սմբատ Ա թագավորի հրամանակատարն էր: Նա Անիին մոտիկ Ուղուզլու գյուղում 10-րդ դարի սկզբին կառուցել է մեծ ու հռչակապ եկեղեցի: Այդ եկեղեցու մասին Հ. Ղ. Ալիշանը գրել է. «... առ ակամբք վտակի փոքու՝ որ թափի ի գետակն Մարիկայ, Ուղուզլու գետոյ, Աշա-նուոր հին շինուածով մեծի և հռչակապ եկեղեցոյ, որոյ գմբեթ ամբառնայ ի վերայ բոլորապարոյր թեոց կամարաց, արտաքուստ քառակուսի երևելով. և առ երի խորանին ունի երկուստեք մատրունս կամ աւանդատունս կրկնայարկս»¹³: Թ. Թորամանյանը Աշել է, որ հատկապես ուշադրության արժանի են հարավային դռան և ավանդատների քանդակները: Հասան Գնթունին եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային կողմում արձանագրել է.

«Ես Հասան որդի Խականայ Գնթունու, յաւերժաբար ըղձացեալ փառիքամբ յարինեալ տեղի ապաւինի ի հանդերձեայսն վասն յազնահամբար ու քազմամեղ անձին իմո յաւժարութեամբ սրտի իմոյ խորհեցա շինել զեկեղեցիս զայս նախարինակ վերին Երուսաղեմի ողորմութեան»:


¹³ Ղ. Ալիշան. Ծիրակ, էջ 15:


Վերջին Գնթունին Հակի որդի Տիրոց իշխանն է: Նա Գեղամա լեռներում գտնվող Անձալ գյուղում, որն անցել էր Գնթունիների, եկեղեցի է կառուցել և գյուղը նվիրել է եկեղեցուն, որպեսզի «... նրանք (անձալցիները—Վ. Պ.) ծառայեն ոչ թե մարմնավոր տերերին, այլ միայն այս սուրբ խաչին հավիտյան»¹⁴:

Տիրոց Գնթունին ամենայն հավանականությամբ գործել է 10-րդ դարի վերջին քառորդում: Տիրոց Գնթունիով էլ ավարտվում է այս շինարար իշխանական տան պատմությունը:

Թեև Գնթունիների կառուցած եկեղեցիները ավերված կամ կիսավեր են, բայց անգամ այդ վիճակում մեր օրերը հասած կառույցները թույլ են տալիս ասել, որ Քասաղի ակունքները եղել են հայ եկեղեցաշինության, եկեղեցիների կառուցվածքային զարգացման օրրաններից մեկը և Գնթունի իշխանները՝ այդ հողերի տերերը, իրենց ուժն ու եռանդը նվիրաբերել են այդ սուրբ գործին:

¹⁴ Խ. Սամվելյան. Հին հայ իրավունքի պատմություն. հ. Ա, Երևան, 1989, էջ 258. Նաև М. Ростовцев. Апаранская греческая надпись царя Тирidata, Аниискaя церкв. С.-Петербург, № 6, էջ 30—31:





ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԺԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Լրացավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի նախագահ, արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետության դոկտ., պրոֆ. Վարազդատ Հարությունյանի ծննդյան 70-ամյակը:

Վաստակաշատ և բազմաճյուղ ճարտարապետը Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ տարիներից, ճարտարապետ իր ընկերների հետ, իր սրտագին մասնակցությունն է բերել Նորին Սուրբ Օծության շինարարական-վերանորոգչական բոլոր աշխատանքներին իր հայրենաշեն գործունեությամբ, հայ մարդու ջերմ սրտով, ինքնաբերական միջոցներով, նախ որպես անդամ ճարտարապետների հանձնաժողովի և ապա 1972 թվականից՝ նախագահ:

Ժարտարապետ Վարազդատ Հարությունյանի անդամակցությունը Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովում միշտ բարձր է գնահատվել Հայոց Հայրապետի կողմից և արժանացել Նրա բարձր գնահատությանն ու օրհնությանը:

Նա այժմ էլ 70 տարիների սեմին, ոգևորությամբ և սիրով, իր մասնակցությունն է բերում Հայոց Հայրապետի կառուցողական-վերանորոգչական աշխատանքներին և ծրագրերի իրականացմանը:

Հոբելյար ճարտարապետը ծնվել է 1909 թվականի առիսեբերի 29-ին, Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում, արհեստավորի ընտանիքում:

Նրա ընտանիքը, փրկվելով Մեծ եղեռնից, 1915 թվականին գաղթել ու բնակություն է հաստատել Թբիլիսի քաղաքում, որտեղ նա որոշ տարիներ եղել է որբանոցում, ապա ընդունվել և 1927 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը: Այնուհետև փոխադրվելով Սովետական Հայաստան, չորս տարի որպես գյուղական ուսու-

ցիչ աշխատել է Ալավերդու (այժմ՝ Թումանյան) շրջանում:

1931 թվականին ընդունվում և 1937-ին հաջողությամբ ավարտում է Երևանի Կառլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը:

1938—1945 թվականներին նա բեղմնավոր գործունեություն է ծավալում պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես ավագ դասախոս, շինարարական ֆակուլտետի դեկան և ինստիտուտի ուսումնական մասի վարիչ: Այդ ընթացքում, 1939—1941 թվականներին, ուսանում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ միաժամանակ մասնակցելով Դվինի պեղումներին:

1946 թվականին ավարտելով Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանների հետազոտությունը՝ այն ներկայացնում է պաշտպանության և ստանում ճարտարապետական գիտությունների թեկնածուի աստիճան:

1945 թվականին նշանակվելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչ, ավելի քան 34 տարի սրտագին ջանքեր է գործադրել տաղանդավոր ճարտարապետների մի ամբողջ սերնդի դաստիարակման գործում:

Մինևույն ժամանակ 1945—1951 թթ. նա, որպես նախագահ, գլխավորում է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն, զգալի ավանդ կատարելով հայրենի հուշարձանների վերականգնման գործում:

Նշանակալից է Վ. Հարությունյանի ավանդը հայ ճարտարապետության պատմության խնդիրների գիտական մշակման և

հրատարակման գործում: Նա արժանավորապես լայն ճանաչում և հեղինակություն է ձեռք բերել այդ ոլորտային և՛ մեր երկրում, և՛ նրա սահմաններից դուրս:

1965 թվականին Վ. Հարությունյանին

միության վարչության և քարտուղարության անդամ:

Պրոֆ. Վ. Հարությունյանի վաստակը ըստ արժանվույն գնահատվել է հայրենի կառավարության կողմից: Նա քազմիցս



Հորեցար ճարտարապետը

շնորհվում է ճարտարապետական գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի կոչում՝ «Քաղաքաշինությունը հին և միջնադարյան Հայաստանում» մեմագրության համար:

Հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում ունեցած մեծ ավանդի համար Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1978 թվականին Վ. Հարությունյանին շնորհում է հայ ճարտարապետության գիտական հետազոտման հիմնադիր Թորոս Թորամանյանի անվան մրցանակ:

1964 թվականին նրա նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով ստեղծվում է Հայաստանում հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը, որի նախագահն է այժմ:

1949—1962 թվականներին եղել է Հայաստանի ճարտարապետների միության նախագահի տեղակալ, իսկ 1962—1974 թվականներին՝ նախագահ՝ միաժամանակ հանդիսացել է ՍՍՀՄ ճարտարապետների


արժանացել է պետական բարձր պարգևների և Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

Ս. Էջմիածնի Մայր Աթոռի վերաշինական գործունեությանը մատուցած ջերմեհույժ ծառայությունների համար 1978 թ. արժանացել է Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի հայրապետական շնորհակալագիր կոնդակին:

Հանուն Վեհափառ Հայրապետի շնորհավորում ենք քազմավաստակ ճարտարապետին՝ նրա ծննդյան 70-ամյա հոբելյանի առթիվ: Նա լի է անպառ եռանդով, ստեղծագործական մտքերով և ծրագրերով՝ անմնացորդ ծառայելու մեր ժողովրդի ճարտարապետական գիտությանը և ավանդների զարգացման ու պահպանման շնորհակալ գործին:

Մաղթում ենք նրան նորանոր հաջողություններ, երկար կյանք՝ իր մանկավարժական, գիտական և հասարակական գործունեության ասպարեզում:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՆԵՎՈՒՄ

Ս/թ. սեպտեմբերի 24-ին հույն օրթոդոքս եկեղեցու՝ Ծամբեզի կենտրոնի հրավերով մի խումբ օրթոդոքս աստվածաբաններ Արևմտյան Գերմանիայից մեկնում են Ժնև, ծանոթանալու համար Օրթոդոքս կենտրոնի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատանքներին:

Խմբին մաս էին կազմում ումիհական, հույն, հնդիկ մալաբար, եթովպական և սերբիական օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչները, այդ թվում նաև՝ Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ տ. Հակոբ արքեպիսկոպոսը՝ որպես հայ եկեղեցու ներկայացուցիչ:

Սեպտեմբերի 25-ին հյուրերը այցելում են

ԵՀԽ-ի կենտրոն, գրասենյակները, հյուրասրահները և մատուռը, որտեղ դիտում են Ամենայն Հայոց Հայրապետի կողմից ԵՀԽ-ի մատուռն ավիրած խաչն ու մարմարյա խաչքարը:

Ժամը 11-ին ԵՀԽ-ում տեղի է ունենում հանդիպում հյուրերի և տեղի կենտրոնի ներկայացուցիչների հետ: Փոխանակվում են ողջույնի և բարիգալության ճառեր:

Այնուհետև հյուրերը իրենց ազատ ժամերին այցելում են Ժնևի տեսարժան վայրերը, պատմական հուշարձաններն ու եկեղեցիները և նույն օրը, երեկոյան, լավագույն տպավորություններով վերադառնում Գերմանիա:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏԵՎՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԵՌԼԻՆԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ

Մայր Աթոռի միաբան և Արևմտյան Գերմանիայի հոգևոր հովիվ տ. Հակոբ արքեպիսկոպոսը 16 հոկտեմբեր 1979 թվակիր Վեհափառ Հայրապետին հասցեագրված գեկուցագրից տեղեկանում ենք, որ Ս/թ. սեպտեմբերի 28-ին, պատմության մեջ առաջին անգամ լինելով, Բեռլինի Էկումենիկ խորհրդի և ավետարանական համայնքի հրավերով Արևմտյան Բեռլին է այցելում Սովետական Միությունից եկեղեցա-

կան մի պատվիրակություն: Պատվիրակությունը գլխավորում էր Օդեսայի և Խերսոնի միտրոպոլիտ Սերգեյ արքեպիսկոպոսը:

Այդ հանդիպմանը Հայաստանյայց առաքելական եկեղեցուց, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մասնակցում էր Մայր Աթոռի միաբան և Արևմտյան Գերմանիայի հոգևոր հովիվ տ. Հակոբ արքեպիսկոպոսը:

Սեպտեմբերի 29-ին, շաբաթ օրը, ժամը

10-ին, պատվիրակությանը ավետարանական համայնքի կենտրոնում քարի գալուստ է մատչում Բեռլինի այդ համայնքի դոկտ. Մարտին Կրոզեն եպիսկոպոսը:

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Բեռլինի ուսս պրավոսլավ եկեղեցու ս. Հարություն տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է Էկումենիկ մի

թվում աչտեղ ելույթ է ունենում նաև տ. Հակոբ արքեպ. Գրլենդյանը:

Հոկտեմբերի 2-ին, առավոտյան, պատվիրակությունը հանդիպում է ունենում մի խումբ ամերիկյան աստվածաբանների և Արևմտյան Գերմանիայի ուղիականների և հեռուստատեսության թղթակիցների հետ:

Նույն օրը, ժամը 13-ին, պատվիրակու-



Սովետական Միության եկեղեցիների պատվիրակությունը, կենտրոնում՝ միտրոպոլիտ Սերգեյը

պաշտամունք, որին մասնակցում են բույր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Սեպտեմբերի 30-ին, կիրակի օրը, պատվիրակության անդամները հրավիրվեցին տարբեր համայնքների կողմից Բանին կենաց խոսքը քարոզելու և ծանոթանալու հավատացյալ ժողովրդի հետ:

Բեռլինի մահաճգի Նոյ-Քյուն շրջանի Մարտին Լութեր Կինգ ավետարանական համայնքի կողմից հրավիրվում է տ. Հակոբ արքեպ. Գրլենդյանը, որը պաշտամունքի ընթացքում քաղաքապետ դոկտ. Շտյուբլենի ներկայությամբ գերմաներեն լեզվով հաղորդում է ողջունի իր խոսքը:

Հոկտեմբերի 1-ին, երկուշաբթի օրը, տեղի է ունենում պատվիրակության անդամների առաջին պաշտոնական հանդիպումը Բեռլինի Էկումենիկ կենտրոնի ներկայացուցիչների հետ: Այլ պատգամավորների

թյունը ընդունվում է Արևմտյան Բեռլինի սենատի կողմից: Ժամը 16-ին պատվիրակության անդամները, Էկումենիկ խորհրդի անդամների ընկերակցությամբ, այցելում են Պլոտցենսե և ծաղկեպսակ դնում երկրորդ համաշխարհային պատերազմում հիտլերյան Գերմանիայի կողմից մահատակվածների հիշատակին կանգնեցված կոթողին և ապա դիտում անմեղ զոհերի բանտախցերն ու տանջարանները:

Հոկտեմբերի 3-ին, չորեքշաբթի օրը, պատվիրակության անդամները եկեղեցական տարբեր կազմակերպությունների կողմից հրավիրվում են խորհրդակցության:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 4-ին, ժամը 10-ին, ավետարանական Ակադեմիայում գործադրվում է դասախոսությունների և կարծիքների փոխանակման մի հատազոր՝ նյութ ունենալով «Եկեղեցիների մասնակ-

ցույթունը խաղաղության համընդհանուր ջանքերին»

Այս հանդիպման ժամանակ ելույթ է ունենում նաև տ. Հակոբ աբեղան, որը շեշտում է, թե ինչպես հայ եկեղեցին միշտ մասնակցել է խաղաղության շարժումներին, և Ամենայն Հայոց Հայրապետը, մասնակցելով խաղաղության պաշտպանության նվիրված բոլոր միջազգային համաժողովներին, Իր ձայնը բարձրացրել է նպաստ

աշխարհում կայուն խաղաղության ամրապնդման:

Սովետական Միության եկեղեցիների պատվիրակության և Արևմտյան Բեռլինի եկեղեցիների ներկայացուցիչների միջև այս հանդիպումը կարևոր նախաքայլ հանդիսացավ իրար մերձեցման, փոխհասկացողության և համատեղ գործակցության խաղաղության պաշտպանության նվիրական ու ցանկալի գործում:

«ԿԱՐԼՈՎԻ ՎԱՐԻ 4» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Սույն թվականի նոյեմբերի 21—24 օրերին Կարլովի Վարիում (Չեխոսլովակիա) տեղի ունեցավ Սովետական Միության, Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցիների ներկայացուցիչների հերթական խորհրդակցությունը: Սա 1962 թվականից ի վեր վերոհիշյալ երկրների եկեղեցիների ներկայացուցիչների միջև գումարված չորրորդ խորհրդակցական ժողովն էր և ամենաներկայացուցչականը: Ժողովին մասնակցում էին տարբեր եկեղեցիների շուրջ 50 հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ:

Խորհրդակցությանը, հանուն Մայր Աթոռի, իր մասնակցությունը բերեց նաև տողերիս հեղինակը՝ Ժիրակի թեմի առաջնորդը:

Նոյեմբերի 21-ին, չորեքշաբթի օրը, երկույն ժամը 20-ին, քաղաքի «Պարկ հոթել» հյուրանոցի դահլիճում աղոթքով տեղի ունեցավ ժողովի հանդիսավոր բացումը: Ժողովի օրակարգում քննարկման համար դրված էին հետևյալ հարցերը.

ա. Աշխարհականացում.

բ. Զինաթափում և խաղաղություն.

գ. Հիմնաստանի ներկա քաղաքականությունը.

դ. Կրոնի ազատություն և մարդու իրավունք.

ե. Ընդհանուր իրադարձություններ՝ ներառյալ ցեղասպանությունն ու ապարտեհը:

Նոյեմբերի 22-ին, առավոտյան ժամը 10-ին, սկսվեցին խորհրդակցության աշխատանքները:

Սոցիալիստական երկրների եկեղեցիների կողմից «Խաղաղության գործիքներ լինենք» թեմայի շուրջ ընդարձակ զեկուցումով ժողովում առաջինը հանդես եկավ Լեհաստանի մեթոդական եկեղեցու ներկայացուցիչ դոկտ., պրոֆ. Վիտոլդ Բենեդիկտովիչը:

Այնուհետև խորհրդակցության մասնա-

կիցները լսեցին ԱՄՆ-ի «Եղբայրություն» եկեղեցու ներկայացուցիչ, գլխավոր քարտուղար Ռոբերտ Նեֆի զեկուցումը, որի թեման էր՝ «Հարաբերություններ Արևելքի և Արևմուտքի միջև»-եկեղեցիների պարտականությունները:


Կարդացված սույն երկու զեկուցումների, ինչպես նաև ժողովի օրակարգում դրված հարցերի շուրջ հաջորդող չորս նիստերի ընթացքում տեղի ունեցան բանավեճեր և մտքերի փոխանակություն: Լիակատար փոխըմբռնման և եղբայրական համերաշխության մթնոլորտում խորհրդակցության մասնակիցները միահամուտ արտահայտեցին իրենց հաստատ համոզումն այն մասին, որ արդի աշխարհը և համայն մարդկությունը հուզող հարցերում, խաղաղության պահպանման համար մղվող պայքարում և ի մասնավորի միջուկային զենքի վտանգի մեծացման ներկա պայմաններում եկեղեցիները իրավունք չունեն մնալու ձեռնաձուլ և մեկուսի: Նրանք պետք է գործեն մարդասիրաբար, խղճի թելադրանքով և վատահոյությամբ՝ առաջնորդված իրենց քրիստոնեական առաքելության գիտակցությամբ: «Քրիստոնյաների և բոլոր բարի կամքի տեր մարդկանց համար,—նշեցին ժողովականները,—խաղաղության, հավատքի կամ մարդու իրավունքների հարցերում չկա Արևելք և Արևմուտք: Պետք է խիղճը, եղբայրությունը և սերը առաջնորդի մարդկանց դեպի փոխադարձ ճշմարիտ հասկացողություն, հանուն աշխարհի խաղաղության և համայն մարդկության բարօրության»:

Խորհրդակցության ավարտին կազմվեց և հաստատվեց համատեղ մի հաղորդագրություն:

Նոյեմբերի 23-ին, ժամը 15-ին, հյուրերին ընդունելությամբ պատվեց ՉՍՄՀ կրոնից գործերի նախագահ Եժե Հրուզան:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾԱԶԱՐՑԱՆ

12 դեկտեմբերի 1979 թ.



Յ Ո Ւ Յ Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

№ 486
ՈՍԿԵՄԱՏԵԱՆ
ՏԻՆԶԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
(Պրակ 7)

Թերթերը՝ 32:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝
32.8×24.7×0.5 սմ.:—**Նյութը՝** մի քիչ դեղնած դի-
մացկուն թուղթ:—**Կազմը՝** բարակ ստվարաթուղթ:—
Պահպանակներ՝ չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝**
միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝ 35—**
36:—Գծումները՝ գործարանային գծավոր թուղթ:—
Գիրը՝ շեղագիր:—**Ջարդագրություն՝** չունի:—**Գրիչը**
և պատվիրատուն՝ Գեորգ Միմբեշյան (1870—
1951):—**Ժամանակը՝** 1930-ական թթ.:—**Վայրը՝**
Ստամբուլ:—**Ծանոթություն՝** Զետագիրը մվեր է
ստացվել Ստամբուլից 1976 թ., գրողի որդի Նդ-
վարդ Միմբեշյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 1ա.— 318. Գրականությունը (Բիլզանդ Գե-
շեան).

Թ. 1բ.— 319. Բնութեան ձայներ (Մուշեղ Սերո-
բեան)—(նախկին եպիսկոպոս) Լոռուեան երգերը,
Անտառին երգը, Խաարին երգը, Ծովին երգը.

Թ. 3բ.— 320. Մարդ չես ըլլար դու... (Գեորգ
Միմբեշյան).

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1964
թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի
№ № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970
թվականի № № Գ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվա-
կանի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի
№ № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—
Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից,
1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից,
1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից,
1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № №
Ա-ից, Դ-ից և 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից և
Զ—Է-ից:

Թ. 4բ.— 321. Ծերունկն աշխատանք (Barillot).
Թ. 5բ.— 322. Մուրացիկը (Դանիել Վարման).
Թ. 6ա.— 323. Աղքատն ու մուրացիկը (Գեորգ
Միմբեշյան).

Թ. 7բ.— Ծունն ու ոչխարը (Florian).

Թ. 8ա.— 325. Ծանձն ու թիթեռնիկը (J. M. Vil-
lefranche).

326. Մայրական գիրկ (Կարապետ Ոսկ-
եան).

Թ. 8բ.— 327. Ծաղիկներուն վրեժը (Reinhold)

Թ. 9բ.— 328. Աստուծոյ ցարը (Barillot).

Թ. 10ա.— 329. Զկնոթանքը (Lamenais).

Թ. 11բ.— 330. Նրկու եղբայրներ (Louis Veul-
lot).

Թ. 12բ.— 331.. Կաղնիին ողորմությունը (Jean
Rameau).

Թ. 13ա.— 332. Ինչ որ անհրաժեշտ է (P.-J.
Stahl).

Թ. 13բ.— 333. Ողտը և սապատողը (Le Bailly).

Թ. 14ա.— 334. Հրդեհը (Alfred de Musset).

Թ. 14բ.— 335. Հրդեհ ... (Ինթեռն Յ. Պերպե-
րեան).

Թ. 15ա.— 336. Պատուականի տղայ մը (E. Pé-
caut).

Թ. 16բ.— 337. Նրկու գիտացիք և ամպը (Florian).

Թ. 17բ.— 338. Կոքսում երջանկությունը (Charles
Charrier).

Թ. 19ա.— 339. Ծամբորդություն մը դեպի հա-
նդիսնքու կղզին (Fénélon).

Թ. 21բ.— 340. Մայրամուտ արև (Victor Hugo)
341. Օրո՞ր (Charles Fuster).

Թ. 22ա.— 342. Օրո՞ր (Jean Richepin).

Թ. 22բ.— 343. Զմրան կիրակի (Michelet).

Թ. 23բ.— Որբերը (Victor Hugo).

Թ. 24ա.— 345. Նրկու թևերը (Mme. Sophie Hue)

Թ. 24բ.— 346. Խոստովանանքը (Գեորգ Միմբեշ-
յան).

Թ. 25բ.— 347. Ծուշանն ու ամպը (Գեորգ Միմ-
բեշյան).

348. Թռչունին կրթությունը (Jean
Rameau).

Թ. 26բ.— 349. Փոքրիկ ծիծաղը (Eugène Rambert).

Թ. 27ա.— 350. Մանուշակին երազը (Գեորգ Սիմ-բեշեան).

Թ. 29ա.— 351. Ծնունդի գիշեր (Ադեքսանդր Փանոսեան).

Թ. 29բ.— 352. Ամալը (Louis Tournier).

Թ. 30ա.— 353. Ծմարտութեան ծարաւը (Զապէլ Լ. Ասատուր) Սիպիլ.

Թ. 30բ.— 354. Վայրէշք (Յովհաննէս Թուման-կան).

Թ. 31ա.— 355. Խաղող ու գինի (Ժողովրդական աւանդութիւն) — (Հայկ Աճէմեան) Թարիգ:

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի երեսին, սպիտակ-կարմիր սպիտակի վրա).

Ոսկեմատեան տիեզերական գրականութեան

Պրակ 7

Նիւթ 318—355:

№ 487

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Պրակ 8)

Թերթերը՝ 38:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 33×24.7×0.5 սմ.:— Նյութը՝ մի քիչ դեղնած դի-մացկուն թուղթ:— Կազմը՝ բարակ ստվարաթուղթ:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրու-թյունը՝ միապուն:— Դատարկ թղթեր՝ չունի:— Տո-ղերը՝ 35—36:— Գծումները՝ գործարանային գծա-վոր թուղթ:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը և պատվիրատուն՝ Գեորգ Սիմբեշ-յան (1870—1951):— Ժամանակը՝ 1930-ական թթ.:— Վայրը՝ Ստամբուլ:— Մանրություն՝ Ձեռագիրը (պեր է ստացվել Ստամբուլից 1976 թ., գրողի որ-դի Նովարո Սիմբեշյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 1ա.— 356. Կեռասները (Charles Richet).

Թ. 1բ.— 357. Թռչուններուն զարթոնը (Tschudt).

Թ. 2բ.— 358. Զիւնի գիշեր (Guy de Maupass-ant).

Թ. 3ա.— 359. Կառքը (Gaudry).

Թ. 3բ.— 360. Ժամացոյցը (Jean Aicard).

Թ. 4ա.— 361. Դայրոցէն վերադարձ (Henri Du-rand).

Թ. 4բ.— 362. Ծիծեռնակին մեկնումը (Th. Gon-tard).

363. Արտոյտը (André Theurlet).

Թ. 5ա.— 364. Մեր թերութիւնները (Ստեփան Ոսկան).

Թ. 6ա.— 365. Պէշիքթաշլեանի հողակոյտին առջև (Յովսէփ Օիշմանեան) Ծերենց.

Թ. 6բ.— 366. Գեղոյն ի պատիւ հայ լեզուին (Ար-շակ Չօպանեան).

Թ. 8ա.— 367. Լուսնկայն գերեզմանաց (Հայր Ղևոնդ Ալիշան).

Թ. 8բ.— 368. Սփինքս (Վահան Մալեգեան).

Թ. 9ա.— 369. Անմեռուկը (Ադեքսանդր Փանոս-եան).

370. Վայրագ խրախճանք (Զարուհի Գալէմքեանեան).

Թ. 10բ.— 371. Հրաժեշտ (Կարապետ Ոսկեան).

Թ. 11ա.— 372. Պոտ մը ջո՛ւր ... (Սահակ Մես-րոպ).

373. Ծիծաղներու տակ (Տիգրան Ար-փիարեան).

Թ. 12ա.— 374. Վարդենին (Ռուբէն Որբերեան).

Թ. 13ա.— 375. Ալիշան և Պէշիքթաշլեան (Մի-նաս Չերազ).

Թ. 13բ.— 376. Մրմունջ առ թռչնին (Խորեն Եպիսկ. Նարպէլ).

Թ. 14բ.— 377. Հուսկ երգն աղջկան (Եսիմէ Աւետիսեան) Անայիս.

Թ. 15ա.— 378. Վաղամեռիկ կոյսը (Թովմաս Թերզեան).

Թ. 16ա.— 379. Յուշեր (Զապէլ Լ. Ասատուր).

Թ. 16բ.— 380. Սրտաքնկում ... (Զապէլ Լ. Ասա-տուր).

Թ. 17ա.— 381. Ամանորի գիշերը (Mme. Paul de Guizot).

Թ. 18բ.— 382. Դէպի լաւտեսնականութիւն (Զա-պէլ Լ. Ասատուր).

Թ. 19ա.— 383. Մայրի՛կը վերագտնելու համար... (Ստեփան Ծախպազ).

Թ. 20ա.— 384. Իրիկուն մը ի Պէշիքթաշլեան (Գրիգոր Զիլիմկիրեան).

Թ. 21ա.— 385. Զատիկ (Մկրտիչ Աճէմեան).

Թ. 21բ.— 386. Խրատներ մանուկի մը (Victor Hugo).

Թ. 22ա.— 387. Այծեամին մահը (Lamartine).

Թ. 22բ.— 388. Հաւատացեալի մը խօսքերը (La-menais).

Թ. 23ա.— 389. Հայելին (Շաքոնական աւանդա-մէպ) — (Մ. Դայրի).

Թ. 24բ.— 390. Փոքրիկ գինուորը (Գեորգ Սիմ-բեշեան).

Թ. 25ա.— 391. Գառնուկն ու փուշը (Lachambe-udie).

392. Օշական (Եղիշէ Եպիսկ. Դուր-եան).

Թ. 26ա.— 393. Փոքրիկ մուրացիկը (Mme. Bo-ucher de Perthes).

Թ. 26բ.— 394. Փոստուան (Mme. Sophie Hue).

395. Փոքրիկ կաղը (Mme. Sophie Hue).

Թ. 27բ.— 396. Մամիկը (Felix Comte).

Թ. 28ա.— 397. Մեր պապը (Գեորգ Սիմբեշեան).

Թ. 28բ.— 398. Ծոյլ եզը (հեղինակը անծանօթ).

399. Երկու առումներ (հեղինակը ան-ծանօթ).

Թ. 29ա.— 400. Ո՛վ ... (հեղինակը անծանօթ).

թ. 29թ.— 401. Տիպար տղան (Ռեդիկալը ան-
ժանոթ)。
թ. 30ա.— 402. Պզտիկ սանդղակները (Lamarti-
ne)。

թ. 31ա.— 403. Մայրիկը կը քնանա՜յ... (Mme.
E. de Pressensé)。

404. Մայրիկը կ'արթննա՜յ ... (Mme.
E. de Pressensé)。

թ. 32ա.— 405. Աշխատանքը (Berthe Mas-
ure)。

թ. 32թ.— 406. Նարինջները (Abbé Reyre)。

թ. 33թ.— 407. Հիւսնո՜ւ է ... (Դանիէլ Վարու-
ժան)。

թ. 34թ.— 408. Լամարթին (Գրիգոր Օտեան)。

թ. 35թ.— 409. Առ Եզովբոս (Յակոբ Ոսկան)。

թ. 36ա.— 410. Առ Մելանիա (Միքայիլ Յով-
հաննէսեան)。

թ. 36թ.— 411. Աղքատ ուսանողին (Յակոբ Ոս-
կան)。

412. Գիտնալ՝ նախատեսելու և ճոզա-
լու համար (Ռէթէնս Յ. Պէրպէրեան)。

թ. 38ա.— 413. Մեքենակաւորին (Մատթէոս
Մամուրեան)։

ՀԻՇՈՍԱՍԿԱՐԱՆ

(Կազմի երեսին, սպիտակ-կարմիր պիտակի
վրա)。

Ոսկեմատեան տիեզերական գրականութեան

Պրակ 8

Նիւթ 356—413։

№ 488

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Պրակ 9)

Թերթերը՝ 38։— Պրակները՝ 1։— Մեծությունը՝
33×24.7×0.5 սմ։— Նյութը՝ մի քիչ դեղնած դի-
մացկուն թուղթ։— Կազմը՝ բարակ ստվարաթուղթ։—
Պահպանակներ՝ չունի։— Վիճակը՝ լավ։— Գրու-
թյունը՝ միապուր։— Դատարկ թղթեր՝ չունի։— Տո-
ղերը՝ 35—36։— Գծումները՝ գործարանային զմա-
վոր թուղթ։— Գիրքը՝ շեղագիր։— Զարդագրություն՝
չունի։— Գրիչը և պատվիրատուն՝ Գեորգ Սիմբեշ-
յան (1870—1951)։— Ժամանակը՝ 1930-ական թթ.։
— Վայրը՝ Ստամբուլ։— Ժանդություն՝ Չեռագիրը
նվեր է ստացվել Ստամբուլից 1976 թ., գրողի որդի
Եղվարդ Սիմբեշյանի կողմից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

թ. 1ա.— 414. Արաքսական քաղաքակրթությունը
(Ռէթէնս Յ. Պէրպէրեան)。

թ. 2ա.— 415. Մահակ և Մեսրոպ (Թորգոմ Ե-
պիսկ. Գուշակեան)。

թ. 3ա.— 416. Ա. Մեսրոպի դամբարանը (Եղիշէ
Եպիսկ. Դուրեան)。

թ. 4ա.— 417. Ծերունին Սիմէոն (Բարկէն Ե-
պիսկ. Կիլիշէրեան)。

թ. 5ա.— 418. Սի՛րէ ... (Յարութին Գ. Մրմըր-
եան)。

թ. 5թ.— 419. Ողկորութիւն ի Ա. Երուսաղէմ
(Տիգրան Արփիարեան)。

թ. 6ա.— 420. Տրտունջք ... (Մերձ ի մաս զըր-
ուած) — (Պետրոս Դուրեան)。

թ. 7ա.— 421. Մրտոյի թողը (Լևոն Սեդրոսեան)。

թ. 7թ.— 422. Առեղծուածը (Մկրտիչ Անճմեան)。

թ. 8ա.— 423. Տեղատարափը (Յովհաննէս Գա-
զանճեան)。

թ. 8թ.— 424. Լկրան դիցունին (Ռուբէն Զար-
դարեան)。

թ. 9թ.— 425. Վարութեան և կեռասները (Գեորգ
Սիմբեշեան)。

թ. 10ա.— 426. Ագարակին կենդանիները (Char-
les Wagner)。

թ. 10թ.— 427. Ծոյլը (O. Aubert)。

թ. 11ա.— 428. Առաւ (G. Masson)。

թ. 11թ.— 429. Առտուան բարը (Բարի լոյս)

(M. Fournier)。

թ. 12ա.— 430. Մանկիկը քունի մէջ (M. Fourni-
er)。

թ. 12թ.— 431. Երկու ճամբորդներ (Florian)。

թ. 13ա.— 432. Տարի մ'ալ անցաւ ... (Յակոբ
Ոսկան)。

թ. 14ա.— 433. Նարկիլէն (Գրիգոր Զոհրապ)。

թ. 14թ.— 434. Սիրոյ երկստ ըմբռնումը. Աղամին
սէրը. Եւսիկն սէրը (Բօլ Մոնթէկազցա)。

թ. 15թ.— 435. Տխրութեան դէմ (Տիրան Քլէլե-
կեան)。

թ. 16ա.— 436. Դրամոսիտը (Արթուրի Համբար-
գապեան)。

թ. 17ա.— 437. Քրիստոնէութեան համբարձումը
(Յակոբ Յ. Պարոնեան)。

թ. 19ա.— 438. Թռչնիկն առ որսորդ (Արթուրի
Համբարգապեան)。

439. Հին օրեր. Յովհաննէս պրոսպի
Տէրովնց պատուի (Յարութին Գ. Մրմըրեան)。

թ. 20ա.— 440. Վաղեմի գերեզման մը (Կարա-
պետ Յ. Պատմանեան)。

թ. 21թ.— 441. Մարդուն լացը (Աղեքսանդր Փա-
նոսեան)。

թ. 22ա.— 442. Պընկած կարծ (Արտաշէս Յա-
րութիւնեան)。

թ. 22թ.— 443. Յաղկերգ (Կարապետ Ոսկեան)。

թ. 23ա.— 444. Գիշերապանը (Լևոն Սեդրոս-
եան)。

թ. 23թ.— 445. Իդձ մը (Թովմաս Թէրզեան)。

թ. 24ա.— 446. Զարնուած որսորդը (Ռուբէն
Զարդարեան)。

թ. 25ա.— 447. Ներսէս Վարձապետեան (Մինաս
Զեբազ)。

թ. 25թ.— 448. Սուրբ Սահակ Պարթև (Վահան
Ծ. վ. Տէր-Մինասեան)。

թ. 26ա.— 449. Տէրունական աղօթքը (Վահան
Ծ. վարդ. Տէր-Մինասեան)。

Թ. 27ա.— 450. Վարդ Բրիտոննից (Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանց)։

Թ. 29ա.— 451. Աշուհը (Sally Prudhomme)։

452. Կրօնքի դասը (Մեսրոպ—եպիսկոպոս)։

Թ. 29բ.— 453. Մօրս աղօթքը (Անտիք Իսահակեան)։

Թ. 30ա.— 454. Ծովը. Համուի՛նք, համուի՛նք (Յակոբ Յ. Պարոնեան)։

Թ. 31ա.— 455. Ոսկեղջիւրէն Քէաթեանէ (Միսաք Գօշուհեան)։

Թ. 32բ.— 456. Կէսօր (Leconte de Lisle)։

Թ. 33ա.— 457. Վշտին գեղեցկութիւնը (Ներսէս Եպիսկոպոս)։

Թ. 33բ.— 458. Տղան բանաստեղծութեան համուհի (Հայկանուշ Մարք)։

Թ. 35բ.— 459. Երեւելի քեզ, վրտակ ... (Ռուբէն Զիլիկեան) Սեակ։

Թ. 36ա.— 460. Ցանքը (Դանիէլ Վարուժան)։

Թ. 36բ.— 461. «Խօսիլ» և «խօսակցիլ» (Տիրան Բելեկեան)։

Թ. 37ա.— 462. Մտաւորական կեանքը (Միքայէլ Շամուհեան)։

Թ. 38բ.— 463. Դրամին աղօթքը (Ռուբէն Զիլիկեան) Սեակ։

ՀԻՇՍԱՆԱԿԱՐԱՆ

(Կազմի երեսին, սպիտակ-կարմիր պիտակի վրա)։

Ոսկեմատեան տիեզերական գրականութեան

Պրակ 9

Նիւթ 414—463։

№ 489

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ

ՏԻԵԶԵՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Պրակ 10)

Թերթերը՝ 40։— Պրակները՝ 1։— Մեծությունը՝ 33X24.7X0.5 սմ։— Նյութը՝ մի քիչ դեղնած դիմացկուն թուղթ։— Կազմը՝ բարակ ստվարաթուղթ։— Պահպանակներ՝ չունի։ Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միապուն։— Դատարկ թղթեր՝ չունի։— Տողերը՝ 35—36։— Գծումները՝ գործարանային գծավոր թուղթ։— Գիրը՝ շեղագիր։— Զարդագրություն՝ չունի։ Գրիչը և պատվիրատուն՝ Գեորգ Սիմքեշյան (1870—1951)։— Ժամանակը՝ 1930-ական թթ։— Վայրը՝ Ստամբուլ։— Ծանոթություն՝ Զեռագիրը նվեր է ստացվել Ստամբուլից 1976 թ., գրողի որդի Նոյմարդ Սիմքեշյանի կողմից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 1ա.— 464. Դատաւորը՝ համարային կեանքին մէջ (Բիզանդ Քէշեան)։

Թ. 1բ.— 465. Ոսկիին առակը (Գիսակորդի)։

Թ. 2բ.— 466. Ս. Սահակ Պարթև (Հայր Ղևոնդ Ալիշան)։

Թ. 3ա.— 467. Բարոյականի դերը գեղարուեստից մէջ (Աղեքսանդր Շաքլեան)։

Թ. 5ա.— 468. Աշնան երգ (Paul Verlain)։

469. Լուսնին տակ (Paul Verlain)։

470. Արցունք (Paul Verlain)։

Թ. 5բ.— 471. Ստրջանք (Paul Verlain)։

Թ. 6ա.— 472. Ինքնախաբոյսիւն (Արքաճաճ Տէր Յակոբեան)։

Թ. 7բ.— 473. Հին օրերու Մեծ-պահքը (Արամ Անտոնեան)։

Թ. 8բ.— 474. Ինչո՞ւ ... (Լևոն Սեդրուհեան)։

Թ. 9ա.— 475. Ճշմարիտը և սուտը (Սպանիական գրականութիւն)։

Թ. 10ա.— 476. Թիթեանիկը և մեղուն (Զապէլ Հ. Ասատուր)։

Թ. 11ա.— 477. Ի՞նչ կ'ըսեն (Պետրոս Դուրեան)։

478. Հայ գրագիտութիւն 19-րդ դարէն առաջ (Հրանտ Ասատուր)։

Թ. 12բ.— 479. Աղջնակս (Եւփիմէ Անտիսեան) Անայիս։

Թ. 13ա.— 480. Ծովուն (Արշակ Զօպանեան)։

Թ. 13բ.— 481. Պաշիկը (Frédéric Bataille)։

Թ. 14ա.— 482. Խիղճը (Victor Hugo)։

Թ. 15ա.— 483. Բաղեղը և վարդենին (Le Bailly)։

484. Աստղերը (Գեորգ Սիմքեշեան)։

Թ. 15բ.— 485. Զախ ձեռքդ թո՛ղ չգիտնայ՝ աջ ձեռքիդ ի՞նչ գործելը (Ercumend Ekrem)։

Թ. 16բ.— 486. Ածխային դար (Յակոբոս Հ. Ո՛ճիգեան)։

Թ. 17ա.— 487. Խաբողին խաբող ու կէս (Զապէլ Հ. Ասատուր)։

Թ. 18ա.— 488. Հայ գեղեկութիւն (Մաղաքիա Եպիսկոպոս, Օրմանեան)։

Թ. 19ա.— 489. Դուրեանի շիրիմը (Զապէլ Եսայեան)։

Թ. 20ա.— 490. Ժայռերը (Արտաշէս Յարութեանեան)։

Թ. 21ա.— 491։ Մանկութեան օրեր (Աղեքսանդր Պապուրեան)։

492. Հրաւեր ի դաշտ (Wordsworth)։

Թ. 21բ.— 493. Կոռժ Տը Սիւնոգ (Յակոբ Սթանպուլեան)։

Թ. 23ա.— 494. Յոյսը և իր լոյսը (Գարեգին Եպիսկոպոս, Խաչատուրեան)։

Թ. 23բ.— 495. Հիւանդ կոյսը՝ Աշնան վարդին (Գեորգ Սիմքեշեան)։

Թ. 24բ.— 496. Սուտը և ճշմարիտը (Զապէլ Հ. Ասատուր)։

497. Ետեւս եկուր ... (Եղիշէ Եպիսկոպոս)։

Թ. 25բ.— 498. Մեր Վոսփորը (Եղիա Տէմիրճի-սլաշեան)։

Թ. 26բ.— 499. Սրտիս ըսի ... (Աղեքսանդր Մատուրեան)։

500. Թուրքիա և ծովը (Abidin Daver)։

Թ. 27ա.— 501. Գամ շինողները (Գեղամ Բարսեղեան)։

Թ. 28ա.— 502. «Վարուժնակ»-իս (Դանիել Վարուժան)։

Թ. 29ա.— 503. Երկու մայրեր (Նորվիկեան գրականություն) (Yonas Ly)։

Թ. 30բ.— 504. Ծնողք և զաւակները (Մելիքեղեկ Եպ. Մուրատեան)։

Թ. 31բ.— 505. Աստուածաշունչք, Հին և Նոր Կտակարանները (Քաղուածք)։

Թ. 32ա.— 506. Պատումներ... (R. Z.)։

Թ. 33ա.— 507. Մամիկը (Louis Ratisbonne)։

Թ. 33բ.— 508. Սրտին ժամհարը (Jean Rameau)։
509. Ծիրմին վարդը (Վահրամ Սվանեան)։

Թ. 34ա.— 510. Ո՛ր, ոչի՛նչ ... (Արտաշէս Յարութիւնեան)։

511. Նիւթին ձայնը (Եղուարդ Գօլանեան)։

Թ. 34բ.— 512. Սպառում ... (Վահան Թէքեան)։

Թ. 35ա.— 513. Մեր վաղուան սերունդը (Միքայէլ Ծամտանեան)։

Թ. 36ա.— 514. Ամպերուն ... (Արտաշէս Յարութիւնեան)։

Թ. 36բ.— 515. Գիշերային երանգներ (Արտաշէս Յարութիւնեան)։

Թ. 37ա.— 516. Հոգույս ծաղիկը (Կարապետ Ոսկեան)։

517. Երախտագիտութիւն (Գէորգ Սիմբէշեան)։

Թ. 37բ.— 518. Աշուղին երգը (Աղեքսանդր Ծատուրեան)։

519. Քաջասիրտ մայրը (Ռումէն գրականություն) (Carmen Sylva) (Ծանոթ.— Ծածկանունը Ռումինիո Էլիզաբէթ թագուհուն (1843—1916), կինը Կարոլու Ա. թագաւորի—Ն. Մ.)։

Թ. 39բ.— 520. Բնական բարեկամը (Զապէլ Հ. Ասատուր)։

Թ. 40բ.— 521. Մրրիկը (Վահրամ Սվանեան)։

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆ


(Կազմի երեսին, սպիտակ-կարմիր պիտակի վրա)։

Ոսկեմատեան տիեզերական գրականութեան

Պրակ 10

Նիւթ 464—521։

(Ծարումակեղի)



«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1979 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրոյանին արքայական պատիվ շնորհելու մասին, Ա. 16:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանին արքայական պատիվ շնորհելու առթիվ, ԺԱ. 7:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Փարիզի «Դարոցասեր տիկնանց վարժարան»-ի տնօրենությանը, խնամակալ մարմնին, դասախոսական կազմին, պաշտոնությանը և աշակերտությանը, ԺԱ. 9:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ականավոր Ալարիչ Գաղուին (Գառնիկ Զուլումյան) «Ա. Սահակ—ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առթիվ, ԺԱ. 11:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա. 6:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ քույր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Ա. 10:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ, Ա. 12:

Ցավակցական գրություններ լիբանանահայությանը պատահած աղետների առթիվ (Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի, Մոսկվայի և Համայն Բուսաստանի Նորին Սրբություն Պիմեն

Պատրիարքի և Համայն Վրաստանի Նորին Սրբություն Իլիս Բ Պատրիարք-կաթողիկոսի պատասխան գրությունները Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին), Ա. 18:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ. 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ քույր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Դ. 9:

1979 թվականի համամիութենական մարդահամարի նախնական արդյունքների մասին. Հայկական ՍՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը, Դ. 11:

Ծանուցում (1978 թվականին ս. Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին անցկացված աշխատանքների մասին), Ե. 8:

Հայրապետական վճիռ (Ս. Թորգոմ վարդապետ Մուշեղյանին կարգալուծ անելու և աշխարհականների շարքը դասելու մասին), Ե. 29:

Հաղորդագրություն. Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության ներկայացուցիչներու միջև կայացած ժողովին, ԺԱ. 17:

Հեռագրերի փոխանակում Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի և Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի միջև Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի հեռագիրը Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Ա-ին, ԺԲ. 8: Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հեռագիրը Նորին Սրբություն

Հոռմի Հովհաննես-Պողոս Բ Պապին, ժԲ 4:
Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա Հայ-
րապետի «Խոսքը խաղաղության և քաղկամեցու-
ղության», արտասանված սուրբ Էջմիածնի Մայր
տաճարում, ժԲ 6:

Բ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՊ

«Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Ս. Սահակ—ս. Մես-
րոպ» և «Ս. Ներսես Ընդորհալի» շքանշանների
տվյալության կանոնադրությունները, Ա 28:

Գ. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒ

Հաղորդագրություն (1978 թվականին ս. Հոփսիսմե-
վանքի մատուռ-դամբարանի պեղումների ժամա-
նակ հայտնաբերված աճյունների մասին), Ե 4:
Հաղորդագրություն (1979 թվականի սեպտեմբերի
15—18 օրերին Վեհափառ Հայրապետի հովվա-
պետական այցելությանը Բաքու մեկնելու մասին),
ԺԱ 23:

Դ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅԾԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այցելություն Հայկական ՍՍՀ Միմիստրների խոր-
հրդի նախագահ մեծահարգ Ֆադեյ Տ. Սարգսյա-
նին, Ա 15:

Այցելություն Հայկական ՍՍՀ Միմիստրների խոր-
հրդի նախագահ տիար Ֆադեյ Տ. Սարգսյանին,
Զ 3:

Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական
ՍՍՀ Միմիստրների խորհրդի նախագահի առաջին
տեղակալ Ալեքսանդր Մ. Կիրակոսյանին, Ը—Ժ 3:
Պաշտոնական այցելություններ (Հայկական ՍՍՀ
Միմիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու
գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանի
այցելությունը Վեհափառ Հայրապետին Վեհա-
րանում և Վեհափառ Հայրապետի փոխադարձ
այցելությունը Երևան՝ Հայկական ՍՍՀ Միմիս-
տրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գոր-
ծերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանին),
Ը—Ժ 4:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐՊԱՊԵՏ ԱՐԱԲԱԶՅԱՆ—Հովվապե-
տական այցելություն Ադրեջանի հայոց տիրա-
խնամ թեմին, ԺԱ 25:

Ե. ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ 1979 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՐԻՍՈՒՄՆԵՐԻ ՖՐԱՆՍԻՍԿԱ
ԿԱՏԱՐԱՄ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱՅՏ
ՕԳՈՍՏՈՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԲԱՑԱՌԻՎ ՀԱՄԱՐՆԵՐԻ
ՆՅՈՒԹԵՐ

Վեհափառ Հայրապետի պատգամը Փարիզում ող-
ջերթի մեծ ճաշկերպին, Ը—Ժ 5:

Վեհափառ Հայրապետի խոսքը Փարիզի «Գալո»-ի
սրահում Մարդարապատի նախատամարտի ոգե-
կոչման առիթով, Ը—Ժ 12:

Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելու-
թյունը Ֆրանսիա, Ը—Ժ 17:

Վեհափառ Հայրապետը Մարսելում, Ը—Ժ 18:

Այց Բոմոնի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Ը—Ժ
48:

Հրաժեշտի ընդունելություն Մարսելի ս. Սահակ—
Մեսրոպ մշակութային տանը, Ը—Ժ 54:

Վեհափառ Հայրապետը Բորդոյում, Ը—Ժ 58:

Վեհափառ Հայրապետի ժամանումը Նիցցա, Ը—Ժ
64:

Վեհափառ Հայրապետի ժամանումը Լիոն, Ը—Ժ 69:

Վեհափառ Հայրապետը Սենտ-Էտիենում, Ը—Ժ 77:

Վեհափառ Հայրապետը Վալանսում, Ը—Ժ 81:

Կրկին Լիոնում, Ը—Ժ 93:

Վեհափառ Հայրապետի այցելությունը Պաիս, Ը—Ժ
97:

Վերադարձ Լիոն, Ը—Ժ 104:

Վեհափառ Հայրապետը Փարիզում, Ը—Ժ 106:

Հայրապետական ս. պատարագ և քարոզ Փարիզի
հայոց ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում,
Ը—Ժ 118:

Փարիզի հայոց առաջնորդարանի կազմակերպած
ճաշկերպը ի պատիվ Հայոց Հայրապետի, Ը—Ժ
127:

Վեհափառ Հայրապետը նախագահում է Արևմտյան
Եվրոպայի հայ եկեղեցական վարչությունների և
հոգևորականների տարեկան համագումարին,
Ը—Ժ 131:

Վեհափառ Հայրապետը Ալֆորվիլում, Ը—Ժ 139:

Վեհափառ Հայրապետը Սոնուվիլում, Ը—Ժ 145:

Վեհափառ Հայրապետը կրկին Փարիզում, Ը—Ժ
150:

Այցելություն Ֆրանսիայի հանրապետության նախա-
գահ, Նորին Վսեմություն Վալերի Ժիսկար դ'Էս-
տենին, Ը—Ժ 156:

Վեհափառ Հայրապետը Մոսկվայում, Ը—Ժ 161:

Վեհափառ Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ,
Ը—Ժ 162:

Զ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Սուրբ Ղևոնդյանց և Վարդանանց պատգամը, Բ 3:

Է. ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ
Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա 3:
Շքանշանների և օրհնության կոնդակների տվյալ-
ության հանդիսություն Մայր Աթոռում, Ա 21:

Հայոց Հայրապետի օրհնության խոսքը (Մայր Ա-
թոռում շքանշանների և օրհնության կոնդակների
տվյալության հանդիսության ժամանակ, 3 դեկտեմ-
բերի 1978 թ.), Ա 23:

Հայոց Հայրապետի փակման խոսքը (Մայր Աթո-
ռում շքանշանների և օրհնության կոնդակների
տվյալության հանդիսության ժամանակ, 3 դեկտեմ-
բերի 1978 թ.) Ա 26:

ՄՅՈՒՌՈՒՆ ԱԲԵՂԱ ԳԸՎԸԳՑԱՆ—Ամանորը Մայր Աթոռում, Ա 31:

Վեհափառ Հայրապետի պատգամը Ամանորի համ-
դիսության առթիվ, Ա 34:

Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում,
Ա 38:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում,
Ա 38:

Եկեղեցական քեմ. լուրեր, Ա 42, Բ 8, Գ 15, Դ 17,
Ե 46, Զ 10, Է 30, ԺԱ 48, ԺԲ 17:

ՎԱԶԱԳԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՑԱՆ—Արքեպ
վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ
Հայրապետի անվանակոչության տարեդարձը
Մայր Աթոռում, Բ 5:

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՎՐԱՄԻՏԻՍ ՔԱՀԱՆԱ—Այցելու-
թյուն ի Հայաստան, Բ 49:

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ
և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե ար-
քեպ. Մանուկյանը Մայր Աթոռում, Գ 12:

Ուխտի անդրամիկ քարոզ (Տ. Մյուռոն արեղա Գը-
վըզյանի ուխտի անդրամիկ քարոզը՝ արտասան-
ված Մայր տաճարում 1979 թ. փետրվարի 14-ին),
Գ 18:

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ
և սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճա-
րում, Դ 8:

«Ա. Ներսես Ծնորհալի» շքանշանի տվչության հան-
դիսություն Մայր Աթոռում, Դ 28:

Կուսակրոն քահանայական ձեռնադրություն, Ե 48:
Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատ-
րիարքը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական
պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսը և
Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանա-
պետ տ. Ծաֆե արքեպիսկոպոսը Մայր Աթոռում,
Է 3:

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում,
ԺԱ 8:

Վեհափառ Հայրապետի գահակալության 24-րդ տա-
րեդարձի հանդիսությունը Մայր Աթոռում, ԺԱ 18:

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում,
ԺԱ 14:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրա-
կությունը ա. Էջմիածնում, ԺԱ 20:

Սուրբ պատարագ, քարոզ և հանդիսություն ա.
Հոփսիմե վանքում, ԺԱ 35:

Քահանայական ձեռնադրություն, ԺԲ 15:

Ը. ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

ՎԱԶԱԳԱՆ ՍՐԿ. ԱՎԵՏԻՔՑԱՆ—Միամանթոյի
ծննդյան 100-ամյակին նվիրված գրական-երա-
ծըշտական երեկո հոգևոր ճեմարանի հարկի տակ,
Գ 61:

ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՑԱՆ—Ամա-
վերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում, Զ 4:

ՎԱԶԱԳԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՑԱՆ—Հոգևոր
ճեմարանի վերաբացումը, ԺԱ 39:

Թ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ—Փրկության
վարդապետությունը, Է 38:

Ժ. ԹԵՄԱԿԱՆ

Բուդարիայի Պյոլդիլ քաղաքի հայոց ա. Գևորգ
եկեղեցու վերանորոգության 150-ամյակը, Բ 13:
Մայր Աթոռի պատվիրակությունը Հնդկաստանում,
Դ 18:

Այցելություն Իրաքի հայոց տիրախմամ թեմին, Դ
21:

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ԲՈՒՆԻԱԹՑԱՆ—Այց Սինգա-
պուրի հայոց ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի,
Դ 25:

Վերանորոգություններ Թբիլիսիի հայոց ա. Գևորգ
եկեղեցում, Դ 50:

Հյուսիսային Ամերիկայի արևելյան առաջնորդական
թեմի 77-րդ տարեկան թեմական պատգամավո-
րական ժողովը, Զ 18:

Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի
արևմտյան թեմի 52-րդ թեմական պատգամավո-
րական ժողովը, ԺԱ 57:

Փիթեբշի (Ռումինիա) հայոց ա. Հովհաննես Մկրտիչ
եկեղեցու հիմնադրության 150-ամյակը, ԺԱ 58:

Մոնրեալի հայոց ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու
շաբաթօրյա դպրոցի ուսումնական վերամուտը,
ԺԱ 59:

ԺԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ—Եկեղեցիների
համաշխարհային խորհրդի «Առաքելություն և ա-
վետարանչություն» հանձնաժողովի խորհրդակցա-
կան ժողովը Պրագայում, Դ 54:

Հանուն երկրագնդի խաղաղության, Դ 56:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՔԱԶՅԱՆ—Խաղաղու-
թյան քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր
Արևելքի հատուկ հանձնաժողովի նստաշրջանը
Մայր Աթոռ ա. Էջմիածնում, ԺԲ 8:

Վեհափառ Հայրապետի ողջույնի և քաջման խոսքը
(Արտասանված Մայր Աթոռում խաղաղության
քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր Արևելքի
հատուկ հանձնաժողովի նստաշրջանում, 26 նո-
յեմբեր 1979 թ.), ԺԲ 9:

ԺԲ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՑԱՆՔ

ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ—Համամիու-
թեանական կրոնական կոնֆերանս Մոսկվայում,
Ա 61:

Խորհրդակցական հանդիպում Պրագայում՝ նվիրված
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտ-
րոնական կոմիտեի առաջիկա նստաշրջանին, Ա
63:

Ժողով հազվեում օրընդօրս եկեղեցիների աստվածաբանական ճանաչողության մասին, Բ 53:

Տ. Շամկ արքեպիսկոպոսի զեկուցումը (հազվի խորհրդակցությունում «Հայ եկեղեցու հոգևոր կրթության մասին» թեմայով), Բ 54:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի 31-րդ նստաշրջանը ճամայկայում, Դ 52:

ԸՆԼԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ—Հայ եկեղեցու մասնակցությունը «Հավատքի և կարգի» ժողովներում, Զ 58:

Միջազգային ծիսագիտական ընկերակցության 7-րդ համագումարը, ԺԱ 60:

Հնդկական մալաբար եկեղեցու պետը ԱՄՆ-ում, ԺԱ 61:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժողովը Բոստոնում, ԺԱ 61:

Այցելություն Աթենքի և Համայն Հելլադայի Տ. Սեբաստիանի միտրոպոլիտին, ԺԱ 62:

Մարսելի արքեպիսկոպոս կարդինալ Ռոմե Էլեգարայի այցելությունը սուրբ Սահակ—Մեսրոպ Մայր եկեղեցի, ԺԱ 62:

Էկումենիկ հանդիպում Ժնևում, ԺԲ 51:

Սովետական Միության մեջ զանվող եկեղեցիների պատվիրակության հանդիպումը Արևմտյան Բուլղարիայի Էկումենիկ խորհրդի և Ավետարանական եկեղեցու կենտրոնի հետ, ԺԲ 51:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸՆԴԱՐՅԱՆ—«Կարյովի վարի 4» խորհրդակցական ժողովը, ԺԲ 53:

ԺԴ. ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ, ՊԱՐԳԵՎ ԸՆԴԱՐՅԱՆ—Նոր Կտակարանի գրաբար լեզուների կատարված արևմտահայերենի նոր թարգմանության նրատարակությունը, Գ 11:

Ս. Ա. Մ.—Ծիպալուրիի առեղծվածը, ԺԱ 55:

ԺԵ. ԳՐԱԿԱՆ

Ագաթանգեղոսի Պատմություն հայոց. վարդապետություն սուրբ Գրիգորի, Բ 35, Ե 53, Զ 33:

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ—Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց տառերը, Զ 54:

ԷՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ—Խաչքարեր, ԺԲ 30:

ԺԶ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Որք զարդարեցին (Նոտա, դաշնավորումը՝ Պասկ արքեպիսկոպոս Թումայանի), Բ 11:

ԺԸ. ՊԱՏՄԱՒԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԲԱՆԱՄՅԱՆ ՊՐՈՖ. Ա. Գ.—Էջմիածնի 1678 թ. գաղտնի ժողովը, Է 36:

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ—Ցղնայի ճարտարապետական հուշարձանները, Է 47:

ԲԵՐԲԵՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Կ. Պոլսի Պոլսիկ պատրիարքի նամակը հայոց Սահակ Պարթև կաթողիկոսին, Է 24:

ԳԱՆՈՒՍՏՅԱՆ ԸՆՈՐԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Աստվածաշնչական սուրբեր, Բ 15, Դ 27, Ե 7, Զ 15, Է 5, ԺԱ 49, ԺԲ 21:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՄՍԱՐ—Պետերբուրգ—Լենինգրադ, Գ 41:

ԳԱՐԲԻՆՅԱՆ ՄԵԼԻԲ ԴԵԼՈՆԴԻ—Հայոց եկեղեցու մեծ երախտավորը, Դ 42:

ԹԱԼԻՄԻՉՅԱՆ Ն.—Մովսես Խորենացին և հայ միև ու վաղ միջնադարյան երգարվեստը, Ե 25, Զ 44: —Դիտողություն Կոմիտաս վարդապետի «Պատարագին» վերաբերող մի թյուր կարծիքի մասին, ԺԲ 31:

ՀԱՆՈՐՅԱՆ ՀՐԱՎԱՐԴ—Վասպուրականի մանրանկարիչ Պասկ արևոյ, ԺԲ 39:

ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ—Սուրբ Եփրեմ Խորեն Ասորի, Ա 46, Բ 25: —Սուրբ Եփիմիան հայրապետ Կիարացի, Դ 33: —Սուրբ Ռեթեոս Աթենացի, սուրբ Դիոնիսիոս Արխապագացի և սուրբ Մեղրեստոս հայրապետ Հոռմի, Ե 15: —Սուրբ Երանոս կամ Իրենոս եպիսկոպոս Լիոնի, Զ 23: —Առաքելական հայրեր, Է 13:

ԴԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՅԱՆ—Հայ արվեստի երախտավորը. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Ե 34: ՄԵԼԻԲ-ՕԼԱՆՉԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ—Հուշաթերթիկներ իմ «Հուշամատյանից», Ե 49:

ՄԿՐՏՅԱՆ ԸՆԼԵ—Ծուշիի պատմական հուշարձանները, Գ 50:

ՅՈՒՆ ՍԱՎԱՆ ԱՆՈՒՆ—Բուխարեստի հայկական եկեղեցին, Ա 56:

ՆՇԽԱՐՈՒՆ ՈՐՈՇԻՆԻԱՅԻ հայկական թարգմանություններից (Հրատարակությունը՝ Եզնիկ վարդապետ Պետրոսյանի և Հայկազուն արևոյ Նազարյանի), Բ 21:

ՊԱՏՐԻԿ ԱՌԱՔԵԼ—Ենթադրությունից դեպի հավանականը, Գ 48:

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ ՎԻԿՏՈՐ ՄԱՆՅԱՆԻ—Հայրենական մշակույթի պաշտպան հայ կանայք, Է 52: —Գնթոնիները՝ եկեղեցաշինարար, ԺԲ 45:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Հ.—Ցակորայ Սրճեցոյ «Վարք արքունի Դանիելի Գալաշացոյ», Գ 22:

ԺԷ. ԿՆԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տ. Մյուտոն արևոյ Գրվեցյան, Ա 40:

Տ. Առաքել արևոյ Գալաշյան, Ա 41:

Տ. Ստեփանոս արևոյ Չազալյան, ԺԲ 15:

Վաստակաշատ ճարտարապետը (Դոկու., պրոֆ. Վարազդատ Հարությունյանի ձեռնդրած 70-ամյակի առթիվ), ԺԲ 49:

ԺԸ. ԳՐԱՍՈՍՈՒԹՅՈՒՆ—ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Բ 59, Դ 60, Զ 63, Է 58, ԺԲ 54:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Ծնորձք արքեպիսկոպոս
Գալուստյան, Համաքրիստոնեական սուրբեր, Իս-
թանպուլ, 1978, 233 էջ (Գրախոսություն), Գ. 3:

ԱՐՏԱԿ ՔԷՆ, ՍԻՄՈՆՅԱՆ—Պատմության համար.
Եկեղեցականի մը կենսի հանգրուանները: Գրեց
Ս. Ա. (Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան), 1968,
տպարան Տօնիկեան, Պէյրուս, 272 էջ (Գրախո-
սություն), Գ. 18:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՅԱԶՅԱՆ—Վրացական
քույր եկեղեցու մոր պարբերականի հրատարակու-
թյունը, ԺԲ 27:


ԺԹ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ


Հանգիստ տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանի,
Բ. 63:

Հանգիստ արժանապատիվ տ. Գրիգոր ավագ քա-
հանա Իլիսազյանի, Գ. 63:

Մահ երվանդ Հյուսիսյանի, Դ. 58:

Հանգիստ տ. Միքայել ավագ քահանա Միքայելյա-
նի, Է. 63:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեռագրերի փոխանակում Նորին Սրբություն Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի և Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի միջև	
Նորին Սրբություն Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի հետագիրը Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Ա-ին . . .	3
Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հետագիրը Նորին Սրբություն Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապին . . .	4
Վեհափառ Հայրապետի նամակը՝ ուղղված Հայկազյան վարժարանի տնօրենությանը՝ դպրոցի հաստատման և գործունեության վաթսուհինյակի առիթով	5
Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի «Ժողովրդավարության և բարեկամություն»-ը, արտասանված սուրբ Էջմիածնի Մայր տաճարում .	6
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՔԱՋՅԱՆ—Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովի նախաջրհանք Մայր Աթոռ ս. Էջմիածնում	8
Քառանյակային ձեռնադրություն	15
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ—Եկեղեցական քնն. լուրեր	17
ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՂՈՒՍՅԱՆ—Առավանջական սուրբեր	21
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՔԱՋՅԱՆ—Վրացական քույր եկեղեցու մոր պարբերականի հրատարակությունը	27
ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ—Խաչքարեր	30
Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ—Դիտողություն Կոմիտաս վարդապետի «Պատարագին» վերաբերող մի թուր կարծիքի մասին	31
ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ—Վասպուրականի մանրանկարիչ Պասկ արևուս	39
ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Գնթունիները՝ եկեղեցաշինարար	45
Վաստակաշատ ճարտարապետը	49
Էկումենիկ հանդիպում ժնկում	51
Սովետական Միության մեջ գտնվող եկեղեցիների պատվիրակության հանդիպումը Արևմտյան Բալթիկի Էկումենիկ խորհրդի և Ավետարանական եկեղեցու կենտրոնի հետ	51
ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸՆԴԱՐՅԱՆ—«Վարդավառի 4» խորհրդակցական ժողովը	53
Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոր ստացված նեոագրերի	54
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1979 թվականի ընթացքում տպագրված նյութերի	59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 23.11.1979 թ.: Ստորագրված է տպագրության 15.1.1980 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₂, պատվեր 987

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.

